ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ

ԵրևանիՄ. Հերացուանվան

պետականբժշկականհամալսարանի

ռեկտոր _____ Մ.Զ. Նարիմանյան

«29» մարտի 2013թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Կորյունիփ. 2, 0025, Երևան, Հայաստան

Երևան 2013

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոն
Սամվել Ավետիսյան	Հանձնաժողովի նախագահ, ԵՊԲՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր
Լարիսա Ավետիսյան	ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար, պրոֆեսոր
Գրիգելդա Նավասարդյան	ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
Մարինա Բալասանյան	ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Կոնստանտին Ենկոյան	ԵՊԲՀ կենսաքիմիայի ամբիոնի պրոֆեսոր
Բագրատ Ենոքյան	ԵՊԲՀ դեղագիտության ֆակուլտետի դեկան, դոցենտ
Արամ Բայկով	ԵՊԲՀ ուսումնամեթոդական վարչության կրթական ծրագրերի բաժնի պետ, դոցենտ
Մելիք Սողոմոնյան	ԵՊԲՀ իրավաբանական բաժնի պետ
Արամ Հայրապետյան	ԵՊԲՀ կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավարի տեղակալ
Դավիթ Ղազարյան	ԵՊԲՀ պրակտիկայի բաժնի պետ

Բովանդակություն

Չափանիշ 1
Առաքելությունը և նպատակները.....4

Չափանիշ 2
ՄՈՒՀ-ի կառավարումն ու վարչարարությունը.....18

Չափանիշ 3
Մասնագիտության կրթական ծրագրերը.....32

Չափանիշ 4
Ուսանողները.....43

Չափանիշ 5
Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.....58

Չափանիշ 6
Հետազոտությունը և զարգացումը.....69

Չափանիշ 7
Ենթակառուցվածքը և ռեսուրսները.....79

Չափանիշ 8
Հասարակական պատասխանատվություն 92

Չափանիշ 9
Արտաքին կապերը եվ միջազգայնացումը.....99

Չափանիշ 10
Որակի ներքին ապահովման համակարգը 109

ՉԱՓԱՆԻՇ 1

Առաքելությունը և նպատակները

ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Հավակնությունները *պայմանավորվել են հաշվետու ժամանակահատվածում ԵՊԲՀ–ի որդեգրած առաքելությամբ և ռազմավարական ծրագրով (տե՛ս2006-2010 ռազմավարական ծրագիր, 6-27 էջեր, 2011-2015 ռազմավարական ծրագիր 4-6 էջեր) և նպատակաուղղված են եղել՝*

- ապահովելու բժշկական բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի կայացումը բոլոր մասնագիտություններով (“Բուժական գործ”, “Ստոմատոլոգիա”, “Դեղագիտություն”, “Հանրային առողջություն”) ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) համապատասխան,
- առաջատար լինել բժշկական բարձրագույն, հետդիպլոմային (կլինիկական օրդինատուրա) և շարունակական կրթության բնագավառում,
- ապահովելու ակադեմիական աշխատակազմի ցկյանս կատարելագործումը,
- օժանդակելու գիտելիքահենք համակարգի կառուցմանը առաջնահերթ այն ոլորտներում, որոնք սահմանված են ԵՊԲՀ-ի քաղաքականությամբ,
- նպաստելու բարձրագույն և հետդիպլոմային կրթության, ինչպես նաև հետազոտական գործունեության միջազգայնացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊԲՀ վարած քաղաքականության ու ծավալած գործունեության ուղղությունները հենվել են երկու գործիքակազմի քարտեզագրման վրա: Դրանք են՝

ա) բարձրագույն բժշկական կրթության սահմանված պահանջին համապատասխան որակի ապահովման Եվրոպական ցանցի (ENQA) բաղադրիչների գործարկում

բ) գլոբալիզացիայի ներկա մթնոլորտում ԱՀԿ-ի կանոնադրությունից բխող բժշկական բարձրագույն կրթության չափանիշների մշակում:

Ելնելով ԱՀԿ «առողջություն» հասկացության սահմանումից՝ համալսարանի 2006-2011թթ ռազմավարական ծրագրում առաջնահերթությունների մեջ ընդգծվել են ոչ միայն բուժական գործունեության կատարելագործման նորարարացման արդյունավետության բարձրացման, այլև մարդու (պերսոնալիզացված բժշկություն) սոցիալ հոգեբանական վիճակի բարվոքացման հիմնադրույթները: Այս կոնտեքստում կարևորվել են ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրման գործընթացը, ինչպես նաև հանրային առողջության ֆակուլտետի ստեղծումը:

Սույն ինքնավերլուծության նպատակը համալսարանի գործունեության համակողմանի գնահատումն է, որի չափորոշիչները պետք է բովանդակեն ԲՈՒՀ-ի նպատակները և զարգացման հեռանկարները՝ ելնելով շրջանավարտների և գործատուների շահերից: Նշված կոնտեքստում տարբեր օղակներում պարբերաբար անցենկացվել (ում) հարցումներ, ներկայացվել զեկույցներ, վերլուծություններ ուսանողի կողմից դասախոսի գործունեության որակի, դասընթացի և քննության կազմակերպման որակի գնահատման նպատակով, պարզաբանվել է ուսանողների և արտաքին շահակիցների բավարարվածության մակարդակը ուսուցումից, վերլուծվել է շրջանավարտների կարծիքը աշխատանքի անցնելու պատրաստվածության մակարդակի վերաբերյալ: Ելնելով ռազմավարական երկարաժամկետ ծրագրից կազմվում է գիտական խորհրդի տարեկան օրակարգը, որտեղ քննարկվող հարցերի արդյունքում ընդունվում են որոշումներ, որոնց կատարման ընթացքը պարբերաբար ստուգվում և զեկուցվում է գիտական խորհրդին՝ համապատասխան ստորաբաժանումների կողմից:

Հիմք ընդունելով տարեկան գնահատման արդյունքը՝ յուրաքանչյուր օղակ մշակում է իր գործունեության զարգացման հետագա պլանները և առաջացած խնդիրների լուծման հիմնական գործողությունները:

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ԵՊԲՀ-ն որդեգրել է առողջապահության համակարգի որակյալ մասնագետների ուսուցման և կատարելագործման, ինչպես նաև հետազոտությունների բարելավման առաքելություն (2011-2015թ ռազմավարական ծրագիր, էջ 4): Վերոնշյալի իրագործումն ապահովելու նպատակով համալսարանը մի շարք բարեփոխումներ է կատարել կրթության, գիտական հետազոտությունների և բուժսպասարկման ասպարեզներում՝ ուղղված դրանց զարգացմանը, միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը և ռազմավարական ծրագրին համահունչ դարձնելու միտման ապահովմանը: Այդ բարեփոխումները նախատեսում են ակադեմիական ծրագրերի և դասավանդման մեթոդների արդիականացում, ուսանողական փոխանակային ծրագրերի մշակում և իրականացում, գնահատման համակարգի, միջանկյալ և վերջնական քննությունների կազմակերպման ձևերի մշտադիտարկման միջոցով՝ բարեփոխում, համալսարանի կրթական, գիտական և վարչական, ինչպես նաև համալսարանական կլինիկաների բժշկական անձնակազմի ընդհանուր ներուժի հզորացում (2006-2010 ռազմավարականծրագիր, էջ 7): Ռազմավարությունը նախատեսում է միջազգային համագործակցության ընդլայնում և միջազգայնացում: Բարեփոխումների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով պլանավորվել է կրթական շինությունների, համալսարանական կլինիկաների և այլ օժանդակ միջոցների վերակառուցում և վերազինում:

2006թ-ին ընդունված <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն ԵՊԲՀ-ում հաստատվեց բարձրագույն կրթության երկաստիճան համակարգ: 2006թ.-ին առաջին ուսանողներն ընդունվեցին համալսարանի չորս ֆակուլտետների (ընդհանուր բժշկություն, ստոմատոլոգիա, դեղագիտություն, ռազմական բժշկություն) բակալավրիատ (աղյուսակ 1): 2010թ-ին ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետի ուսանողները՝ ստացան համապատասխանաբար ստոմատոլոգիայի և դեղագիտության բակալավրի աստիճաններ: 2011թ.-ին բակալավրիատն ավարտեցին ընդհանուր և ռազմական բժշկության ֆակուլտետների առաջին շրջանավարտները (աղյուսակ 2), որոնց շնորհվեց բժշկագիտության բակալավրի աստիճան (տե՛ս դիպլոմների նմուշներն ու հավելվածները):

Եվրոպական բարձրագույն կրթության զարգացումներին ընդառաջ ՀՀ

Կառավարությունը 2011թ-ին վավերացրեց ՈԱՇ-ը, որը նախանշում է կրթության ութ մակարդակ: ՈԱՇ-ի կողմից սահմանված որակի ներքին ապահովման համակարգի պահանջների հիման վրա՝ ԵՊԲՀ-ի ուսումնամեթոդական հանձնաժողովները ներկայումս իրականացնում են վերլուծություն՝ կրթական ծրագրերը կատարելագործելու և ՈԱՇ-ի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Օտարերկրացի ուսանողների համար չի իրականացվել անցում երկաստիճան կրթական մոդելի, քանի որ մեր ՄՈՒՀ-ում ուսուցանող օտարերկրյա ուսանողների բնակության երկրները երկաստիճան կրթական մոդելի չեն անցել և այդ երկրներում բակալավրի պահանջարկ չկա: Վերջիններիս կրթությունն իրականացվում է չընդմիջվող մոդելով (ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողներինը վեցամյա մոդելով, ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների ուսանողներինը՝ հինգամյա):

Ելնելով §Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին¦ ՀՀ օրենքից, բժշկության ոլորտում երկաստիճան համակարգի անցման հիմքում դրվեց հետևյալ փիլիսոփայությունը. կրթական ծրագրերը վերաբաշխել այնպես, որ բակալավրիատի շրջանավարտները կարողանան լրացնել առողջապահական համակարգի նախաբժշկական ծառայությունը ավելի բարձրորակ (այլ որակավորում ունեցող (օրինակ բժիշկի օգնական) կադրերով (տե՛ս գիտական խորհրդի որոշումը): Ուսուցումը կազմակերպելու համար վերանայվեցին առարկայական ծրագրերը՝ օգտագործելով հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացիայի էլեմենտներ (տե՛ս ցիկլային մեթոդական հանձնաժողովների որոշումները):

Համապատասխան մասնագիտությամբ բակալավրի աստիճանը տրվել է շրջանավարտներին ՈԱՇ-ի պահանջներից և մասնագիտական որակավորման պետական կրթական չափորոշիչներից բխող մասնագիտական կրթական ծրագրերում հիշատակված գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների ստուգման արդյունքում (տե՛ս մասնագիտական որակավորումների պետական կրթական չափորոշիչները, առարկայական ծրագրերն ու պլանները, մասնագիտական գրականությունը, թեստերը, իրավիճակային խնդիրները):

Բակալավրի որակավորում ստացած շրջանավարտներն առանց լրացուցիչ քննության շարունակել են ուսուցումը մագիստրատուրայում (տե՛ս աղյուսակ 3), որի

ավարտին նրանց շնորհվել է համապատասխան որակավորմամբ մասնագիտություններով մագիստրոսի աստիճաններ (տե՛ս դիպլոմների նմուշներն ու հավելվածները)։ Ուսանողների գերակշիռ մասի մագիստրոսական ծրագրում ընդգրկումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ աշխատաշուկան և առողջապահության համակարգը, ինպես նաև բակալավրի աստիճան ունեցող բուժաշխատողների պահանջարկը դեռևս հստակ ձևավորված չեն։

Հարկ է նշել, որ բժշկական կրթության որակավորումների համար ՈԱԾ-ի կողմից սահմանված բակալավրի և մագիստրոսի աստիճանների բնութագրերը վերանայման կարիք ունեն, քանզի ՈԱԾ-ում ձևակերպված մագիստրոսական աստիճանի ակադեմիական բնութագրիչներն ավելի շատ համապատասխանում են հետբուհական կրթական մոդելին (բժշկական կրթության մեջ կլինիկական օրդինատուրային), մինչդեռ մագիստրոսական աստիճանը, բժշկական համալսարանում ներկայումս կիրառվող կրթության համակարգի մոդելի համաձայն, ձեռք է բերվում բարձրագույն կրթության առաջին աստիճանի ավարտին։

Նոր կրթական ծրագրերի և ուսուցման վերջնարդյունքների գնահատման համար անհրաժեշտ են հետագա ուսումնասիրություններ, որոնց նպատակը մի կողմից Բոլոնիայի գործընթացի շրջանակում ուսումնական ծրագրերի և ուսումնառության շրջանների ավելի համեմատելի և համադրելի դարձնելն է, մյուս կողմից վերջնարդյունքները շուկայի պահանջներին համապատասխանեցնելու գերխնդրի լուծման ուղիների մշակումը։ Դրանք պետք է նաև գնահատեն վերջնարդյունքների համապատասխանությունը շուկայի պահանջներին, որի արդյունքում հնարավոր կլինի վերացնել հայտնաբերված բացթողումները՝ հիմքեր ստեղծելով նոր կրթական ծրագրերի մշակման համար։

Աղյուսակ 1.

Ընդունելությունն ըստ ֆակուլտետների (տեղացի ուսանողներ)

Ակադեմիական տարի / ֆակուլտետ	2006-07	2007-08	2008-09	2009-10	2010-11	2011-12*
Ընդհանուր բժշկություն	358	428	442	577	560	111
Ստոմատոլոգիա	220	149	175	165	225	46
Դեղագիտություն	104	108	159	95	110	10
Ռազմական բժշկություն	33	34	-	-	-	29

**10-ամյա դպրոցական կրթական մոդելը 12-ամյայի վերափոխման արդյունքում 2011-2012թ շրջանավարտներ չկային, ուստի բակալավրիատ ընդունված ուսանողների սահմանափակ քանակը պայմանավորված էր բանակից վերադարձած և նախկին տարիներում չընդունված դիմորդների թվով:*

Աղյուսակ 2.

Բակալավրիատ ավարտած ուսանողների քանակն ըստ ֆակուլտետների (տեղացի ուսանողներ)

Ակադեմիական տարի / ֆակուլտետ	2010-11	2011-12
Ընդհանուր բժշկություն	-	304
Ստոմատոլոգիա	129	137
Դեղագիտություն	50	47
Ռազմական բժշկություն	-	33

Աղյուսակ 3.

Մագիստրատուրա ընդունված ուսանողների քանակն ըստ ֆակուլտետների (տեղացի ուսանողներ)

Ակադեմիա կան տարի / ֆակուլտետ	2010-11	2011-12
Ընդհանուր բժշկություն	-	292
Ստոմատոլոգիա	124	130
Դեղագիտություն	46	38
Ռազմական բժշկություն	-	39

2011 թ.-ից ԵՊԲՀ-ում գործող ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական և ռազմաբժշկական ֆակուլտետներից բացի, հիմնադրվեց և սկսեց գործել հանրային առողջության ֆակուլտետը: Ընդգծենք, որ 2004թ.-ին ԵՊԲՀ բժշկականխարգելման (սանիտարահիգիենիկ) ֆակուլտետի լուծարումից հետո մինչև 2011թ. ընկած ժամանակահատվածում ԵՊԲՀ հետբուհական կրթության ֆակուլտե-տում սանիտարահիգիենիկ ոլորտի բժշկի որակավորում են ստացել 17 մարդ (միջինում տարեկան 2 հոգի), այն դեպքում, երբ նշված ֆակուլտետի շրջա-նավարտների թիվը մինչև 2004թ. տարեկան միջինը 50 էր: Մյուս կողմից 2002-2010թթ. կատարված գիտական հետազոտությունների արդյունքում վերհանվեցին հիգիենիկ և հակահամաճարակային բնագավառի մի շարք խնդիրներ,որոնց լուծման համար հատուկ մասնագիտական կրթության կարիք առաջացավ և որոնցից, օրինակ, մեկի լուծմանն էր ուղղված ՀՀ հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մասնագետների ընդգրկումը հատուկ մասնագիտական վերապատրաստման դասընթացներում (տե՛ս Ա. Վանյանի գիտական աշխատանքը): Դեռևս 2002թ. ՀՀ կառավարության սոցիալական հատվածի բարեփոխումներին համահունչ տեսչության համակարգող մարմնի կողմից անցկացվեցին կառուցվածքային և

բաղադրիչային փոոխություններ: Նշված բարեփոխումների նպատակներից էր համապատասխան դասընթացների միջոցով վերապատրաստել մասնագետներին և վերջիններիս տեղավորել նոր ձևավորված աշխատանքային միջավայր: Սակայն այդ բարեփոխումներն էական արդյունքներ չարձանագրեցին և սանիտարահիգիենիկ բնագավառում մասնագետների մագիստրոսական մակարդակում քանակական և որակական բացը լրացնելու լավագույն ճանապարհը "Հանրային առողջության" ֆակուլտետի ստեղծումն էր, ինչն էլ գործարկվեց 2011 թվականից: Պետք է նշել, որ "Հանրային առողջության" ֆակուլտետի բացումը միտված է լրացնելու նաև հանրային առողջության ոլորտում արհեստավարժ առողջապահության կառավարիչներ և կազմակերպիչներ, ինչպես նաև հանրային առողջությանն առնչվող խնդիրներ վերհանող, հետազոտող, վերլուծող և համապատասխան միջոցառումներ կազմակերպող մասնագետների պատրաստելուն:

2006 թ-ից սկսած՝ կրթական ցիկլի բոլոր ծրագրերը վերանայվել են համապատասխան հանձնաժողովներում և հաստատվելեն ռեկտորի կողմից: Նշենք, որ բակալավրի համակարգի ծրագրերի մշակումը (կատարելագործումը) ավարտվել է 2011թ-ին (այժմ դրանք կրկին վերանայվում են՝պայմանավորված ՈԱՇ-ի նոր պահանջներով), մինչդեռ մագիստրոսական ծրագրերի կատարելագործումը դեռ ընթացքի մեջ է: Ի տարբերություն բակալավրիատի, որտեղ գործնական հմտություններ/տեսական գիտելիքներ տոկոսային հարաբերությունը 30/70% է, մագիստրատուրայի ծրագրերում այն կազմում է համապատասխանաբար 70/30% (տե՛ս ակադեմիական ծրագրերն ու ուսումնական պլանները):

2007-2012թթ.ընթացքում բակալավրիատում և մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպելու նպատակով համալսարանը երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն տպագրել է 105 դասագիրք և ուսումնամեթոդական ձեռնարկ (տե՛ս համալսարանի գիտխորհրդում ռեկտորի հաշվետվությունը 03.03.2011թ., արձանագրություն թիվ 2):

Հաշվետու ժամանակահատվածում գիտամանկավարժական ներուժի շարունակական զարգացմանը, բարձրագույն բժշկական, դեղագիտական և հետբուհական կրթությանը, ինչպես նաև հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստել են հետևյալ գործոնները.

ա) կնքվել են տարածաշրջանային և միջազգային միջբուհական 27 համաձայնագրեր և պայմանագրեր,

բ) համալսարանի աշխատակիցներն անցել են 128 մասնագիտական վերապատրաստումներ, մասնակցել են 736 միջազգային սեմինարների, կոնֆերանսների և ֆորումների,

գ) արտերկրներից հրավիրված առաջատար մասնագետները ներկայացրել և վարել են շուրջ 56 դասախոսություններ և սեմինարներ, որոնցից երկուսը 2004թ. Նոբելյան մրցանակակիր Ահարոն Չեխանովերի կողմից,

դ) էլեկտրոնային ծառայությունների միջոցով (Hinari, UpToDate, Armenia LibGuide, Консультант Студента, *ռուսերեն լեզվով*) ուսանողների և բուհի աշխատողների համար հնարավորություն է ստեղծվել մուտք ունենալ 17.000 անուն գրականության բանկ,

ե) համալսարանը կազմակերպել է 21 միջազգային կոնֆերանս և սիմպոզիում,

զ) համալսարանում հիմնադրվել է երկու գիտա-ուսումնամեթոդական ամսագիր,

է) 2007թ. ստեղծվել է երիտասարդ գիտնականների խորհուրդ,

(ա-իցէ կետերի հիմնավորումը տես համալսարանի գիտխորհրդում ներկայացված ռեկտորի հաշվետվությունը, 03.03.2011թ., արձանագրություն թիվ 2 և համապատասխան փաստաթղթերը):

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում համալսարանում գործել են դասախոսի վերապատրաստման կուրսեր՝ շարունակական կրթության կտրվածքով, մասնագետների վերապատրաստում ազգային ինստիտուտում, ինչպես նաև արտասահմանում, որոնք սակայն համակարգված, հստակ պլանավորված չեն եղել: Ներկայումս շարունակական կրթության վարչության և որակի կենտրոնի կողմից մշակվում են քայլեր, որոնք կամփոփվեն և կներկայացվեն քննարկման ս.թ. մայիսին կայանալիք գիտական խորհրդի նիստին: Համալսարանի միջազգայնացմանը նպաստող բնութագրական ցուցանիշ է օտարերկրացի ուսանողների աճող թվաքանակը: Ըստ ԵՊԲՀ ուսումնամեթոդական վարչության տվյալների նախադիպլոմային մակարդակում բուհում ուսանում են 2128 օտարերկրացի ուսանող, որը կազմում է համալսարանի բոլոր ուսանողների 33,4%-ը:

Միաժամանակ, 155 օտարերկրացի ուսանող ընդգրկված են հետբուհական կրթության տարբեր օղակներում՝ ինտերնատուրայում, օրդինատուրայում, գիտա-հետազոտական ծրագրերում: Ուշադրության արժանի է այն փաստը, որ բարձրագույն և հետբուհական ուսուցման համակարգերում ուսանողների ընդգրկման աստիճանը կրկնակի անգամ տարբերվում է: Ներկայումս այս տարբերությամբ պայմանավորված հնարավոր անցանկալի ելքերը ուսումնասիրվում են համալսարանի համապատասխան կառույցների կողմից:

2011թ. ՀՀ կառավարության 18.08.2011թ. N 1193–Ն որոշման համաձայն «Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետբուհական կրթական բաղադրիչը ինտեգրվեց ԵՊԲՀ-ին, որի արդյունքում համալսարանի ամբիոնների կազմում ընգրկվեցին նոր փորձառու և անվանի մասնագետներ, մեծացավ համալսարանի կրթական բազայի կարգավիճակ ունեցող կլինիկաների թիվը (տե՛ս ՀՀ վարչապետին ուղղված միավորման վերաբերյալ ԵՊԲՀ-ի զեկուցագիրը և ՀՀ կառավարության N 1193–Ն հրամանը): Եկած մասնագետները հիմնականում դասավանդում են մագիստարատուրայում և օրդինատուրայում, որտեղ առարկայական ծրագրերի 70%-ը պատկանում է գործնական հմտությունների բաղադրիչին: Նշենք նաև, որ միավորված կլինիկաներն այժմ ծառայում են որպես համալսարանական բազաներ:

Միավորման այս գործընթացի դրական և բացասական հետևանքները մշտադիտարկվում ու վերլուծվում են, և, իհարկե, դեռ վաղ է վերջնական գնահատել վերամիավորման գործընթացի արդյունքները:

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը նպատակներն և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Առաքելության, ռազմավարության, նպատակների և խնդիրների զարգացումն ապահովվում է բուհի վարչակազմի, արտաքին ու ներքին շահակիցների սերտ համագործակցության միջոցով: Հաշվի առնելով համալսարանի բոլոր ստորաբաժանումների (կրթական, գիտական, կլինիկական) վերջին հինգ տարիների փորձը՝ համալսարանի հաջորդ 5 տարիների ռազմավարական ծրագիրը մշակվում և ձևավորվում է՝ այն նախապես քննարկելով համապատասխան խորհուրդներում և հանձ-

նաժողովների նիստերում: Համալսարանի ղեկավարությունը՝ ռեկտորի գլխավորությամբ, համադրում է բոլոր նախագծերը և ձևակերպում վերջնական տարբերակը: Ռեկտորը ռազմավարական ծրագիրը ներկայացնում է համալսարանի կառավարման և գիտական խորհրդների քննարկմանը և հաստատմանը: Ուշագրավ է, որ թե՛ ներքին և թե՛ արտաքին շահակիցներն ընդգրկված են վերոնշյալ խորհուրդներում (վարչակազմ, ամբիոնի վարիչներ, պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ, կլինիկական անձնակազմ, առողջապահական համակարգի և կառավարության ներկայացուցիչներ, պատգամավորներ և այլն): Որպես կանոն ուսանողության ներկայացուցիչներն ընդգրկված են համալսարանի բոլոր հանձնաժողովներում ու խորհուրդներում: Համաձայն ՀՀ կառավարության և համալսարանի կանոնակարգերի, համալսարանի գիտական, կառավարման և ֆակուլտետային խորհուրդներում նրանց հատկացված է մանդատների 25%-ը: Հիմնական թերությունը համալսարանի ներքին գործընթացներին արտաքին շահակիցների չհամակարգված, չափելի ցուցանիշներով չամրապնդված ներգրավվածությունն է: Համալսարանը ներկայումս մշակում է իր առաքելության ու ռազմավարության զարգացմանը, ներքին և արտաքին շահակիցների կարիքների արտահայտմանն ուղղված նոր մեխանիզմներ՝ շահակիցների առավել ընդգրկուն և արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու համար:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքները գնահատվում են համալսարանական հետևյալ խորհուրդների և հանձնաժողովների միջոցով, որոնք աշխատում են ըստ մշակված մեխանիզմների և ընթացակարգերի.

1. Համալսարանի կառավարման և գիտական խորհուրդները գործում են ըստ հաստատված կանոնակարգերի, որի համաձայն յուրաքանչյուր տարի համալսարանի ռեկտորը և պրոռեկտորները հաշվետվություն են տալիս մեկ տարվա գործունեության վերաբերյալ, որը գնահատվում է գիտական խորհրդի անդամների բաց

քվեարկությամբ, տրվում են համապատասխան ստորաբաժանման գործունեությանն ուղղած ցուցումներ, որոնց հիման վրա մշակվում են միջոցառումների պլան (տե՛ս խորհուրդների կանոնակարգը, ռեկտորի և պրոռեկտորի հաշվետվությունները, գիտական խորհրդի որոշումները)։

2. Համալսարանում գործող ստորաբաժանումները (ամբիոններ, կենտրոնական և ցիկլային-մեթոդական հանձնաժողովներ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ, դեկանատներ, գիտակորդինացիոն խորհուրդ, փորձագիտական հանձնաժողովներ, էթիկայի կոմիտե, ուսանողական խորհրդարան, ուսանողական դեկանատներ) մասնակցում են ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների հաստատման, գնահատման, ինչպես նաև համալսարանի գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներին։ Վերը նշված գրեթե բոլոր օղակներում ուսանողների մասնակցությունը կազմում է 25% (տե՛ս նշված բոլոր հանձնաժողովների կարգերը, ընթացակարգերը, պլանները, հաշվետվությունները, արձանագրությունները)։ Չնայած դրան՝ համալսարանի առաքելության և նպատակների գնահատման համակարգված ընթացակարգային մոտեցում դեռևս առկա չէ, սակայն համապատասխան զարգացումներն ընթացքի մեջ են։

3. Ուսանողների գիտելիքների վերջնարդյունքների գնահատումն իրականացվում է ավարտական, պետական եռափուլ քննական մոդելի միջոցով (ՀՀ ԿԳ նախարարի N1197-Ն 31.10.2011 որոշման պետական քննությունների անցկացման կարգի և քննական հանձնաժողովների հաստատման վերաբերյալ, ԵՊԲՀ ռեկտորի հրամանի հավելված)։

Գիտելիքների վերջնական գնահատումն իրականացվում է պետական հանձնաժողովի կողմից, որի նախագահը նշանակվում է հանրապետության ճանաչված, համալսարանում չաշխատող մասնագետներից (տե՛ս պետական քննությունների կազմակերպման, անցկացման կարգը և ընթացակարգը, իսկ մանրամասները չափանիշ 3-ում)։ Քննությունների ավարտից հետո հանձնաժողովը վերլուծական հաշվետվությամբ հանդես է գալիս համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդում (տե՛ս ֆակուլտետային խորհուրդներում ավարտական որակավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները)։

Առաջին փուլում ստուգվում են ուսանողի գործնական հմտությունները և

կարողությունները: Երկրորդ փուլում համակարգչային թեստային քննության միջոցով ստուգվում են ուսանողների տեսական գիտելիքները: Երրորդ փուլում բանավոր հարցման և իրավիճակային խնդիրների միջոցով ստուգվում են ուսանող-ների կլինիկական մտածողությունը, իրավիճակում կողմնորոշվելու ունակությունը և գիտելիքներն օգտագործելու հմտությունը: Միայն "Հանրային առողջության" ֆակուլտետում գիտելիքների գնահատումը կատարվում է թեստային քննության և մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով:

Համալսարանում 2011 թվականից գործող Որակի գնահատման և ապահովման կենտրոնն անց է կացնում պարբերական հարցումներ՝ ուղղված համալսարանական տարբեր ստորաբաժանումների գործունեության գնահատմանը և վերլուծությանը (տե՛ս կենտրոնի ռազմավարական ծրագիրը և համալսարանական կայքում կենտ-րոնի էջը, իսկ մանրամասները չափանիշ 10-ում):

Լավագույն փորձի օրինակներ

1. Համալսարանն իր գործունեությունը ծավալել է համաձայն §Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին¦ ՀՀ օրենքի և ներդրել ու իրականացրել է բժշկական երկաստիճան կրթության համակարգը:

2. Բարձրորակ բուժսպասարկում ապահովելու նպատակով շարունակվում է համալսարանական կլինիկաների հարմարավետության և նյութատեխնիկական հագեցվածության շարունակական բարելավումը:

3. Կլինիկաների և դրանց հագեցվածության արդիականացմանն ուղղված բարեփոխումները, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի վերապատ-րաստումները, ինչպես նաև գրականության և ուսումնական նյութերի պարբերական կատարելագործումը հանգեցրել է օտարերկրյա ուսանողների թվի զգալի աճի:

4. Դասախոսների շարունակական կրթության բարելավմանը նպաստել են ար-տասահմանից հրավիրված բազմաթիվ ճանաչված մասնագետների՝ այդ թվում Նոբելյան մրցանակակրի կողմից անցկացված սեմինարները, դասախոսությունները և կլինիկական փորձի փոխանակումները, ինչպես նաև մեծաթիվ միջազգային կոնֆերանսների կազմակերպումը:

5. Կրթական համակարգի բարելավմանը նպաստել է նաև երեք լեզուներով ուսումնամեթոդական մեծաթիվ գրականության տպագրումը:
6. Երեք հիմնական ֆակուլտետներում (ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական) ուսուցման բոլոր մակարդակներում ակադեմիական ծրագրերը կիրարկման մեջ են նաև օտար լեզուներով (անգլերեն և ռուսերեն):

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Համալսարանն ակտիվորեն չի մասնակցել “Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին” ՀՀ օրենքում երկաստիճան համակարգի ընդունման ժամանակ բժշկական կրթության բնագավառում դրա կիրառման և նպատակահարմարության հարցի քննարկմանը:
2. Համալսարանի առաքելության և ռազմավարական ծրագրի կազմման և դրա գնահատման գործընթացներում բավարար չէ արտաքին շահակիցների ընդգրկվածությունը:
3. Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրման և որոշումների կայացման մեջ ակտիվ չէ ներքին շահառուների մոտիվացված ընդգրկվածությունը:
4. Բակալավրիատի, մագիստրատուրայի և կլինիկական օրդինատուրայի ծրագրերի ակադեմիական բնութագրիչների կազմման ժամանակ ԵՊԲՀ-ի, ՀՀ Կրթության և գիտության, ինչպես նաև Առողջապահության նախարարությունների միջև առկա է ոչ լիարժեք համագործակցություն:
5. Հետբուհական և շարունակական կրթության բնագավառում բացակայում է մրցակցային ընտրության հնարավորությունը:

Չ Ա Փ Ա Ն Ի Շ 2

ՄՈՒՀ-ի կառավարումն ու վարչարարությունը

ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Հավակնությունները: *ԵՊԲՀ-ն հավակնում է իրականացնել.*

- *Համալսարանի կառավարման կառուցվածքի օպտիմալացում՝ ռազմավարական և ընթացիկ ծրագրերի, կառավարման գործընթացների արդյունավետ իրականացման համար:*
- *Համալսարանի խորհրդի և կառավարման մյուս մարմինների ներդաշնակ գործունեության և լիազորությունների տարանջատման ապահովումը, որոշումների ընդունման և կատարման հստակ համակարգի ձևավորումը:*
- *Համալսարանի կառավարման բոլոր մակարդակների իրավական բազայի բարելավումը և հետագա զարգացումը:*
- *Համալսարանական կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնումը:*
- *Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման, ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացում մեթոդական աջակցության տեղեկատվական-վերլուծական կառույցի ձևավորումը(տե՞ս ԵՊԲՀ 2006-2010 ռազմավարական ծրագիր, նպատակ 6, էջ 20-21, կցվում է):*

Չափորոշիչ ա.Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Համալսարանում որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթացն ապահովվում է ԵՊԲՀ կառավարման համակարգի միջոցով:

Համալսարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է ի դեմս ՀՀ Կառավարության: ՀՀ Կրթության և գիտության նախարարությունն իրականացնում է վերահսկողություն Համալսարանի գործունեության նկատմամբ:

«Համալսարանի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապե-տության օրենսդրությանը և ԵՊԲՀ կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության

սկզբունքների զուգակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ» (տե՞ս ԵՊԲՀ Կանոնադրությունը, ընդունված ՀՀ կառավարության կողմից 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1716-Ն որոշմամբ, կցվում է):

Խորհրդն ունի 32 անդամ: Այն ձևավորվում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և լիազոր մարմնի 8-ական ներկայացուցիչներից:

Խորհուրդն իր կազմից (բացառությամբ ուսանողության ներկայացուցիչների) ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել բուհի հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս):

Խորհուրդը մշակում ու հաստատում է ռեկտորի ընտրության կանոնակարգը և կազմակերպում ռեկտորի ընտրությունը:

Խորհուրդը ռեկտորի ներկայացմամբ՝

- հաստատում է համալսարանի զարգացման, ինչպես նաև միջազգային համագործակցության գլխավոր ուղությունները,
- քննարկում է համալսարանի տարեկան գործունեության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունը և որոշումկայացնումհաստատմանվերաբերյալ,
- քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն նայլն:

Համալսարանի գիտական խորհուրդը ռեկտորի նախագահությամբ գործող ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող ու կարգավորող կառավարման մարմին է: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Համալսարանի գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 80-ը, ուսանողները կազմում են խորհրդի առնվազն 25 տոկոսը, մեծամասնություն են կազմում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Ի պաշտոնե առաջադրվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50 տոկոսը: Գիտական խորհրդի մյուս անդամներն ընտրվում են համալսարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների կողմից՝ համաձայն գիտական խորհրդի կանոնակարգի(տե՛ս ԵՊԲՀ Գիտական խորհրդի կանոնակարգը, ընդունվելէ 25.05.2011թվականինթիվ 03

նիստիորոշմամբ, հաստատվելէԵՊԲՀռեկտորի 07.06.2011 թվականիթիվ 50-Միրամանով, կցվումէ):

Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Համալսարանի գիտական խորհուրդը՝

ա) հաստատում է իր կանոնակարգը,

բ) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ՝ համալսարանում կատարվող արդիական և գործնական նշանակություն ունեցող գիտահետազոտական ու գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին,

գ) իրականացնում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորների ընտրությունը,

դ) սահմանված կարգով շնորհում է դոցենտի և պրոֆեսորի կոչումներ,

ե) նոր մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Օրինակ՝ 2011 թվականին Համալսարանի նախաձեռնությամբ և ՀՀ Գիտության և կրթության նախարարության թույլտվությամ բստեղծվեց նոր մագիստրոսական կրթական ծրագիր՝ “Հանրային առողջություն”: Նոր ծրագրի ստեղծման եմ իրականացման հետ կապված, կատարվել է փոփոխություն նաև կառավարման համակարգում՝ ստեղծվել է նոր կառուցվածքային միավոր՝ Հանրային առողջության ֆակուլտետ:

Համալսարանի ընթացիկ ղեկավարումն իր իրավասության սահմաններում և ԵՊԲՀ կանոնադրությանը համապատասխան իրականացնում է ռեկտորը, որն ընտրվում է 5 տարի ժամկետով, ոչ ավել, քան 2 անգամ անընդմեջ:

Ռեկտորի ընտրությունները կատարվում են բաց մրցույթով՝ համալսարանի խորհրդում գաղտնի քվեարկությամբ, խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ռեկտորը ձևավորում է իրեն կից խորհրդակցական մարմին՝ ռեկտորատ, որը խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում կանոնակարգի համաձայն և իր լիազորությունների սահմաններում քննարկում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցեր:

Համալսարանի ռեկտորը՝

ա) ղեկավարում է համալսարանի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը, առանց լիազորագրի հանդես է գալիս համալսարանի անունից, ներկայացնում նրա շահերը,

բ) համակարգումէ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,

գ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում տարեկան հաշվետվություն,

դ) ապահովում է համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը,

ե) սույն կանոնադրությանը համապատասխան՝ աշխատանքային պայմանագրեր է կնքում սահմանված կարգով ընտրված դեկանների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ,

զ) արձակում է հրամաններ ուսանողների ընդունելության, նրանց նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու վերաբերյալ,

է) նշանակում և պաշտոնից ազատում է համալսարանի պրոռեկտորներին, համալսարանի կենտրոնական ապարատի ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտներն ու իրավասությունները (տե՛ս համալսարանի կառուցվածքը, կցվում է):

Համալսարանի առանցքային ստորաբաժանումներից է ֆակուլտետը: Ֆակուլտետը համալսարանի ուսումնագիտական ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը ձևավորվում է ըստ մասնագիտական ուղղության կամ գործունեության բնույթի: Ֆակուլտետի կազմում գործում են ամբիոններ և այլ ուսումնագիտական ստորաբաժանումներ (տե՛ս ԵՊԲՀ ֆակուլտետի կանոնակարգը, ընդունվել է ԵՊԲՀ գիտական խորհրդի 15.04.2009-ի թիվ 15 նիստի որոշմամաբ, հաստատվել է ԵՊԲՀ ռեկտորի 24.04.2009-ի 24Մ-2 հրամանով):

Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը: Ֆակուլտետի խորհուրդը կազմավորվում է մինչև 5 տարի ժամկետով՝ ֆակուլտետի ընդհանուր ժողովում և հաստատվում համալսարանի գիտական խորհրդում: Ֆակուլտետի խորհրդի անդամների առնվազն 25 տոկոսը ուսանողներ են:

Համաձայն համալսարանի ռազմավարական ծրագրի և առաքելության՝ ԵՊԲՀ-ում կառավարման իրավական բազաների ապահովման նպատակով ստեղծվում և նորացվում են իրավական բազմաթիվ փաստաթղթեր (տե՛ս “Բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին” ԵՊԲՀռեկտորիհրամանը, 30 մարտի 2012 թ. թիվ 42-Մ-2, “Ակադեմիական պարտքերը կրկնելու, վերահանձնելու և լրացվող դասերի ժամանակացույցի մասին” ԵՊԲՀ ռեկտորի հրամանը, 02 օգոստոսի 2012 թ. թիվ 108-ՈՒՍ, “Դասախոսների ընտրության ընթացակարգը”, ընդունվել է ԵՊԲՀ Գիտական խորհրդի 28.12.2011 թվականի թիվ 4 նիստի որոշմամբ, “Մագիստրատուրայի կանոնակարգը”, ընդունվել է ԵՊԲՀ ռեկտորատի 18.06.2012 թվականի թիվ 16 նիստի որոշմամբ, հաստատվել՝ ԵՊԲՀ ռեկտորի 18.06.2012 թվականի թիվ 68-Մ հրամանով):

Համալսարանիկառավարումն իրականացվում է ինչպես “վերևից ներքև”, այնպես էլ “ներքևից վերև” սկզբունքներով, այդ երկու գործընթացների զուգակցմամբ: Թե ինչ ընթացակարգով կկատարվի որևէ որոշման ընդունումը կամ իրականացումը, կախված է քննարկվող հարցի բնույթից: Կան հարցեր, որոնք բարձրացվում են դասախոսական անձնակազմի, ուսանողների, արտաքին շահակիցների կողմից քննարկումը և որոշումների ընդունումը կատարվում է ներքևից վերև սկզբունքով հետևյալ շղթայով. Ամբիոնական նիստ-ցիկլային և կենտրոնական մեթոդական հանձնաժողովներ-ֆակուլտետային խորհուրդ-գիտական խորհուրդ: Փոփոխությունները, որոնք իրականացվում են հանրապետության կրթության ոլորտում կատարվող համակարգային փոփոխությունների շրջանակում, իրականցվում են “վերևից ներքև” սկզբունքով:

ԵՊԲՀ-ի կառավարման համակարգում ձևավորվել է կոլեգիալ միջավայր և համագործակցության մշակույթ, հիմնված համալսարանի ավանդույթների վրա: Որոշումները կայացվում են կանոնակարգված գործընթացի համաձայն, սակայն չկան կառավարման էթիկայի առանձին սահմանված կանոններ:

ԵՊԲՀ-ն ունի կրթական, գիտական, առողջապահական և այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ:

2010-2011 ուս տարվա տվյալներով ԵՊԲՀ դասավանդող հիմնական հաստիքային անձնակազմը 557 է, նրանցից գիտությունների դոկտորներ են 64-ը, գիտությունների թեկնածուներ են 237-ը, պրոֆեսորի կոչում ունեն 44-ը, դոցենտի՝ 108-ը: Համատեղությամբ դասավանդողներ են 105-ը, ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 205 է (տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացված Ձև 3-գմ, տարեկան պետական վիճակագրական հաշվետվությունները, 2010-11 թթ.):

2011-2012 ուս տարվա տվյալներով ԵՊԲՀ դասավանդող հիմնական հաստիքային անձնակազմը 1114 է, նրանցից գիտությունների դոկտորներեն 173-ը, գիտությունների թեկնածուներ են 517-ը, պրոֆեսորի կոչում ունեն 107-ը, դոցենտի 201-ը: Համատեղությամբ դասավանդողներ են 340-ը, ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 298 է (տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացված Ձև 3-գմ, տարեկան պետական վիճակագրական հաշվետվությունները, 2011-12 թթ.):

Մեկ տարվա ընթացքում նման աննախադեպ կադրային աճը պայմանավորված է ՀՀ Կառավարություն 2011 օգոստոսի 18-ի թիվ 1193-Նորոշմամբ՝ ԵՊԲՀ-ի և ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի կրթական բաղադրիչի միավորմամբ:

ԵՊԲՀ-ումդասախոս/ուսանող հարաբերությունը մոտավորապես կազմում է 1/5 և համալսարանի փորձը ցույց է տալիս, որ այն բավարար է կրթական ծրագրերի իրականացման համար: Սակայն ճշգրիտ հաշվարկներ չկան ներկա պայմաններում կրթական ծրագերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ հարաբերության վերաբերյալ:

Համաձայն ԵՊԲՀ ռազմավարական ծրագրի (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 ռազմավարական ծրագիրը, նպատակ 3, էջ 15-16) համալսարանում միջոցառումներ են իրականացվում որակյալ կադրային ներուժի զարգացման նպատակով. համալսարանում վերականգվել է դասախոսների մասնագիտական վերապատրաստման բաժինը (տե՛ս Ուսումնամեթոդական վարչության կանոնակարգը, ընդունվել է ԵՊԲՀ Գիտական խորհրդի 26.09.2012 թվականի թիվ 02 նիստի որոշմամբ, հաստատվել է ԵՊԲՀ ռեկտորի 03.10.2012 թվականի թիվ 95-Մ-1 հրամանով):

ԵՊԲՀ-ն կրթական ու առողջապահականծրագրերի իրականացման համար ունի որոշակի նյութական և ֆինանսականռեսուրսներ (տե՛ս Տեղեկանքը՝ 01.01.2012,

համալսարանի հիմնական միջոցների վերաբերյալ, ԵՊԲՀ ՊՈԱԿ-ի 2012թ. Նախահաշիվը, Համալսարանի բյուջեն, 2010-2012թթ. Ֆինանսական հաշվետվությունները):

2010 թվականի բյուջեյի կատարողականը կազմելէ 98%, 2011 թվականինը՝ 99.4% (տե՛սՀամալսարանի բյուջեն, 2010-2012թթ. Ֆինանսական հաշվետվություններ): Սակայն չեն գործում առկա ծավալով կրթական, առողջապահական և այլ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսների հաշվարկի հստակ մեխանիզմներ: Անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկը և վերաբաշխումը կատարվում է ըստ տվյալ պահի հրամայականի և պահանջի: Համալսարանը կրթական և առողջապահական ծրագրերի բարելավման համար ռեսուրսներով համալրման զգալի կարիք ունի :

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

Դասախոսների և ուսանողների մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը, առաջին հերթին, ապահովվում է համալսարանի կառավարման բոլոր մարմիններում նրանց ներկայացվածությամբ . Համալսարանի խորհուրդ (25-ական տոկոս դասախոսներ և ուսանողներ), Համալսարանի գիտական խորհուրդ (25 տոկոս ուսանողներ, ավելի քան 50 տոկոս դասախոսներ), ֆակուլտետային խորհուրդներ (25 տոկոս ուսանողներ, 75 տոկոս դասախոսներ): Կենտրոնական և ցիկլային մեթոդական հանձնաժողովներում նույնպես կան ուսանողության ներկայացուցիչներ: Ուսանողական խորհրդարանի նախագահը ռեկտորատի և գիտական խորհրդի անդամ է:

Համալսարանի ուսանողության ինքնակառավարման(տե՛սչափանիշ 4) և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհրդարաննէ, որն ապահովում է համալսարանի կառավարման մարմիններում ուսանողների մասնակցությունը, քննարկման ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր (տե՛սԵՊԲՀ Կանոնադրությունը, ընդունված է Հայաստանի Հանրապետության Կառավա-

ության 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 1716-Ն որոշմամբ, ԵՊԲՀ Ուսանողական խորհրդարանի կանոնադրությունը, վեբ-կայքը):

Համալսարանի և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերը բաց են, որոնց կարող են մասնակցել դասախոսներից, ուսանողներից յուրաքանչյուրը և կարծիք հայտնել քննարկվող հարցերի վերաբերյալ:

Համալսարանի ղեկավարությունը պարբերաբար հանդիպումներ է ունենում ուսանողների, դասախոսական անձնակազմի հետ, լսում նրանց կարծիքները և առաջարկությունները, որոնք հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ:

Դասախոսները և ուսանողները իրենց կարծիքները կարող են հրապարակել համալսարանի պարբերականում՝«Ապագա Բժիշկ»-ում: Ուսանողներն ունեն նաև իրենց առանձին պարբերականը՝ «Մեդիկուս»-ը:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Կարճաժամկետ պլանավորումը կարողէ իրականացվել է ռեկտորատի կողմից՝ մեկ շաբաթյա ժամանակահատվածի համար, Համալսարանի գիտական խորհրդի կողմից՝ մեկ ամսվա համար, ամբիոնական նիստերում՝ երկշաբաթյա ժամանակահատվածի համար:

Միջնաժամկետ (մեկ տարվա համար) պլանավորում կարողենիրականացնել համալսարանի կառավարման խորհրդը, համալսարանի գիտական և ֆակուլտետային խորհուրդները:

Երկարաժամկետ պլանավորման հիմք է հանդիսանում նորընտիր /վերընտրվող/ ռեկտորի կողմից համալսարանի խորհրդին ներկայացված հնգամյա պլանը:

Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումների կատարումն իրականացվում է Համալսարանի ստորաբաժանումների և ղեկավար օղակների կողմից՝ ռեկտորի ղեկավարությամբ:

Խորհուրդը քննարկում է համալսարանի տարեկան գործունեության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունը և հաստատում այն, քննարկում ու հաստատում է համալսարանի կառուցվածքը և դրանում կատարվող փոփոխությունները, քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն:

Համալսարանի գիտխորհրդի կողմից ընդունված կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորումների կատարման մշտադիտարկումն իրականացվում է ղեկավարության ներկայացուցչի (որպես կանոն ռեկտոր կամ պրոռեկտոր) կողմից (գիտխորհրդի որոշմամբ) (տե՛ս ԵՊԲՀ Գիտական խորհրդի 25.05.2011 թվականի թիվ 03 նիստի որոշումը, հաստատված ԵՊԲՀ ռեկտորի 07.06.2011 թվականի թիվ 50-Մ հրամանով):

Պլանավորումների կատարման մշտադիտարկումներ իրականացվում են նաև համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների և հանձնաժողովների կողմից:

Այդ մշտադիտարկումներն իրականացվում են տարբեր եղանակներով.

1.դասախոսությունների և գործնական պարապմունքների լսումներ,

2.դասախոսների մասնագիտական որակների/ հմտությունների/ ատեստացիաներ,

3.ամբիոնների, ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվություններ և դրանց վերլուծություն

4. արտաքին և ներքին շահակիցների հարցախույզների անցկացում և դրանց վերլուծություն

5. հանդիպումներ ֆոկուս խմբերի հետ:

Մշտադիտարկմանարդյունքներն օգտագործվումենգործընթացներիիրականացմանարդյունավետությունըբարձրացնել ունպլանավորմանբարելավմանհամար:

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

ԵՊԲՀ ղեկավարությունը, ստորաբաժանումների ղեկավարները, Ուսման որակի գնահատման և վերահսկման կենտրոնը պարբերաբար իրականացնում են համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն: Համաձայն համալսարանի ռազմավարական ծրագրի և առաքելության շարունակվում են Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման, ռազմավարական ծրագրի իրականացման մեթոդական աջակցության տեղեկատվական-վերլուծական կառույցի վերջնական կայացման գործընթացները, որի կարևորագույն փուլերից էր Ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոնի ստեղծումը:

ԵՊԲՀ ղեկավարությունը համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կատարում է հիմնվելով հետևյալ տվյալների վրա.

1. ռեկտորի, ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվություններ,
2. ուսանողների ակադեմիական առաջադիմության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ,
3. ստորաբաժանումների ստուգումների արդյունքներ,
4. արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումներ,
5. համալսարանի ղեկավարության (ռեկտոր, պրոռեկտոր) ամենօրյա հարցազրույցներ ուսանողների և դասախոսների հետ համալսարանի վեբ-կայքի միջոցով,
6. համալսարանի ղեկավարության (ռեկտոր, պրոռեկտոր) պարբերական հանդի-պումներ դասախոսական անձնակազմի, ուսանողների և արտաքին շահակիցների հետ, ոպեսկանոն՝ շաբաթըմեկանգամ:

Նշված եղանակով իրականացված հետազոտությունների վերլուծությունների հիման վրա էլ պլանավորվում են նոր բարեփոխումներ: Օրինակ՝ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նոր՝ մագիստրոսական ծրագրում գործնական աշխատանքների բաղադրիչի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ են նոր կլինիկական բազաներ, որը կարող է էապես բարելավել կրթության որակը: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա առաջարկներ կայացվեց ՀՀ վարչապետին ակադեմիկոս ‘’Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ” փակ

բաժնետիրական ընկերության հետբուհական կրթություն ապահովող բաղադրիչը միացնել ԵՊԲՀ-ինդաիրականացվեց2011 թվականին համաձայն ՀՀ կառավարության 18.08. 2011 թվ. N 1193 – Ն որոշման (տե՛ս ԵՊԲՀ-ի ՀՀ վարչապետին ուղղված վերը նշված երկու հաստատությունների հետդիպլոմային կրթական բաղադրիչների միացման տեղեկանք-հիմնավորումը և ՀՀ կառավարության թվ. N 1193 – Ն որոշումը):

Չափորոշիչ ե. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում (ամբիոններ, ֆակուլտետներ, վարչակազմ, ռեկտորատ, գիտական խորհուրդ) վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Նախատեսվող բարեփոխումները և գործընթացները նախ պլանավորվում են, այդ պլանները ներկայացվում են համալսարանի խորհրդին, գիտական խորհրդին, ֆակուլտետային խորհուրդներին և ամբիոններին: Այնուհետև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց իրավասությունների շրջանակում իրականացնում են պլանավորվածը: Դրանից հետո գնահատվում է կատարվածի արդյունավետությունը: Այդ գնահատումը կարող է կատարվել հատուկ ստեղծված հանձնաժողովների միջոցով, համալսարանի ստորաբաժանումների՝ Համալսարանի Ուսման որակի գնահատման և վերահսկման կենտրոնի միջոցով: Արդյունքների գնահատումը և վերլուծությունը հնարավորություն է տալիս մշակել գործողությունների ծրագիր գործընթացների բարելավման ուղղությամբ և հիմք է հանդիսանում նոր պլանավորումների (տե՛ս ամբիոնների աշխատանքային պլանները և տարեկան հաշվետվությունները):

Չափորոշիչ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ի Ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոնի միջոցով համալսարանում իրականացվում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն (տե՛ս չափանիշ 10): Մինչև ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոնի ստեղծումը՝ 2011թ, վերոնշյալ աշխատանքներն իրականացվում էին համալսարանի մեթոդական, բարեփոխումների և ինտեգրացիայի բաժինների կողմից:

Այդ տեղեկատվությունը հիմնավորվում է մի շարք տվյալների ուսումնասիրությամբ.

1. ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններ,
2. ուսանողների ակադեմիական առաջադիմության ամփոփում,
3. ստորաբաժանումների ստուգումների արդյունքներ,
4. ՀՀ կառավարության այն որոշումների ուսումնասիրում, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի վերաբերում են Համալսարանին,
5. արտաքին և ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցախույզների արդյունքների վերլուծություն,
6. ուսանողների, դասախոսների, արտաքին շահակիցների հետ Համալսարանի ղեկավարության հանդիպումների ժամանակ բարձրացված հարցերի վերլուծություն,
7. ռեկտորի՝հասարակայնությանհետկապերիբաժնիկողմիցՀամալսարանիգործունեությանըվերաբերողտպագիրեւէլեկտրոնայինմամուլումիրապարակումներիվերլուծություն:

Չափորոշիչ է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Համալսարանի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումների գնահատումները հաճախ կատարվում են ռեկտորիհասարակայնությանհետկապերիպատասխանատուիկողմից՝ Համալսարանիգործունեությանըվերաբերողտպագիրևէլեկտրոնայինմամուլումհրապարակումներիվերլուծությանմիջոցով: Սակայն գնահատումները կանոնակարգված չեն և չեն գործում հստակ և օբյեկտիվ մեխանիզմներ:

Լավագույն փորձի օրինակներ.

1. Համալսարանի կառուցվածքն ապահովում է անհրաժեշտպայմաններ՝ համալսարանի առաքելությունից բխող հավակնությունների իրականացմանհամար:
2. Համալսարանն ունի կառավարման մարմինների ներդաշնակ գործունեության և լիազորությունների տարանջատման համակարգ:
3. Համալսարանում կառավարման իրավական բազայի ապահովման նպատակով ստեղծվում և նորացվում են իրավական բազմաթիվ փաստաթղթեր:
4. Համալսարանի ֆինանսական պլանավորումը և կատարողականը համադրելի են :
5. Ապահովված է ուսանողների մասնակցությունը համալսարանական կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:
6. Համալսարանի ղեկավարության պարբերական հանդիպումները դասախոսական անձնակազմի, ուսանողների և արտաքին շահակիցների հետ, նաև համալսարանի վեբ-կայքի միջոցով նրանց հուզող հարցերին տեղեկանալը նպաստում է Համալսարանի գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների բարելավմանը:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ.

1. Համալսարանի նյութական և ֆինանսական ռեսուրսները ոչ միշտ են բավարար կրթական, գիտական և առողջական ծրագրերի լիարժեք իրականացման համար: Համալսարանի վարչակազմը ջանքեր է գործադրում՝ իրավիճակը բարելավելու ուղղությամբ:
2. Համալսարանում իրականացվող բարեփոխումները բավարար չափով համակարգված չեն:
3. Համալսարանի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին տեղեկատվության հրապարակումները կանոնակարգված չեն և գնահատման հստակ, օբյեկտիվ մեխանիզմներ չեն գործում:

ՉԱՓԱՆԻՇ 3

Մասնագիտությանկրթականծրագրերը

ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Հավակնությունները: *Համալսարանը ձգտում է իրականացնել «Բուժական գործի», «Ստոմատոլոգիայի», «Դեղագիտության» և «Հանրայինառողջության» բակալավրի և մագիստրոսի ՀՀ բարձրագույն կրթության պետական կրթական*

չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի ապահովումը և բարելավումը՝ հիմնված շնորհվող որակավորումների և ակնկալվող կրթական վերջնարդյունքների վրա, որոնք նաև կնպաստեն ուսանողների շարժունությանը և համալսարանի միջազգայնացմանը:

Չափորաշիչ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Կրթական ծրագրերի միջոցով իրականացվում է Համալսարանի առաքելությունը (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010 ռազմավարական ծրագիրը, էջ 6): Դրանք կազմում են հաստատության պլանավորման, ռեսուրսների բաշխման բաղկացուցիչ մաս (տե՛ս ԵՊԲՀ կանոնադրությունը, էջ 3, «Գլուխ 2, Իրավունքներ և պարտականություններ», ընդունված ՀՀ Կառավարության որոշմամբ, 15.03.2005թ., կցվում է):

Կրթական ծրագրերը ձևակերպված են ըստ ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների: Ուսումնառության վերջնարդյունքները ձևակերպված են համաձայն «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Դեղագիտություն», «Հանրայինառողջություն» բակալավրի և մագիստրոսի որակավորումներին առաջադրված ՀՀ Բարձրագույն կրթության Պետական կրթական չափորոշիչների, համապատասխանում են մասնագիտական որակավորումների պահանջներին, համահունչ են ԱՀԿ պահանջներին (տե՛ս ԵՊԲՀ ռազմավարական ծրագիրը, էջ 7, ՀՀ Բարձրագույն կրթության Պետական կրթական չափորոշիչները, հաստատված Կրթության և գիտության նախարարի կողմից 4.03.2010, «Ախտաբանություն և ախտաֆիզիոլոգիա», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա», «Թերապիա» առարկաների ուսումնական ծրագրերը և պլանները, հաստատված համալսարանի ռեկտորի կողմից):

Կրթական ծրագրերի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը (հաստատված ԵՊԲՀ ռեկտորի կողմից, 2006-2011թթ.) արտացոլում են տեսական

գիտելիքների և գործնական ունակությունների միջև առկա համակցությունը: Առարկայական ծրագրերը հանգամանորեն մշակվել են ԵՊԲՀ ամբիոններում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Քննարկմանը ակտիվորեն մասնակցել են ամբիոնների բոլոր դասախոսները: Այնուհետև այն քննարկվել և երաշխավորվել է ցիկլային և կենտրոնական մեթոդական հանձնաժողովներում, և հաստատվել ռեկտորի կողմից: Ուսումնական ծրագրերը հիմնված են հստակ ձևակերպված ուսումնառության վերջնարդյունքների վրա (տե՛ս վերը ներկայացված առարկաների ուսումնական ծրագրերը և պլանները):

Համաձայն Ուսանողների ակադեմիական շարժունության կարգի (տե՛ս Կրթության և գիտության նախարարի համապատասխան հրամանը), ուսանողների տեղափոխությունն իրականացվում է կրթական ծրագրերի (ուսումնական պլաններ և ծրագրեր) համապատասխանության հիման վրա: Միայն վերջին տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այլ բուհերից 15 ուսանողներ են տեղափոխվել մեր համալսարան (տե՛ս ԵՊԲՀ Ռեկտորի համապատասխան հրամանները):

Չափորոշիչ.ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Համալսարանը չունի ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտության հստակ ձևակերպված քաղաքականություն, սակայն ամբիոններում, ցիկլային մեթոդական հանձնաժողովներում քննարկվել և ընդունվել են առաջարկություններ դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների կիրառման վերաբերյալ (տե՛ս բժշկա-կենսաբանական ցիկլային մեթոդական հանձնաժողովի արձանագրությունը): Համալսարանում ավելի հաճախ են կիրառվում ինտերակտիվ, հեռահար, պրոբլեմային ուսուցման /problem based learning/ և փոքր խմբերում դասավանդման մեթոդները: Ավելի մեծ տեղ է հատկացվում ուսանողների ինքնուրույն և գործնական

աշխատանքներին: Ուսանողները սովորում և գնահատվում են ոչ միայն անհատական մասնակցության, այլ նաև թիմային աշխատանքների համար:

Ուսումնական պլանների և ծրագրերի ճիշտ ձևակերպման համար կենտրոնական և ցիկլային մեթոդական հանձնաժողովների կողմից մշակվել են համապատասխան մեթոդական ցուցումներ և հաստատվել ռեկտորի հրամանով (տե՛ս մեթոդականցուցումները):

Ուսուցման արդյունավետության բարձրացմանը և ուսանողակենտրոն մոտեցմանը նպաստում է նաև այն, որ ուսանողներն ընդգրկված են Ցիկլային և Կենտրոնական մեթոդական հանձնաժողովների կազմերում, ակտիվորեն մասնակցում են կրթական ծրագրերին առընչվող հարցերի քննարկմանը և ներկայացնում առաջարկություններ:

Դասավանդման արդյունավետ մեթոդների ընտրության հարցում որոշակի դեր են կատարում նաև ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացվող հարցախույզները:

Չափորոշիչ՝ ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ԵՊԲՀ ծրագրերն ապահովում են ուսանողների գիտելիքների անկողմնակալ, թափանցիկ գնահատումը, հիմված կիսամյակային և ավարտական քննությունների անցկացման կարգերի վրա:

Անկողմնակալ գնահատումն ապահովվում է հետևյալ եղանակներով.

- կիսամյակային քննություններն իրականացվում են գրավոր, թեստային քննության եղանակով (տե՛ս «Բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը»)
- քննական գործընթացի հսկումն ու մշտադիտարկումն իրականացվում է հեռահար եղանակով, տեսախցիկների համակարգի միջոցով: Անհրաժեշտության դեպքում իրականացվում է նաև քննությունների արդյունքների

բողոքարկում ուսանողների և նրանց շահերի պաշտպանի՝ ուսանողական խորհրդարանի ներկայացուցչի մասնակցությամբ, ինչը նպաստում է ակադեմիական ազնվությանը,

- որպես փորձարկվող նախագիծ՝ 1-ին կուրսի ուսանողների քննություններն անցկացվում համակարգչային եղանակով (տե՛ս ԵՊԲՀ Ռեկտորի թիվ 53 հրամանը Մ26.04.2011),
- ուսանողների ավարտական ատեստացիան իրականացվում է ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի կողմից, համաձայն կառավարության կողմից հաստատված կարգի (տե՛ս ՀՀ Կրթության և գիտության նախարարի թիվ 1197 հրամանը 31.102011.) և համալսարանական կարգերի և դրույթների (տե՛ս ԵՊԲՀ «Բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը»): Որպես օրենք, այդ հանձնաժողովում ընդգրկվում են ինչպես համալսարանի աշխատակիցները, այնպես էլ համալսարանում չաշխատող ՀՀ առաջատար մասնագետներ: Ամփոփիչ ավարտական քննությունների հանձնաժողովի նախագահը նունպես համալսարանի աշխատակից չէ: Ամփոփիչ ատեստացիան անց է կացվում 3 փուլերով՝ գործնական հմտությունների ատեստացիա, թեստային քննություն (համակարգչային եղանակով) և բանավոր քննություն,
- չնայած այն փաստին, որ բանավոր քննություններն անց են կացվում միայն ավարտական ատեստացիայի ժամանակ, համալսարանում սովորելու բոլոր տարիներին, գործնական պարապմունքների ժամանակ ուսանողները ցուցաբերում են ակտիվ մասնակցություն տեսական նյութի քննարկումներին և կատարում գործնական հմտությունների ձեռքբերմանն ուղված հանձնարարություններ: Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ 2012-2013 ուստարում մագիստրատուրայի 1-ին կուրսի քննությունները ևս կանցկացվեն բանավոր եղանակով (տե՛ս Համալսարանի գիտական խորհրդի որոշումը):

Ծրագրերի արդյունավետությունը, ուսանողների գնահատման անկողմնակալության և թափանցիկության հարցերը վերլուծվում են ֆակուլտետների դեկանների, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի

կողմից (տե՛ս վեբ-կայքը), քննարկվում և զեկուցվում են ֆակուլտետային և համալսարանի գիտական խորհուրդներում: Վերոհիշյալ հարցերն ընդգրկվում են նաև արտաքին և ներքին շահակիցների հետ քննարկումներում և հարցախույզներում: Այդ տվյալներն էլ վերլուծվում են ԵՊԲՀ Ուսման որակի գնահատման և վերահսկման կենտրոնի կողմից և ներկայացվում են համալսարանի վեբ-կայքում: Վերլուծության արդյունքների հիման վրա իրականացվում է ուսանողների գնահատման քաղաքականության և ընթացակարգերի բարելավում՝ միտված ակադեմիական ազնվության ապահովմանը:

Չափորոշիչ դ.ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթականծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը,միջազգայնացմանը:

- ԵՊԲՀ Կրթական ծրագրերը համահունչ են Ռուսաստանի և Եվրոմիության առաջատար բժշկական համալսարանների համապատասխան ծրագրերին: Կրթական ծրագրերի շրջանակներում բոլոր մոդուլները «չափվում են» կրեդիտներով, որն ապահովում է ուսանողների և՛ ներքին, և՛ միջազգային շարժունությունը (տե՛ս Գիտական խորհրդի որոշման թիվ 9 արձանագրություն, 28.06.2006, ԵՊԲՀ ռազմավարական ծրագիրը, էջ 24, նպատակ 9): Միայն 2011 ուստարում փոխանակային ծրագրով ԵՊԲՀ-ն ընդունել է ուսանողներ՝ Ուկրաինայից, Լիբանանից, Իրանից և ՀՀ այլ համալսարաններից: Տեղափոխումները կատարվում են համապատասխան կարգի համաձայն: Համաձայն այդ կարգի՝ տեղափոխման համար ընդունելի է ոչ ավելի քան 20 տոկոս ուսումնական ծրագրերի տարբերությունը (տե՛ս կարգը, հրամանները):
- Համալսարանի բակալավրիատի 1-ին կուրսի բոլոր կրթական ծրագրերի առարկայական ծրագրերը չեն տարբերվում միմյանցից, ինչը

հնարավորություն է տալիս ուսանողներին 1-ին կուրսի ավարտից հետո տեղափոխվել այլ ֆակուլտետ (տե՛ս I կուրսի առարկայական ծրագրերը):

- Բոլոր ուսումնական պլանները և ծրագրերը թարգմանված են անգլերեն և ռուսերեն: Կրթական ծրագրերը դասավանդվում են 3 լեզուներով. հայերեն (1920 թվականից), ռուսերեն (1939 թվականից) և անգլերեն (2000 թվականից) (տե՛ս վեբ-կայքը):
- Օտար լեզուների դասավանդումն ընդգրկված է բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններում (տե՛ս համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ուսումնական պլանները և ծրագրերը):
- Համալսարանի գրադարանում առկա է ժամանակակից մասնագիտական և գիտական գրականություն, այն կարելի ձեռք բերել նաև առցանց տարբերակով (տե՛ս վեբ-կայքը):
- Գործում են ուսանողների փոխանակային ծրագրեր տարածաշրջանային, եվրոպական, ամերիկյան, ասիական, աֆրիկյան երկրների բժշկական համալսարանների, կլինիկաների, ինպես նաև բժշկական, ստոմատոլոգիական և դեղագործական ասոցացիաների հետ (տե՛ս վեբ-կայքը):
- Համալսարանը վարում է քաղաքականություն, համաձայն որի նոր դասախոսների ընտրությունն իրականացվում է հաշվի առնելով նաև նրանց օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը: Համաձայն ԵՊԲՀ դասախոսների ընտրության ընթացակարգի (տե՛ս «Դասախոսների ընտրության ընթացակարգը», ընդունվել է ԵՊԲՀ Գիտական խորհրդի 28.12.2011 թվականի թիվ 4 նիստի որոշմամբ) թեկնածուները պարտավոր են հանձնել ռուսերեն և անգլերեն լեզուների իմացության քննություններ ԵՊԲՀ Օտար լեզուների ամբիոնում, կամ ներկայացնել իրավասու հաստատության կողմից տրված վկայական:
- Համալսարանը պայմաններ է ստեղծել դասախոսների անգլերեն լեզվի իմացության շարունակական կատարելագործման համար:
- Համալսարանի դասախոսական անձնակազմը առաջատար արտասահմանյան համալսարաններում և կլինիկաներում պարբերաբար մասնակցում է կոնգրեսների, կոնֆերանսների, սեմինարների, վարժանքների, ամառային

դպրոցների (տե՛ս Միջազգային կապերի գծով պրոռեկտորի տարեկան հաշվետվությունը):

- Համալսարանում գործում են դասախոսների հրավերքային դասընթացներ (տե՛ս վեբ-կայքը):
- Համալսարանը մասնակցում է կրթական ծրագրերի միջազգայնացմանը սատարող միջազգային ծրագրերին (DIUSAS, PIQA, TEMPUS , Erasmus-Mundus Programs, տե՛ս վեբ-կայքը):
- Համալսարանն իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների ուսուցում սկսած 1957 թվականից (հայեր՝ Սիրայից, Լիբանանից, Հորդանանից, Եթովպիայից, Իրանից, Իրաքից, Կիպրոսից, Բուլղարիայից և այլն): 1985 թվականից սկսած ռուսերեն լեզվով դասավանդվում են հնդիկները, իրանցիները, արաբները: 2000 թվականից դասա-վանդումն իրականացվում է նաև անգլերեն լեզվով: Առ այսօր ԵՊԲՀ-ն ավարտել են 657 անգլախոս և ավելի քան 2000 հայախոս և ռուսախոս օտարերկրյա քաղաքացիներ: Ներկայումս ԵՊԲՀ-ն ունի 741 օտարերկրյա ուսանողներ Հնդկաստանից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից, Իրանից, Իրաքից, Կանդայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Ղազախստանից, Վրաստանից, Բելառուսիայից, Մոլդովայից, Ուկրաինայից, Աբխազիայից, Մալդիվյան կղզիներից, Շրի Լանկայից, Մավրիկիայից (տե՛ս վեբ-կայքը):
- ԵՊԲՀ շրջանավարտները օտար երկրներում կարճ ժամանակահատվածում հանձնում են պահանջվող լիցենզիոն քննությունները (տե՛ս վեբ-կայքը):

Չափորոշիչ ե. ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ԵՊԲՀ քաղաքականությունն ուղղված է Կրթական ծրագրերի գնահատման արդյունավետության բարելավմանը (տե՛ս ԵՊԲՀ ռազմավարական ծրագիրը), որին նպաստում է Համալսարանի ղեկավարությունը (տե՛ս ֆակուլտետների դեկանների և ուսումնական գծով պրոռեկտորի զեկուցումները գիտական խորհրդի նիստերում,

վեբ-կայքը): 2011 թվականին համալսարանի որակի գնահատման և ապահովման բաժնի կողմից մշակվել է կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման ընթացակարգը(տե՛ս չափանիշ 10):

Համալսարանում կան համապատասխան ենթակառուցվածքներ կրթական ծրագրերի ստեղծման, գնահատման և բարելավման համար: Առկա են մեխանիզմներ և գործիքների շղթաներ (ամբիոնական նիստ - ցիկլային մեթոդական հանձնաժողով - կենտրոնական մեթոդական հանձնաժողով - Համալսարանի գիտական խորհուրդ), որոնք մշտադիտարկում և վերանայում են կրթական ծրագրերը (տե՛ս արձանագրությունները, ռեկտորի հրամանը): Դրանք հիմնավորվում են ուսանողների և այլ շահակիցների հարցախույզներով, տարբեր մասնագիտություններում կատարվող փոփոխություններով: Այդ նպատակով կիրառվում են հետևյալ գործիքները՝ հարցախույզ արտաքին և ներքին շահակիցների շրջանում (տե՛ս վեբ-կայքը), մասնագիտական և գիտական կոնֆերանսներ, (օրինակ 3-րդ Միջազգային բժշկական կոնգրեսը ԵՊԲՀ-ում, 7.07.2011, Պլաստիկ վերականգնողական և էսթետիկ վիրաբույժների հայկական ասոցիացիայի (AAPRAS) 3-րդ միջազգային համաժողովը նվիրված ԵՊԲՀ հիմնադրման 90 ամյակին, 2-30.06.2010 թ. և այլն), նախանշված կրթական նպատակների առումով ուսումնառության արդյունքների գնահատում:

Համալսարանի դասախոսական անձնակազմը ԵՊԲՀ գիտատեղեկատվական հանդեսում (ամսագրում) պարբերաբար հայտնում է իր կարծիքը կրթական ծրագրերի վերաբերյալ (տե՛ս ամսագրի համապատասխան համարները):

ԵՊԲՀ ուսանողական խորհուրդն ունի իր Ուսումնա-մեթոդական հանձնաժողովը (տե՛ս վեբ-կայքը), որի անդամներն ակտիվորեն մասնակցում են կրթական ծրագրերի արդյունավետության գնահատմանը: Ուսանողները մասնակցում են մեթոդական հանձնաժողովների աշխատանքներին, ֆակուլտետային և գիտական խորհուրդների կազմի 25 տոկոսը ուսանողներ են: Ուսանողական խորհրդարանն ունի անկախ ամսագիր՝ «Մեդիկուս», որտեղ ուսանողները տպագրում են հոդվածներ՝ կրթական ծրագրերի գնահատման վերաբերյալ (տե՛ս ամսագրի համարները), ինչպես նաև անկախ վեբ-կայք (տե՛ս վեբ-կայքը):

Հիմնվելով ուսումնառության արդյունքների գնահատման վրա, որոնք արտացոլվում են ֆակուլտետի դեկանի, ուսումնական աշխատանքների գծով

պրոռեկտորի, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի զեկույցներում, ֆակուլտետային գիտական խորհուրդները որոշումներ են ընդունում նախաձեռնելու վերափոխումներ կրթական ծրագրերում (ուսումնական ծրագրերի զարգացում, բարելավում): Նման պարբերական քննարկումների, դիտարկումների արդյունքում նոր առարկաներ կարող են ավելացվել կամ հանվել կրթական ծրագրերից: Օրինակ՝ դեղագիտական ֆակուլտետի ուսումնական պլանում կատարվել է «կլինիկական դեղագիտություն», «ֆարմակոկինետիկա» առարկաների ավելացում (տե՛ս ռեկտորի հրամանը):

Լավագույն փորձի օրինակներ

1. Առկա են համապատասխան ենթակառուցվածքներ՝ կրթական ծրագրերի ստեղծման, գնահատման և բարելավման համար:
2. Համալսարանի ղեկավարությունը նպաստում է Կրթական ծրագրերի զարգացմանը և բարելավմանը:
3. Դասախոսական անձնակազմը պատրաստակամ է անհրաժեշտ ջանքերը գործադրելու նոր գիտելիքներ և փորձ ձեռք բերելու համար:
4. Ուսանողներն ընդգրկված են կրթական ծրագրերի շարունակական գնահատման և բարելավման գործընթացում: Ուսանողական խորհուրդն ունի անկախ ամսագիր և անկախ վեբ-կայք, որտեղ նրանք տպագրում են հոդվածներ կրթական ծրագրերի վերաբերյալ:
5. Ծրագրերի գնահատումը և բարելավումը հիմնված է նաև համալսարանի շրջանավարտների արտասահմանյան երկրներում հանձնած լիցենզավորման քննությունների արդյունքների վրա:
6. Համալսարանն ունի հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով օտարերկրյա ուսանողների դասավանդման լավ փորձ:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Համալսարանը չունի ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտության հստակ ձևակերպված քաղաքականություն, սակայն ամբիոններում, ցիկլային մեթոդական հանձնաժողովներում քննարկվել և

ընդունվել են առաջարկություններ դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների կիրառման վերաբերյալ:

2. Ուսման վերջին 6 տարիների ընթացքում ուսանողների գիտելիքները գնահատվում են միայն թեստային հարցման եղանակով, բացառությամբ ավարտական քննության երրորդ փուլի: Սակայն համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ 2012-2013 ուստարում մագիստրատուրայի 1-ին կուրսի քննությունները ևս կանցկացվեն բանավոր եղանակով:
3. Կան բազմաթիվ բացթողումներ և թերություններ ուսումնառության արդյունքների, արտաքին և ներքին շահակիցների հարցախույզների արդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մշտադիտարկման և ռեֆորմների ընթացակարգերում (օրինակ կապը արտաքին շահակիցների հետ թույլ է): Սակայն ներկայումս ընդլայնվում են հարաբերությունները, կապերը համալսարանի և արտաքին շահակիցների միջև կոնֆերանսների, սեմինարների, հանդիպումների, հարցախույզների, պայմանագրերի միջոցով:
4. Արդյունավետ ուսուցմանը խոչընդոտող գործոն է գործնական պարապմունքների համար անհրաժեշտ ուսումնական լաբորատորիաների և սարքավորումների սակավությունը: Սակայնները կայումսիրականացվումէ լսարանների, լաբորատորիաների, կլինիկական բազաների ընդլայնում, վերանորոգում և կահավորում, դրանք ապահովվում են համապատասխան սարքավորումներով:

ՉԱՓԱՆԻՇ 4
Ուսանողները

ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Հավակնությունները: *Համալսարանը որդեգրել է մասնագիտական կրթության որակավորումների բնութագրի պահանջների կատարման համար անհրաժեշտ պայմանների ապահովման և ուսանողների գիտելիքների գնահատման որակավորման համակարգի կատարելագործման քաղաքականություն:*

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀՀ բուհերում, այդ թվում նաև մեր համալսարանում, ուսանողների ընտրությունը և ընդունելությունն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության «ՀՀ պետական և ոչ պետական բուհերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ» -ի (տե՛ս կարգը): Համաձայն այդ կարգի դիմորդը 3 մասնագիտական քննություններից՝ «ֆիզիկա», «քիմիա», «կենսաբանություն», իր ընտրությամբ՝ 2 առարկաներից միասնական կարգով հանձնում է քննություն և քննությունների գումարային արդյունքով մասնակցում հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպվող, ՀՀ կառավարության կողմից հատկացված անվճար և վճարովի տեղերի մրցույթին: Յուրաքանչյուր տարի համալսարանի անվճար համակարգ (պետության կողմից վճարվող) ընդունվող ուսանողների ընդհանուր թիվը միջինում կազմում է 95, իսկ վճարովի համակարգի ուսանողներինը՝ 490: Սակայնվերջին 5 տարիների ընթացքում որդեգրելով ընդունելության դյուրինացման քաղաքականությունը, համալսարանը ամեն տարի նախապես դիմում է Կրթության և գիտության նախարարություն՝ միջինը 150 լրացուցիչ դիմորդ համալսարան ընդունելու վերաբերյալ թույլատվություն ստանալու համար: Թույլատվության արդյունքում վերջին 5 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի համալսարան ընդունված ուսանողների ընդհանուր թիվը միջինում կազմել է 750:

Վերը թվարկած լրացուցիչ 150 ուսանողները (տղաները) բուհ են ընդունվում զինվորական ծառայությունից առանց տարկետման իրավունքի: Լրացուցիչ ընդունելության հիմքում դրված է հետևյալ քաղաքականությունը. Հնարավորություն տալ ընդունելության քննական շեմը հաղթահարած (դրական գնահատական ստացած) դիմորդին սովորել համլսարանում: Դյուրինացնելով ընդունելությունը և հետևաբար մեծացնելով առաջին կուրսեցիների թիվը, այնուամենայնիվ, բուհում չի ավելացել շրջանավարտների թիվը, որովհետև գրեթե 1,5 անգամ մեծացել է, հատկապես ցածր կուրսերում, քննաշրջաններն անհաջող հանձնած և համալսարանից դուրս մնացած ուսանողների թիվը (տե՛ս համալսարանի

ուսումնական վարչության հաշվետվությունները):

Բուհի կողմից որևէ վերլուծություն չի արվել պարզելու համար թե որքանով է բուհը «շահում» կամ «կորցնում» ուսանողների ընտրության վերը շարադրած պետական կարգի կիրառման դեպքում: Կարող ենք հավելել, որ այս դեպքում սահմանափակվում է դիմորդի մոտիվացիայի ստուգման հնարավորությունը: Սակայն ելնելով նրանից, որ առաջին կուրսում բոլոր ֆակուլտետներում (մասնագիտություններում) դասավանդման առարկաները և ծրագրերը նույնն են, ուսանողը հնարավորություն ունի 1 տարվա ընթացքում, ծանոթանալով բժշկության առաջին էլեմենտների հետ, անհրաժեշտության դեպքում ֆակուլտետի ղեկավարության հետ խորհրդակցելով փոխել մասնագիտությունը:

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է համաձայն «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ի, որտեղ ներկայացված է ընդունելության կազմակերպման կարգը, նախապատրաստական դասընթացների կազմակերպումը, ուսուցման կազմակերպման պայմանները, փաստաթղթերը ներկայացնելու և անձնական գործը վարելու կարգը (տե՛ս կարգը):

Ի տարբերություն տեղացի ուսանողների, օտարերկրյա քաղաքացիների ընտրության մեջ համալսարանի դերակատարումն ավելի մեծ է (օրինակ հնդիկ ուսանողների ընտրությունը կատարվում է համալսարանի համապատասխան հանձնաժողովի կողմից):

Չափորոշիչը.ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված ռազմավարական ծրագրում ամրագրված են հետևյալ դրույթները՝

ա. պարզել ուսանողների գոհունակությունը ուսուցումից: Մշակել գոհունակության գնահատման չափանիշներ՝ ուսուցման տարբեր բաղադրիչներինկատմամբ և ուսանողականխորհուրդներիակտիվմասնակցությամբ իրականացնել ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ:

բ. գնահատել լսարանային ֆոնդի առկա վիճակը, իրականացնել դրա փուլային վերակառուցումը, արդիականացումն ու հետագա ընդլայնումը՝ կրթական ծրագրերին և համակազմի զարգացման խնդիրներին համապատասխան,

գ. ուսումնասիրել համալսարանի ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակը՝ ըստ որակի ապահովման չափորոշիչների (տե՛ս համալսարանի 2006-2010թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 14, 17, 18):

Ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության նպատակով համալսարանում պարբերաբար իրականացվել են գործողություններ, որոնք նպաստել են ուսումնական պրոցեսի բարելավմանը և իրականացվող ընթացակարգերի որակի բարձրացմանը: Այսպես. յուրաքանչյուր կիսամյակ արտադրական խորհրդակցությունների շրջանակներում ուսանողների, դեկանների և ամբիոնների ներկայացուցիչների միջև կազմակերպվող հանդիպումների ընթացքում քննարկվում են ուսումնական պրոցեսի ընթացքում ուսանողների առջև ծառացած խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկները: Համալսարանի պաշտոնական կայքում մշտապես գործում է ուսանողների և ռեկտորի միջև կապն ապահովող ֆորում, որտեղ տեղադրված հարցերը, խնդիրներն ու առաջարկները քննարկվումնստանումենիրենցլուծումներըհամալսարանիկառավարմանտարբեր օղակներում (տես /http://www.ysmu.am/am/forum; http://www.ysmu.am/am/information-arm/ask-the-rector/ կայքը): Համալսարանի ռեկտորը նուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը ուսանողների ընդունելության օրերին լսումեն ուսանողների կարիքների ու խնդիրներիվերաբերյալհարցադրումներըևտալիսդրանցլուծումները:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումներիմիջոցովինարավորէլինում պարզել նրանցկարծիքը ուսումնական ռեսուրսներով ապահովվածության, դրանց արդյունավետության, գնահատման գործող համակարգերի նպատակահարմարության, ինչպեսնաև առաջարկվող գնահատման նոր մեթոդներին կրթական ծրագրերի ու դասավանդման արդյունավետության վերաբերյալ (տե՛ս հարցաթերթերը):

Չափորոշիչ գ.ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Բոլոր ամբիոններում գործում է դասախոսների հերթապահությունների գրաֆիկ, որի համաձայն ողջ կիսամյակի ընթացքում հերթապահ դասախոսը ուսանողների հետ խորհրդատվություն է անցկացնում՝ նրանց կողմից առաջադրված թեմաների ու հարցերի շուրջ:

Քննաշրջանից անմիջապես առաջ և դրա ընթացքում հստակ գործում է նախաքննական ամենօրյա խորհրդատվության գրաֆիկը: Վերոնշյալ գրաֆիկները փակցվում են ամբիոնների ցուցատախտակներին: Դեկանատների միջոցով ուսանողները խորհրդատվություն են ստանում նաև էլեկտիվ առարկաների ընտրության ժամանակ՝ երբ անհրաժեշտություն է առաջանում կլինիկական օրդինատուրա ընդունվելուց առաջ՝ նեղ մասնագիտական ընտրության համար ստանալ մագիստրատուրայում առաջարկվող 8 էլեկտիվ առարկաներից 4-ի ճիշտ ընտրության վերաբերյալ խորհուրդ:

Համալսարանում հաշվետու ժամանակահատվածում գործել են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվության բազմաթիվ ձևեր և կարգեր: Դրանցից մեկը «Ակադեմիական պարտքերի լրացման կարգն» է (տե՛ս կարգը): Համաձայն՝ այդ կարգի, ցածր առաջադիմությամբ ուսանողների համար (որոնք ունեն ակադեմիական պարտքեր) բոլոր ամբիոններում կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ, որոնց ուսանողները մասնակցում են իրենց ցանկությամբ ու նախաձեռնությամբ: Դասընթացը կազմակերպվում է դեկանի, ամբիոնի վարիչի և ուսանողի փոխհամաձայնությամբ: Սա ուսանողին հնարավորություն է տալիս դասընթացին հաճախելու իրեն հարմար ժամանակացույցով: Ամբիոններին հանձնարարվում է լրացուցիչ դասընթացները կազմակերպել բացառապես հմուտ ու փորձառու դասախոսների միջոցով: Ավելին, ուսանողն ինքն է ընտրում դասախոսին: Լրացուցիչ դասընթացը կազմակերպվում է շաբաթական 2 անգամ: Սույն կանոնակարգի համաձայն՝ լրացուցիչ դասընթացներին մասնակցելու իրավունքից կարող են օգտվել նաև այն ուսանողները, ովքեր տվյալ առարկայից արդեն ստացել են դրական գնահատական, սակայն գիտելիքների ամրապնդման և կատարելագործման

նպատակով ցանկություն են հայտնել կրկնել տվյալ առարկայի դասընթացը: Այս պարագայում ուսանողը կրկնում է դասընթացը, սակայն իրավունք չունի վերահանձնել քննությունը: Կազմակերպվող լրացուցիչ պարապմունքների ժամանակացույցը հաստատվում է ռեկտորի կողմից՝ նախքան տվյալ կիսամյակի սկիզբը (տե՛ս ժամանակացույցի մեկ օրինակ):

Համալսարանում գործում է նաև «Բաց թողնված դասերի լրացման կարգը» (տե՛ս կարգը): Սույն կարգի համաձայն՝ բացակայությունների դեպքում լրացուցիչ դասընթացներն անցկացվում են կիսամյակի ավարտից հետո՝ մինչև հաջորդ կիսամյակի սկիզբը, երբ դասախոսներն ու ուսանողները ծանրաբեռնված չեն ուսումնական պարապմունքներով: Բաց թողնված պարապմունքների լրացման ժամանակացույցը նույնպես հաստատվում է ռեկտորի կողմից նախքան կիսամյակի մեկնարկը:

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Բուհի բոլոր վարչական ստորաբաժանումներում գործում է վարչական աշխատակազմի տարբեր օղակներին դիմելու հստակ ժամանակացույց (տե՛ս ժամանակացույցի օրինակը), որը փակցված է ցուցատախտակներին: Դեկանատներում փոխդեկանները կցված են ֆակուլտետի կոնկրետ կուրսերին (ղեկավարում են այդ կուրսի աշխատանքները), որը դյուրինացնում է վարչակազմին ուսանողների դիմելու գործընթացը: Կիսամյակի ընթացքում, 1-2 անգամ, բոլոր կուրսերում դեկաններն ու փոխդեկանները կազմակերպում են կիսամյակային խորհրդակցություններ, որոնց մասնակցում են տվյալ կուրսում դասավանդվող բոլոր առարկաների ամբիոնների վարիչները, և/կամ ամբիոնի պատասխանատուները (տե՛ս դեկանատի աշխատանքային պլանը): Խորհրդակցությունների ընթացքում ուսանողներին ներկայացվում են ուսումնական գործընթացի հետ կապված նոր կանոնակարգերն ու ընթացակարգերը ինչպես նաև վարչակազմի ու ամբիոնների ներկայացուցիչները պատասխանում են ուսանողների հարցերին:

Կիսամյակի ընթացքում, 1-2 անգամ, բուհի ռեկտորը նույնպես հանդիպում է

ուսանողների հետ և պարզաբանումներ տալիս նրանց կողմից բարձրացված հարցերին: Լրատվական դաշտն ընդլայնելու և այն ուսանողներին առավելագույնս մատչելի դարձնելու նպատակով յուրաքանչյուր ֆակուլտետի ուսխորհրդի կազմում ստեղծվել է «Ուսանողական դեկանատ» կառույցը: Ուսանողական դեկանատի կազմում ընդգրկվում են կուրսերի, հոսքերի և խմբերի ավագները: Կուրսերի և հոսքերի ավագներն ընտրվում են սահմանված կանոնակարգով: Ուսանողական դեկանատի ակտիվը հաճախ հանդիպումներ է ունենում ուսանողների հետ, նրանց կողմից բարձրացված հարցերը ներկայացնում է բուհի վարչակազմին: Սա ապահովում է ոչ միայն հիմնախնդրի լուծման մեծ արագություն, այլև բարձր արդյունավետություն, քանզի, շատ հաճախ, ուսանողներն իրենց հուզող հարցերի վերաբերյալ ավելի անկաշկանդ ու անկեղծ են խոսում իրենց ընկերների հետ:

Չափորոշիչ ե. ԲՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Համալսարանն իր ռազմավարական ծրագրում հստակ կարևորում է ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների անհրաժեշտությունը, առաջ քաշելով որոշակի խնդիրներ՝ համակողմանի նպաստել ուսանողների կարիերայի նախապատրաստմանը, աջակցել նրանց աշխատատեղերի որոնման, մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ստեղծման հարցերում, ապահովել մագիստրատուրան ավարտած անձանց ինքնուրույն մուտքն աշխատաշուկա, համակողմանիորեն ուսումնասիրել գործատուների՝ համալսարանի շրջանավարտների մասնագիտական մակարդակի և կրթական ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գոհունակության աստիճանը՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների ծառայունակության բարձրացման նպատակով, զարգացնել պայմանագրային հարաբերությունները հայրենական և արտասահմանյան պատվիրատու կազմակերպությունների հետ և այլն (տե՛ս համալսարանի 2006-2010թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 10, 13, 16, 25):

Մինչև այսօր համալսարանում առկա չէ կարիերայի կենտրոն, սակայն այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ կատարվում են: Այսպես. շրջանավարտների կապն աշխատաշուկայի հետ ամրապնդելու նպատակով կազմակերպվում են

ավարտական կուրսի ուսանողների ամենամյա հանդիպումներ՝ ՀՀ տարբեր շրջանների խոշոր կլինիկաների գլխավոր բժիշկների և այդ շրջանների ղեկավարների հետ (տե՛ս դեկանատների աշխատանքային պլանը): Հանդիպումների ընթացքում ներկայացվում են տվյալ շրջանի բուժ. հիմնարկներում առկա թափուր տեղերը և շրջանավարտների կարիերային հեռանկարներն այդ շրջաններում: 2008-2011 թթ-ի անցկացված գիտական հետազոտության շրջանակներում գործատուների և շրջանավարտների հետ անցկացված հարցումները թույլ են տվել պարզելու կրթական ծրագրերի և ուսումնական պրոցեսում առկա այն խնդիրները, որոնք խոչնդոտում են ուսանողների ազատ մուտքն աշխատաշուկա: Աշխատանքի արդյունքների հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկներ (տե՛ս աշխատանքի արդյունքները և հոդվածները): Հաշվետու ժամանակաշրջանում գործարկվել է բժշկության ոլորտում թափուր աշխատատեղերին և մասնագետների աշխատանքային առաջարկներին նվիրված ինտերնետային ռեսուրս /doctors.job.am/, որը, ներկայումս վերակառուցման փուլում է:

Քանի որ համալսարանը նույնպես աշխատաշուկայի բաղկացուցիչ մաս է, համալսարանի պաշտոնական կայքում գործող էջը /ysmu.am/en/information/vacancies/, որտեղ նկարագրվում են տվյալ պահին համալսարանում առկա թափուր պաշտոնները, շրջանավարտի համար կարող է ծառայել որպես աշխատատեղի փնտրմանը նպաստող գործոն:

Համաձայն համալսարանի որդեգրած քաղաքականության, լավագույն շրջանավարտներին առաջարկվում են աշխատատեղեր՝ համալսարանական ամբիոններում և համալսարանական կլինիկաներում:

Հարկ է կարևորել նաև տարբեր կուրսերում, ամառային արձակուրդների ընթացքում, ուսանողների պրակտիկ պարապմունքները, երբ նրանք որպես բուժքրոջ օգնական, կամ բժշկի օգնական աշխատում են ՀՀ տարբեր կլինիկաներում: Սա նույնպես նպաստում է ուսանողի մասնագիտական կողմնորոշմանը:

Համալսարանը համագործակցելով մարզերի և բարեգործական կազմակերպությունների հետ, որոշակի ձևով լուծում է աշխատատեղերի հարցը: Այսպես, օրինակ, 2010թ-ին ստորագրվել է եռակողմ պայմանագիր Համալսարանի, Հայ օգնություն բարեգործական ֆոնդի և Լոռու մարզպետարանի միջև, համաձայն

որի համալսարանը կազմակերպում է կլինիկական օրդինատուրայի ուսուցումը, բարեգործական ֆոնդը ֆինանսավորում է այդ ուսուցումը, մարզպետարանը պարտավորվում է կլինիկական օրդինատորին ապահովել աշխատատեղով, իսկ օրդինատորն էլ իր հերթին պարտավորվում է առնվազն 3 տարի աշխատել տվյալ մարզում (տե՛ս պայմանագիրը):

Համալսարանը մասնակցում է «Tempus» և «Erasmus mundus» փոխանակային ծրագրերին, որոնցում առկա են կարիերային նպաստող էլեմենտներ:

Այնուամենայնիվ պետք է նշել որ մինչև այսօր համալսարանում բացակայում է կարիերային խորհրդատվության կենտրոնը, որը կհամակարգեր այս ոլորտում համալսարանի գործունեությունը: Բավարար չեն նաև աշխատաշուկայի ուսումնասիրությունները և վերջինիս ընդգրկվածությունը ուսումնական գործընթացներին:

2012թ-ին համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից անցկացված ուսումնասիերութոնների արդյունքում, համալսարանի ղեկավարությանն առաջարկվել է բացել կարիերայի կենտրոն, որը կնպաստի աշխատաշուկայում մրցունակության բարձրացման, համալսարանի և շրջանավարտների, ինչպես նաև համալսարանի և հանրապետության բուժկանխարգելման հաստատությունների միջև կապի ամրապնդմանը: Այսօր այս ուղղությամբ կատարվում են որոշակի քայլեր. ըստ մշակված կարգի հավաքագրվում են շրջանավարտների տվյալները, բանակցություններ են վարվում Երևան քաղաքի և ՀՀ շրջանների կլինիկաների ղեկավարների հետ, վերանորոգվում է doctors. jobs.am կայքը:

Չափորոշիչ զ. ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնների գերակշիռ մասի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված են որոշակի թվով (2-5) ուսանողներ, որոնք մասնակցելով այդ աշխատանքներին դառնում են համահեղինակներ՝տեղական և միջազգային հանդեսներում տպագրված հոդվածների (տե՛ս ամբիոնների գիտահետազոտական հաշվետվությունները): Ավելի

մեծ թվով (15-50) ուսանողներ մասնակցում են ամբիոնների գիտահետազոտական խմբակների աշխատանքներն և կատարում են հիմնականում ռեֆերատիվ բնույթի աշխատանքներ:

Ուսանողների կողմից կատարվող գիտական աշխատանքները կորդինացնում է Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ): Այն հիմնադրվել է 1947թ-ից և գործում է ըստ կանոնադրության (տե՛ս կանոնադրությունը): ՈԻԳԸ-ի աշխատանքները ղեկավարում է ընկերության նախագահը, որին աջակցում է համալսարանի գիտական գծով պրոռեկտորը: Վերջին 5 տարիներին ՈԻԳԸ-ն կազմակերպել է ամենամյա կոնֆերանսներ՝ նվիրված բժշկական նոր ուղղություններին՝ էներգոինֆորմացիոն բժշկությանը, ցողունային բջիջներին, նանո-տեխնոլոգիաներին և նանոբժշկությանը, որոնց յուրաքանչյուր տարի մասնակցել են ավելի քան 50 ուսանող:

Այդ կոնֆերանսների լավագույն աշխատանքները տպագրվել են համալսարանի «Բժշկություն, գիտություն և կրթություն» գիտա-տեղեկատվական հանդեսում (տե՛ս հանդեսի համարները):

2007-2012թթ ընթացքում ակտիվացել է նաև միջբուհական գիտական համագործակցությունը: ՈԻԳԸ-ն ակտիվ համագործակցում է հատկապես ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետների հետ: Միայն 2011-12թթ-ին կազմակերպվել են 2 միջբուհական կոնֆերանս՝ նվիրված էվթանազիայի, տրանս-պլանտոլոգիայի հիմնախնդիրներին (տե՛ս ծրագրերը): ՈԻԳԸ-ն անդամակցում է ԱՊՀ երկրների բժշկական բուհերի երիտասարդական գիտական կառույցների ֆեդերացիային (տե՛ս վկայականը): 2012թ-ին ֆեդերացիայի 9-րդ ամենամյա նիստի մասնակիցները հյուրընկալվել են համալսարանում: Այնուամենայնիվ ՈԻԳԸ-ի անդամակցող և ակտիվ գիտական աշխատանք կատարող ուսանողների թիվը սահմանափակ է, ինչը, ըստ ՈԻԳԸ-ի անցկացրած հարցումների, պայմանավորված է հիմնականում ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների մոտիվացիայի և ազատ ժամանակի բացակայությամբ:

Այս ուղղությամբ այսօր տարվում են որոշ աշխատանքներ.

ա. մշակվել է կլինիկական օրդինատուրայի ընդունելության նոր կարգ, համաձայն որի կլինիկական օրդինատուրայի անվճար համակարգ ընդունվելիս

առաջադիմության հավասար պայմանների դեպքում առաջնահերությունը կտրվի այն ուսանողին, որի գիտական աշխատանքների գործակիցը կլինի ավելի բարձր,բ. ՈՒԳԸ-ի աշխատանքները ղեկավարող դասախոսներին մրցույթով անցնելու համար անհրաժեշտ որակավորման հարցաթերթում տրվում են համապատասխան բալեր:

Չափորոշիչ Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

1992թ-ից համալսարանում գործում է ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհրդարանը (AMSP), որը գործում է ըստ կանոնադրության (տե՛ս կանոնադրությունը):

Ուսանողական խորհրդարանն ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները համալսարանի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակույթային, բարոյական և հոգևոր զարգացմանը, ստեղծում կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ: Խորհրդարանը մշակում և համալսարանի ղեկավար մարմիններին է ներկայացնում ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնընչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը (տե՛ս ուս. խորհրդարանի կանոնադրությունը, կետ 3-րդ, 12-րդ):

Խորհրդարանը ձևավորվում է ներկայացուցչական ընտրությունների սկզբունքով: Մինչև 125 հոգուց բաղկացած յուրաքանչյուր կուրս խորհրդարանում ունի 1 անդամ, իսկ 125-ից ավելի թվով ուսանողներ ունեցող կուրսը՝ 2: Խորհրդարանի անդամներն առաջադրվում են կուրսերում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել են առավել շատ թվով ուսանողներ:

Ուսանողական խորհրդարանը կազմված է ուսումնամեթոդական, միջազգային կապերի, լրատվության և տեղեկատվության, մշակույթի և ազատ ժամանցի, ուսանողական գիտական ընկերության, ֆակուլտետային (ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիայի, արտասահմանցի ուսանողների) ինտերնատուրայի և կլինօրդինա-

տուրայի հանձնաժողովներից:

Ուսումնամեթոդական հանձնաժողովը կոչված է ուսումնական պրոցեսի առկա խնդիրների բացահայտմանը և դրանց վերաբերյալ լուծումներ առաջարկելուն: Ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամներն ընգրկված են համապատասխան ֆակուլտետային հանձնաժողովներում, որտեղ և քննարկվում են ուսանողների կողմից բարձրացված հարցերը: Հավելենք, որ համալսարանի բոլոր գիտական խորհուրդներում ուսանողները ներկայված են 25% համամասնությամբ: Ուսանողների մեկական ներկայացուցիչ անդամակցում է նաև ցիկլային մեթոդական հանձնժողովներին:Ուսանողների կողմից բարձրացված խնդիրները ներկայացվում են ուսանողական խորհրդարանի կողմից հրատարակվող <Մեդիկուս> ուսանողական ամսաթերթի հոդվածներում:

2010թ-ից ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամները ուսանողի շահերը պաշտպանելու նպատակով մասնակցում են գիտելիքների գնահատման բողոքարկման գործընթացին:

Ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից պարբերաբար անցկացրած սոց. հարցումների արդյունքները քննարկվում են ուսանողների և դասախոսների մասնակցությամբ ընթացող բանավեճային ակումբի թեմատիկ հանդիպումների ժամանակ:

Ուսանողական խորհրդարանն անդամակցում է միջազգային բազմաթիվ կառույցների՝ Բժիշկ-ուսանողների միությունների համաշ-խարհային ֆեդերացիային (IFMSA), Դեղագետ-ուսանողների միջազգային ֆեդերացիային (IPSF), Ատամնաբույժ-ուսանողների միջազգային միությունը (IADS):

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում, անհրաժեշտության դեպքում, ընդգրկվում են նաև համալսարանի իրավաբանական բաժինը, դեկանատները և այլ ստորաբաժանումներ:

Չափորոշիչ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմ-ներ:

Մինչև 2006 թ-ը համալսարանում չեն գործել ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման, ՄՈՒՀ-ում ընթացող գործընթացների և առկա ստորաբաժանումների աշխատանքի գնահատմանն ուղղված կառույցներ և կանոնակարգեր: 2006 թ.-ին ստեղծված «Բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի» գործառույթներում առկա էին նաև ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովմանն ուղված գործընթացներ: Օրինակ՝ մինչև 2011 թ-ը մշակվել և ինտեգրվել է ուսանողների գնահատման թեստային համակարգը, վերանայվել են կրթական ծրագրերը և դրանց ներկայացվող պահանջները, մշակվել է ուսանողների մասնագիտական գիտելիքների գնահատման կարգ և այլն: Անշուշտ վերը նշված բարեփոխումներն ուղղված են եղել ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների որակի բարձրացմանը, սակայն որակի ապահովումը, որպես ամբողջական համակարգ, սկսել է գործել 2011թ-ից, երբ համալսարանում բացվեց «Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը» և հիմնվեցին որակի ապահովման կենտրոնական և ֆակուլտետային հանձնաժողովները: Նորաստեղծ կենտրոնի կողմից մշակված ԵՊԲՀ որակի ապահովման քաղաքականությունում ամրագրված դրույթներից են.

- ապահովել շնորհվող որակավորումների համապատասխանությունը բարձրագույն կրթության ազգային ստանդարտներին,
- ապահովել ուսման վերջնարդյունքների վրա հիմնված որակյալ կրթական համակարգ,
- ապահովել ուսանողներին բուհի կողմից տրամադրվող առարկայական ծրագրերով նախատեսված համապատասխան աջակցության արդյունա-վետությունը, (տե՛ս ԵՊԲՀ որակի ապահովման քաղաքականությունը)

ԵՊԲՀ կրթության որակի ներքին ապահովման համակարգի երկարաժամկետ ռազմավարական պլանում արտացոլված են ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատմանն ու բարելավմանն ուղված միջոցառումներ (տե՛ս ԵՊԲՀ կրթության որակի ներքին ապահովման համակարգի երկարաժամկետ ռազմավարական պլանը, կցվում է):

Միայն վերջին մեկ տարվա ընթացում շուրջ 1800 ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ ուղղված կրթության որակի ներքին ապահովման

համակարգի ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատմանը (տե՛ս հարցումների արդյունքները): Այդ հարցումների արդյունքում մշակվել է միջոցառումների պլան, որոնք զեկուցվելու են գիտական խոհրդի 2013թ-ի ապրիլ ամսվա նիստին:

Համալսարանի առանձին գործընթացների, ինչպիսիք են օրինակ ուսանողների գնահատումը, դասախոսական կազմի որակի ապահովումը, կրթական ռեսուրսներով և օժանդակ ծառայություններով ապահովումը, որակի ապահովման գործիքակազմը և ընթացակարգերը, արդեն իսկ մշակվել են:

Մասնավորապես մշակվել են ուսանողների գնահատման համակարգը գնահատող հարցաշարեր, որոնց միջոցով գնահատվել է ներկայումս գործող համակարգը, ստացվել են առաջարկներ գնահատման համակարգում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ (տե՛ս հարցաշարը): Հարցումներ են անցկացվել գործատուների, դասախոսների և կլինիկական օրդինատորների շրջանում՝ ուղղված ԵՊԲՀ-ում գործող ուսումնական համակարգի, ուսումնական ծրագրերի առանձին բաղադրիչների, գիտելիքների գնահատման համակարգի, դասախոսների որակավորման բարձրացման ընթացակարգերի արդյունավետության գնահատմանը:

Մշակվել է ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ, ինչը թույլ է տվել պարզել առկա ռեսուրսների համապատասխանությունը կրթական ծրագրերի պահանջներին, ինչպես նաև օժանդակ, խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունն ու այդ ոլորտում առկա խնդիրները:

Պետք է նշել, որ մշակված գործիքների կիրառումը դեռ լիովին համակարգված չէ, չկան գիտական խորհրդի կողմից հաստատված ուսանողներին մատուցվող ծառայությունների արդյունավետությունը գնահատող ընթացակարգեր: Վերջիններս գտնվում են մշակման փուլում:

Համալսարանում ուսանողներին մատուցվող ծառայությունների և իրականացվող այլ գործընթացների որակի ապահովման համակարգի մանրամասն վերլուծությանը կարող եք ծանոթանալ ենթակառուցվածքային ինքնավերլուծության զեկույցի 10-րդ չափանիշի վերլուծության ժամանակ:

Լավագույն փորձի օրինակ

1. Համալսարանական և ֆակուլտետային գիտական խորհուրդներում ուսանողների ընգրկվածություն մինչև 25% համամասնությամբ: Ֆակուլտետային և կենտրոնական մեթոդական հանձնաժողովների աշխատանքներին ուսանողների ընդգրկվածություն մեկական անդամով:
2. Ուսանողների հետ համալսարանի ղեկավարության (ռեկտորի և պրոռեկտորի) պարբերաբար կազմակերպվող հանդիպումներ:
3. Բոլոր կուրսերի հետ կիսամյակի ընթացքում կիսամյակային խորհրդակցությունների պարբերական անցկացում՝ տվյալ կուրսում դասավանդվող բոլոր առարկաների ամբիոնների վարիչների ներգրավմամբ:
4. Համալսարանի պաշտոնական կայքում ռեկտորի և ուսանողների կապը մշտապես ապահովող գործող կապի առկայություն:
5. Ուսանողների կարիքներին և նրանց կողմից բարձրացրած խնդիրներին նվիրված հարցումների պարբերական անցկացում:
6. Լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների կազմակերպման հստակ ձևերի և կարգերի առկայություն:
7. Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանման և ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմնի՝ ուս խորհրդի առկայություն:

Ոչ այնքան լավ փորձի օրինակ

1. Ուսանողների ընդունելության համակարգում համալսարանի դերակատարումը սահմանափակ է:
2. Գիտական աշխատանքներումառկաէ ուսանողների թերներգրա-վվածություն (մոտիվացիայի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների, դասավանդման գործընթացի և գիտական աշխատանքի մեկտեղման հնարավորությունների ոչ բավարար մակարդակ):

3. Համալսարանում բացակայում է ուսանողների կարիերայի կենտրոնը:
4. Ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը գնահատող ընթացակարգերից շատերը դեռևս գտնվում են մշակման փուլում:

ՉԱՓԱՆԻՇ 5

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելուհամար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտականորակներ ունեցող պրոֆեսորադասախոսական նուսումնաօժանդակ կազմով:

Հավակնությունները: *Կրթական ծրագրերի զարգացման և կրթության որակի ապահովման պահանջներից ելնելով համալսարանը որդեգրել է մասնագիտական և մանկավարժական պահանջվող որակավորմամբ պրոֆեսորա-դասախոսական կազմի շարունակական բարելավման և կատարելագործման քաղաքականություն:*

Չափորոշիչ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Որակյալ կադրային ներուժի ձևավորման և զարգացման համար համալսարանը որդեգրել էր հետևյալ քաղաքականությունը.

ա. նորացնել և երիտասարդացնել դասախոսական կազմը՝ ասպիրանտուրայի տեղերի ավելացման, ասպիրանտների հետ պայմանագրեր կնքելու և դասախոսական կազմի որակներին առաջադրվող պահանջները վերանայելու ճանապարհով,

բ. մշակել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,

գ. մշակել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման հստակ մեխանիզմներ և ընթացակարգեր,

դ. մշակել դասախոսների ընտրության ընթացակարգեր, ե. բարելավել դասախոսների կատարելագործման համալսարանական ծրագիրը՝ ապահովելով դասախոսական կազմի անխտիր մասնակցությունն այդ ծրագրին (տե՛ս 2006-2010թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 15, 16):

Մինչև 2007թ-ը համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունն անցկացվում էր մրցույթային կարգով: 2007թ-ից մինչև 2011թ-ը պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունն իրականացվել է (ամբիոնի վարիչի համաձայնությամբ) համալսարանի ռեկտորի հետ կնքած ուղղակի պայմանագրի հիման վրա: Դասախոսական կազմի համալրման նշված ձևը կրել է ժամանակավոր բնույթ՝ դասախոսական կազմը առավել օպերատիվ ճանապարհով թարմացնելու համար, ինչը չի հակասել ՀՀ օրենսդրության բուհի դասախոսական կազմի ընտրության կանոնակարգին և քաղաքականությանը:

2011թ-ից համալսարանի դասախոսների ընտրությունը կատարվում է մրցույթային կարգով՝ համաձայն «Դասախոսների ընտրության ընթացակարգի»-ի (տե՛ս ընթացակարգը): Ըստ այդ ընթացակարգի, յուրաքանչյուր ուսումնական տարի ռեկտորը սահմանում է ընթացիկ ուսումնական տարում առկա թափուր մրցույթային տեղերի ցանկը: Սահմանված կարգով մրցույթ հայտարարելու անհրաժեշտության մասին մարդկային ռեսուրսների բաժինը (կադրերի բաժինը) տեղեկացնում է համալսարանի գիտական խորհրդի քարտուղարությանը՝ համապատասխան դասախոսի աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն 80 օր առաջ: Թափուր տեղերի վերաբերյալ հայտարարությունը դրվում է համալսարանի պաշտոնական կայքում և 2000 տպաքանակ ունեցող մամուլում՝ ընտրության օրվանից առնվազն 2 ամիս առաջ: Մրցույթով անցնելուց հետո ռեկտորը, ելնելով որակավորման հանձնաժողովի դասախոսին տրված գնահատականից և ֆակուլտետային խորհրդի որոշումից դասախոսի հետ կնքում է մինչև 5 տարի (1-ից 5) ժամկետով պայմանագիր:

2011-12թթ. ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին մասնակցել են 30 ամբիոնների 325 դասախոս, որոնցից մրցույթով անցել են 295-ը: Մրցույթի մասնակիցների 6%–ը չեն երաշխավորվել որակավորման հանձնաժողովի և ամբիոնների կողմից և/կամ չեն ընտրվել գիտական խորհուրդներ կողմից (տե՛ս որակավորման հանձնաժողովի, ամբիոնական նիստերի և գիտական խորհրդների արձանագրությունները): Որակավորման հանձնաժողովի կամ ամբիոնների կողմից չերաշխավորվելու դեպքում թեկնածուն իրավունք ունի մասնակցել համալսարանի գիտական խորհրդների կողմից կազմակերպված տվյալ թափուր տեղի համար հայտարարված մրցույթին: Ներկայումս պրոֆեսորադասախոսական կազմի առանձին տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ) համար մշակվում են ինչպես նրանց գործունեության տարբեր բնագավառների (ուսումնամեթոդական, գիտական, կլինիկական և այլն), այնպես էլ ընդհանուր գործունեության համար պահանջվող անցողիկ շեմքը, ինչը թույլ կտա մշտադիտարկման միջոցով տալ գործող ընթացակարգի և դասախոսների ընտրության կիրառվող քաղաքականության գնահատականը:

Ըստ գործող կանոնակարգի, առանց մրցույթի, միայն ռեկտորի հետ կնքած պայմանագրի հիման վրա, կարող են աշխատանքի ընդունվել միայն կարճաժամկետ ծառայություններ մատուցող դասախոսները, որոնք 20.10.2011թ. դրությամբ, համալսարանում ընդամենը 8-ն են:

Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի ընտրությունը կազմակերպվում է ըստ «Ստորաբաժանումների տեսակների և աշխատատեղերի տարակարգերի մասին» կանոնակարգի, որի միջոցով սահմանվում են համալսարանի ստորաբաժանումների, աշխատատեղերի տարակարգերը, թափուր աշխատատեղ զբաղեցնելու ձևերը (հիմնականում մրցույթային) և կարգը (տե՛ս կարգը):

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորման ներկայացվող պահանջները հստակ սահմանված են կոնկրետ առարկայի դասավանդման համար, սակայն առանձին կրթական ծրագրերի համար դրանք սահմանված չեն: Ներկայումս դասախոսների ընտրության վերը նշված գործող կարգով հստակ ներկայացված են դասախոսների տարակարգերի (պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս) գործառույթները և բնութագրիչները: Օրինակ՝ ըստ կարգի, պրոֆեսորի պաշտոնում կարող են ընտրվել դոկտորի գիտական աստիճան ունեցող այն անձիք, ովքեր ունեն 9 տարվա մանկավարժական փորձ, որից ոչ պակաս քան 5 տարին՝ դոցենտի պաշտոնում: Նույն կարգով սահմանվում են նաև դասախոսների աշխատանքային բնութագրերը. այն է՝ թե որ դասախոսը, որ կրթական մակարդակներում և ինչ ծրագրերով կարող է դասավանդել: Օրինակ՝ ըստ ընտրության կարգի, համաձայն դոցենտի աշխատանքային բնութագրի, նա պետք է վարի գործնական պարապմունքներ և դասախոսություններ՝ բակալավրիատում, մագիստրատուրայում, օրդինատուրայում, ասպիրանտուրայում և այլն (տե՛ս ընթացակարգը):

Չափորոշիչ գ. Մուհ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հաշվետու ժամանակահատվածում՝ մինչև 2010թ-ը համալսարանում դասախոսական կազմի գնահատումը կազմակերպվել է յուրաքանչյուր կիսամյակում՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումների կազմակերպման ճանապարհով: Հարցաթերթում ընդգրկված են եղել դասախոսի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատմանն առաջադրվող 7 հարց: Հարցման արդյունքները հաշվի են առնվել դասախոսի հետ պայմանագրերը կնքելիս: Հարցման բացասական արդյունքները (5 բալանոց համակարգում 3,5-ից ցածր ստացած գնահատական) պայմանագիրը չեղյալ համարելու և/կամ նոր պայմանագիր կնքելու համար որպես հիմք դիտարկվել են միայն այն դեպքերում, երբ 5 տարվա ընթացքում (10 կիսամյակում) դասախոսը բացասական գնահատական է ստացել 3 և ավելի անգամ:

Դասախոսական կազմի որակի պարբերական գնահատում իրականացվել է ամբիոնների դասախոսների կողմից փոխադարձ դասալսումների միջոցով: Անցկացված դասալսումների արդյունքները քննարկվել են ամբիոնական նիստերում (տե՛ս ամբիոնների փոխադարձ դասալսումների մատյանները):

Համալսարանի բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի կողմից 2008-2009թթ. մշակվեց «Դասախոսի որակավորման գնահատման հարցաթերթ»-ը, որը քննարկվեց համալսարանի բոլոր ամբիոններում, արվեցին առաջարկություններ, որոնց հիմնական մասն ընդունվեց: Հարցաթերթի վերջնական տարբերակը կրկին քննարկվեց ամբիոնի վարիչների և ուսումնական գծով պատասխանատուների հետ անցկացրած հանդիպման ժամանակ, որից հետո միայն այն հաստատվեց համալսարանի կենտրոնական մեթոդական հանձնաժողովում (տե՛ս կենտրոնական մեթոդական հանձնաժողովի արձանագրությունը, հարցաթերթը):

2011թ-ից, երբ համալսարանում վերականգնվեց դասախոսների մրցույթով ընտրության կարգը, ընտրության հիմքում դրվեց դասախոսի որակավորման գնահատման քաղաքականությունը: Համաձայն այդ քաղաքականության, մշակված համակարգի միջոցով, 5 տարվա կտրվածքով գնահատվում են դասախոսի գործունեության բոլոր՝ ուսումնամեթոդական, գիտական, հետբուհական շարունակական կրթության, կլինիկական, վարչական և հասարակական բնագավառները, ինչպես նաև հաշվի է առնվում ուսանողների կողմից դասախոսին

տրված գնահատականը (տե՛ս հարցաթերթերը):

Հարցաթերթում ընդգրկված է շուրջ 80 ենթահարց: Մրցույթին մասնակցող անձը պահանջվող փաստաթղթերի հետ միասին լրացնում և հանձնում նաև այս հարցաթերթը: Համապատասխան ֆակուլտետի գիտական քարտուղարը, ներկայացված փաստաթղթերի հիման վրա, ստուգում է լրացված հարցաթերթերը, հաշվում բալերը և ներկայացնում համալսարանի «Դասախոսի որակավորման մշտական հանձնաժողովին» (տե՛ս հանձնաժողովի կազմը), որը հատուկ հրավիրած նիստում, քննարկում է որակավորման հարցաթերթի արդյունքում տրված գնահատականը, ամբիոնի վարիչների, ուսումնամեթոդական վարչության ղեկավար կազմի և ցիկլային մեթոդական հանձնաժողովների կողմից պարբերաբար՝ տարին 1-2 անգամ անցկացված դասալսումների վերլուծությունների արդյունքները (տե՛ս ամբիոնի նիստերի դասալսումների և դրանց քննարկումների արձանագրությունները) և այնուհետև դասախոսի հետ ունեցած անմիջական հարցազրույցից հետո կայացնում է որոշում՝ երաշխավորել կամ չերաշխավորել դասախոսի հետագա աշխատանքային գործունեությունը: Այդ որոշումն այնուհետև քննարկվում է ֆակուլտետային խորհրդում, որտեղ դասախոսի վերաբերյալ կազմակերպած փակ գաղտնի քվեարկության արդյունքում իրականացվում է ընտրություն:

Գնահատման նման գործընթացը կազմակերպվում է յուրաքանչյուր դասախոսի համար 1-5 տարվա պարբերությամբ՝ կախված նրա հետ կնքած պայմանագրում աշխատանքային գործունեության վերաբերյալ սահմանված ժամկետից:

Չափորոշիչ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատրելագործմանն ուղղված միջոցառումներ:

Մինչև 2007թ-ը համալսարանում գործում էր «Դասախոսի որակավորման բարձրացման» բաժինը, որի կողմից կազմակերպվում էին դասախոսների մանկավարժական հմտությունների ձեռք բերման և կատարելագործման դասընթացներ: Այդ դասընթացներին դասախոսները մասնակցում են էին 5 տարին 1

անգամ:

2007թ. 457 դասախոսների շրջանում անցկացրած հարցումների արդյունքում պարզվեց, որ դասախոսների 65%-ը գոհ չէին դասընթացից, ուստի վերապատրաստման այս ձևը հանվեց:

Մշակվեցին դասախոսների վերապատրաստման նոր մեխանիզմներ և 2012թ-ին բացվեց դասախոսների վերապատրաստման նոր բաժին, որն այսուհետև զբաղվելու է այդ մեխանիզմների կիրառման միջոցով դասախոսների ինչպես մանկավարժական, հոգեբանական, այնպես էլ մասնագիտական պատրաստմանն վերապատրաստման հարցերով:

2008թ-ին 420 դասախոսների շրջանում անցկացվեց հարցում, որի միջոցով հնարավոր եղավ պարզել, թե ինչպիսի որակավորումների կարիք ունեն դասախոսները: Հարցմանը մասնակցած դասախոսների գերակշիռ մասը կարևորել էր դասախոսների վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը, իսկ 2/3-ը նշել էր, որ կարիք ունի մասնագիտական որոշ հմտությունների, կատարելագործման, նոր գիտելիքների ձեռք բերման և դասավանդման նոր մեթոդների տիրապետման: Հարցումը բացահայտեց նաև, որ դասախոսները հասկանում են իրենց մասնակցության կարևորությունը կրթության որակի բարելավմանն ուղղված բարեփոխումներին և պատրաստ են ու ցանկանում են լիովին ու ակտիվ մասնակցել այդ պրոցեսներին (տե՛ս հարցումների արդյունքները):

2010թ. համալսարանում կատարվեցին որոշակի քայլեր. օրինակ մշակվեց և փորձարկվեց դասախոսների վերապատրաստման դասընթացների հետևյալ մոդելը. ԵՊԲՀ տարբեր ամբիոնների 30 երիտասարդ դասախոսներ (տե՛ս ցանկը) մասնակցեցին մեծ Բրիտանիայի «Համագործակցություններ միջազգային բժշկական կրթության ոլորտում» PRIME (Part nerships in Internal Medical Education) կազմակերպության կողմից 2 շաբաթ տևողությամբ կազմակերպած դասախոսների վերապատրաստման հատուկ ծրագրի աշխատանքներին: Հետագայում այդ կազմակերպության ու Բոստոնի համալսարանի բժշկական դպրոցի փորձագետների կողմից անցկացրած դասընթացներին մասնակցած մի քանի դասախոսների մասնակցությամբ մշակվեց ԵՊԲՀ դասախոսների վերապատրաստման նոր մոդել:

Ծրագիրն իրենից ներկայացնում էր 5 սեմինար գործնական պարապմունքներից բաղկացած թրեյնինգ, որն ընդգրկում էր հետևյալ թեմաները՝

1. փոքր խմբերում դասավանդման հմտությունները,
2. բազմակի ընտրության հարցերի (MCQ) (քննական թեստերի) կազմումը,
3. խմբերում դասավանդման հմտությունները,
4. դասախոսությունների ներկայացման ընդհանուր հմտությունները,
5. բժշկական էլեկտրոնային ռեսուրսներ և դրանց օգտագործման եղանակները:

2010թ ընթացքում կազմակերպված փորձնական 2 դասավարժանքներին (թրեյնինգներին) մասնակցեցին ևս 30 դասախոս: Դասընթացների վերջում անցկացվեց հարցաթերթային հարցում, որտեղ մասնակիցներն իրենց դրական կարծիքը հայտնեցին ծրագրի, դրա նպատակահարմարության, կազմակերպման, թեմաների ընտրության և դասավանդողների վերաբերյալ (տե՛ս հարցաթերթային վերլուծությունը):

Այս համակարգն այսօր շարունակում է գործել, բայց այն դեռևս կանոնակարգված չէ ակրումէ ինքնաբուխբնույթ: 2012թ-ին համալսարանի ուսումնական վարչության կազմում ստեղծվեց «Դասախոսների որակավորման բարձրացման» բաժինը (տե՛ս հրամանը), որը սկսել է մշակել դասախոսների մանկավարժական և մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և կատարելագործմանն ուղղված միջոցառումների կանոնակարգերը և ընթացակարգերը:

Համալսարանի դասախոսներից 474-ը վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտական կատարելագործում են անցել արտասահմանում՝ մասնակցել են ուսումնամեթոդական և գիտական կոնֆերանսների աշխատանքներին (տե՛ս համալսարանի ընդհանուր բաժնի արձանագրությունների մատյանը):

Չափորոշիչ զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համաձայն ռազմավարական ծրագրի համալսարանն աշխատում է ըստ կրթական ծրագրերի զարգացման և որակին առաջադրվող պահանջների ունենալ

համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմ: Այսպես. համալսարանում այսօր աշխատում են 1114 դասախոս, որոնցից 173-ը գիտությունների դոկտորներ են, նրանցից 107–ը ունեն պրոֆեսորի կոչում, 517–ը գիտությունների թեկնածու են, որոնցից 201-ը ունեն դոցենտի կոչում, 424-ը ասիստենտներ են: Համալսարանի պրոֆեսորների միջին տարիքը 63 է, դոցենտներինը 54, իսկ ասիստենտներինը՝ 44: Ուսանող-դասախոս հարաբերակցությունը 10.10.2012թ. դրությամբ կազմում է 5530 : 1114 = :1:5

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում, համաձայն ռազմավարական ծրագրի քաղաքականության, կատարվել է պրոֆեսորադասախոսական կազմի թարմացում: Այսպես. վերջին 5 տարում նպատակային ասպիրանտուրա են ընդունվել 34 հոգի, որից համալսարանում շարունակել են իրենց դասախոսական գործունեությունը ընդամենը 22-ը: Մնացած 12-ից 2-ը մեկնել է արտասահման՝ ուսումը շարունակելու, մեկը մեկնել է հանրապետությունից, իսկ 9 ասպիրանտներ այլ կազմակերպություններից ստացել են ավելի շահավետ առաջարկ և այսօր աշխատում են այլ բժշկական կլինիկաներում: Այն, որ ոչ բոլոր նպատակային ասպիրանտներն են մնացել բուհում, խիստ մտահոգությանտեղիքտվեց, ուստի կատարվեց վերլուծություն, որի արդյունքում պարզվեց, որ կան լուրջ բացթողումներ ասպիրանտուրայի հայտերի ձևավորման խնդրում: Միշտ չէր, որ ասպիրանտուրայի համար նախատեսված տեղերը ձևավորվել էին պահանջարկի հիման վրա: Ուստի, 2 տարի առաջ, վերանայվեց նպատակային ասպիրանտուրայի տեղերի հատկացման քաղաքականությունը: Այսօր ասպիրանտուրայի տեղերի դասիչային կառուցվածքը փոխվել է. ավելի շատ տեղեր են հատկացվել այն մասնագիտություններին, (օր. ախտաֆիզիոլոգիա, ախտաբանական անատոմիա, ֆթիզիատրիա և այլն), որոնքառավելպահանջվածեն: (տե՛ս համալսարանի գիտական բաժնի արձանագրությունները):

Համալսարանում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը 5 տարվա ընթացքում երիտասարդացել է 4 տարով:

Տարվա մեջ մի քանի անգամ համալսարանի աշխատակիցները ստանում են պարգևատրումներ, օգնություններ և այլն, սակայն համալսարանում դեռևս չի գործում (ինչը նախատեսված էր ռազմավարական պլանում) աշխատողների

սոցիալական կարգավիճակի մոնիթորինգի համակարգը և չի գնահատվում աշխատողների սոցիալական բավարարվածության մակարդակը: Ռազմավարական պլանի նպատակ 3-ի խնդիրներից մեկի՝ այն է «Աշխատանքի արդյունավետության և մասնագիտական կատարելագործման բարձրացման նպատակով ստեղծել դասախոսների և աշխատողների աշխատավարձերի տարբերակման մեխանիզմ» ապահովման նպատակով համալսարանում մշակվել և գործում է «Համալսարանի ամբիոնների հաստիքակազմի, դասախոսների, տարակարգերի, ուսումնական ծանրաբեռնվածության և վարձատրության մասին» կարգը (տե՛ս կարգը): 2012թ-ին վերանայվել է դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը (օրինակ՝ ամբիոնի վարիչների ծանրաբեռնվածությունը 800 ժամից դարձել է 400, իսկ պրոֆեսորներինը՝ 800-ից 700): Հստակեցվելէաշխատավարձերիբաշխմանկարգը (տե՛ս կարգը): Հաշվետու տարում 2 անգամ կատարվել է աշխատավարձերի բարձրացում. այսպես՝ 2007-08թթ-ին այն բարձրացել է 15-20%-ով, իսկ 2012թ-ին՝ 25-30%-ով:

Այս ամենով հանդերձ համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովմանն ուղղված մշակված քաղաքականություն և ընթացակարգեր չկան:

Չափորոշիչ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Համաձայն ռազմավարական պլանի, համալսարանը մշտապես պահպանել է ուսանող, դասախոս, ուսումնաօժանդակ կազմ թվաքանակի հարաբերակցությունը (տե՛ս ռազմավարական ծրագիրը, էջ 16), որը կարգավորվել է «Ստորաբաժանումների տեսակների և աշխատատեղերի տարակարգերի մասին» կանոնակարգով: Համաձայն այդ կարգի հստակեցված են համալսարանի ստորաբաժանումների, աշխատատեղերի տարակարգերը, թափուր աշխատատեղ զբաղեցնելու ձևերը (հիմնականում մրցույթային) և կարգը (տե՛ս կարգը): Սակայն ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է որոշ փոփոխություններ մտցնել վերը նշված կարգում՝ ամբիոնների ուսումնաօժանադակ անձնակազմի տարաբաշխման հիմքում դնելով ամբիոնների առանձնահատկություններից և դրա

կարիքներից բխող համալսարանում այսօր անցկացվող հետազոտության արդյունքները: Համալսարանի տարբեր ստորբաժանումներում այսօր աշխատում է 508 աշխատակից, որոնցից 246-ը վարչական աշխատողներ են, իսկ 262-ը՝ ուսումնաօժանդակ անձնակազմն է, ինչըբավարարումէՀՀբուհ-իլիցենզավորմանպահանջը:

Լավագույն փորձի օրինակ

1. Համալսարանում վերականգնվել է դասախոսների ընտրության մրցույթային կարգը:
2. Համալսարանում կատարվող նորարարությունների և բարեփոխումների հիմքում դրվում են դասախոսների շրջանում անցկացված հարցումների արդյունքները (օրինակ՝ դասախոսի որակավորման գնահատման մեխանիզմների մշակմանը մասնակցել են դասախոսների կեսից ավելին):
3. Մշակվել և գործում է «Դասախոսի որակավորման գնահատման» կարգը:
4. Հարցումների միջոցով պարզվել են այն խնդիրները և կարիքները, որոնք առկա են դասախոսների վերապատրաստման գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:

Ոչ այնքան լավ փորձի օրինակ

1. Վերջին 4 տարիների ընթացքում դասախոսների ընտրությունը կատարվել է ոչ մրցույթային կարգով:
2. Դասախոսական կազմի համալրումը ասպիրանտների միջոցով լիարժեք չի կատարվել:
3. Վերջին 3 տարիների ընթացում դասախոսների վերապատրաստման և կատարելագործման գործընթացը կանոնակարգված չի եղել:
4. Դասախոսական կազմի ուսումնական բեռնվածությունը հաշվարկվում է զուտ լսարանային ժամաքանակով:

Չ Ա Փ Ա Ն Ի Շ 6

Հետազոտությունը եւ զարգացումը

ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը եւ կապն ուսումնառության հետ:

Հավակնությունները: *ԵՊԲՀ ռազմավարական ծրագրում կարեւորվում է բարձրագույն կրթության եւ հետազոտական աշխատանքի երկուստեք փոխկապակցված դերը դրանց զարգացման եւ հանրության առողջապահական խնդիրների լուծման ծիրում, որից բխում է արդյունավետ, իննովացիոն հասցեականությամբ հետազոտությունների կատարման և հետազոտողների պատրաստման կարեւորությունը բարձրագույն կրթության որակի պահպանման եւ բարելավման գործում, ինչպես նաև բուհի՝ գիտա-հետազոտական եվրոպական տարածք ընդգրկման հնարավորության ապահովման անհրաժեշտությունը: Հետազոտական ոլորտում ՀՊԲՀ հետաքրքրություններն ու*

հավակնություններն արտահայտող ռազմավարության իրականացման առանցքային ուղղությունը (ելակետային մոտեցումը)՝ ապագա մասնագետի որակյալ, արդյունավետ դասավանդման և հետազոտական գործունեության համատեղելու կարողականությունն է (տե՛ս 2006-2010 ռազմավարականծրագիրը, 6-27 էջեր):

Չափորոշիչ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն

Համալսարանի գիտահետազոտական ներուժի զարգացման և այդ ներուժի՝ առողջապահական-տնտեսական ծրագրերում արդյունավետ օգտագործման նպատակով մշակվել է համապատասխան ռազմավարություն, որը հիմնված է ասպիրանտական եւ դոկտորական ծրագրերում միջառարկայական ուսուցման զարգացման եւ գիտելիքների փոխանցման կարողությունների ձևավորման վրա, ինչը կնպաստի զբաղվածության շուկայի ավելի լայն պահանջների ձեւավորմանը:

Համալսարանում գիտական գործունեությամբ զբաղվող կառույցներում ընդգրկված են գործող ամբիոնները, պրոբլեմային լաբորատորիաները, գիտահետազոտական կենտրոնը, փորձագիտական, ինչպես նաեւ հարակից հանձնաժողովները, ուսանողական գիտական ընկերությունը, գիտահետազոտական աշխատանքը ապահովող երիտասարդ գիտնականների խորհուրդը, գիտակոորդինացիոն խորհուրդը և այլ ռեսուրսներ: Հետազոտական աշխատանքների զգալի մասն ամփոփվում է թեկնածուական, դոկտորական ատենախոսությունների ձևով, որոնցում հստակ ձեւակերպվում են կատարված հետազոտության տեսական և գործնական նշանակությանը վերաբերող եզրակացությունները և առաջարկությունները: Հետազոտական աշխատանքների շուրջ հրապարակվում են հոդվածներ, տեղական եւ միջազգային գիտական հանդեսներում, արվում զեկույցներ տարբեր ֆորումներում: Համալսարանում գործում է գիտական գործունեության համակարգման բաժինը, որի կանոնակարգով սահմանված են հետեւյալ գործառույթները.

1. ամբիոնական գիտական ուղղությունների հաստատում և իրականացման ընթացքի աջակցություն,
2. գիտական ծրագրերի ՀՀ պետական բյուջեից մրցույթային կարգով բազային և թեմատիկ ֆինանսավորում,
3. գիտական կադրերի պլանավորում և պատրաստում,
4. գիտահիրատարակչական գործունեության գիտական անձնագրի պատրաստում:

Հավելենք, որ համալսարանի գիտական մասը ձեռնամուխ է եղել կատարելու հետազոտական գործունեության և մշակումների որակի ապահովման քաղաքականության եւ ընթացակարգերի բենչմարքինգ, որի արդյունքների հիման վրա կվերանայվեն տարվող քաղաքականության որոշ ուղղություններ:

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները

2006 թվականին ՄՈՒՀ-ը որդեգրեց հստակ գործելակերպ՝ իրականացնելու տեսական և կիրառական բնույթի հետազոտություններ՝ ըստ գերակա ուղությունների: Տվյալ գաղափարի հիմքում ընկած էր հետևյալը. Համախմբել տարրաբնույթ գիտական ուղղությունները, դարձնել դրանք նպատակամետ: Արդյունքում, պետքէ բարձրանար հետաքրքրությունների գիտական արժեքը և պիտանելիության մակարդակը: Գաղափարը նաև շահավետ էր ֆինանսական տեսանկյունից, քանի որ այդ դեպքում գիտությանը հատկացվող գումարները պետք է ծախսվեին ավելի թիրախային (հասցեական) և չփոշիացվեին:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են 5 հիմնական գիտական ուղղությունների երկարաժամկետ ծրագրեր: Ընտրությունը կատարվել է հետևյալ սկզբունքով. Ոլորտի առաջատար մասնագետը ներկայացրել է համապատասխան գիտական նախագիծ, որը քննարկվել ու գրախոսվել է մասնագիտական փորձագիտական հանձնաժողովներում և վերջնական հաստատման ներկայացվել գիտակորդինացիոն խորհուրդ: Քանի որ նույն գերակա ուղղության շրջանակներում աշխատում են մի քանի ամբիոններ, լաբորատորիաներ, կլինիկաներ, ապա յուրա-

քանչյուրի համար սահմանվել են գիտական թեմաների միջնաժամկետ ծրագրեր՝ երեք տարի տևողությամբ, որոնց մի մասը նպատակ են հետապնդում իրականացնելու երկարաժամկետ ծրագրերը: Միջնաժամկետ ծրագրերի հիման վրա հստակ նշվում է յուրաքանչյուր տարում իրականացվելիք կարճաժամկետ ծրագրերը, որոնք անհատական գիտական թեմաների, հետազոտողի՝ ասպիրանտական և դոկտորական պլաններով իրականացվող հետազոտական թեմաներն են: Վերջիններս էլ գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ ապահովում են գիտամանկավարժական կադրերի երիտասարդացումն ու հերթափոխը:

2006 թվականից ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտությունները 5 հիմնական գիտական ուղղությունների երկարաժամկետ ծրագրերի մասով ամբողջությամբ ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի շրջանակներում՝ պետության կողմից տրվող դրամաշնորհի ձևով տարեկան մոտ 90 միլիոն դրամի չափով: Միջնաժամկետ այն ծրագրերը, որոնք առանց արտաքին ֆոնդերի ֆինանսական աջակցության, կազմում են համալսարանի միջնաժամկետ ծրագրերի գրեթե 50%-ը, անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվում են համալսարանի կողմից:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ ծրագրերի ֆինանսավորմանը, ապա պետք է նշել, որ տարեկան 10-15 ասպիրանտական և դոկտորական հետազոտական ծրագրեր ֆինանսավորվում են պետության կողմից, հետազոտողի համակարգում վճարումը կատարում է հայցորդը կամ համալսարանը իր աշխատակից-հայցորդի համար, իսկ անհատական նախաձեռնությամբ, փոքր գիտական խմբերով իրականացվող գիտական թեմաները մրցութային կարգով կարող են ֆինանսավորվել նաև ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման մրցույթի շրջանակներում:

2006-2011 թվականներին համալսարանում գործող 5 գերակա ուղղությունների շրջանակում առկա էին տարեկան միջինը 43 միջնաժամկետն 110 կարճաժամկետ ծրագրեր:

Հարկ է նշել, որ ցայսօր համալսարանում որպես գերակա ուղղություններ ընտրված ծրագրերը շարունակվում են, հաստատված բոլոր թեմաները բավարարել

են ներկայացված պահանջները, գիտակազմակերպչական բաժնի կողմից իրականացվող ընթացիկ փորձաքննության արդյունքում տրված առաջարկությունների և դիտողությունների շնորհիվ կատարման ընթացքում չեն մերժվել:

Պետության կողմից հայտարարված գիտական թեմաների ֆինանսավորման մրցույթի շեմը չեն հաղթահարել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) մրցույթին ներկայացված 26 գիտական հայտեր:

Յուրաքանչյուր տարվա վերջին, ըստ կատարվող ծրագրերի, ներկայացվում են հաշվետվություններ, որոնք պարտադիր վերլուծվում են համալսարանի փորձա-գիտական հանձնաժողովներում, իսկ, եթե ֆինանսավորումը տրված է լինում այլ աղբյուրից, օրինակ, ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից, ապա նաև այնտեղ: Թերկատարողականության դեպքում համալսարանն իրավունք ունի կասեցնելու տվյալ ստորաբաժանման կողմից իրականացվելիք ծրագրի ֆինանսավորումն ու օժանդակումը՝ հաշվի չառնելով այն, որ դա գերակա նախագծի մի հատվածն է: Այս պարագայում կատարվում է միջոցների վերաբաշխում՝ կամ տվյալ ուղղության շրջանակներում, կամ դրանից դուրս:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով

ԵՊԲՀ-ն ունի հետազոտական գործունեության իրականացման համար մշակված հստակ քաղաքականություն, որն իրագործվում է գիտակազմակերպչական գործունեությունը կառավարող 3 հիմնական օղակների՝ գիտակոորդինացիոն խորհրդի, գիտակազմակերպչական մասի և գիտահետազոտական կենտրոնի համակցված գործունեության միջոցով:

ԵՊԲՀ գիտակոորդինացիոն խորհուրդը ստեղծվել և գործում է համալսարանի գիտահետազոտական գործունեության պլանավորման և համակարգման նպատա-կով, որն իրականացվում է գիտահետազոտական կենտրոնի և ամբիոնների բազա-ներում: Իր գործունեության ընթացքում խորհուրդը ղեկավարվում է <<ԵՊԲՀ գիտա-կան խորհրդի գործունեության դրույթներով>>: Նրա անդամներն են գիտահետա-զոտական կենտրոնի լաբորատորիաների ղեկավարները և առանձին

գիտաշխատողներ, որոնք ունեն գիտահետազոտական գործունեության մեծ աշխատանքային փորձ, հեղինակավոր գիտնականներ են, համալսարանի տեսական և կլինիկական ամբիոնների առաջատար աշխատակիցներ (տե'ս գիտակորդինացիոն խորհրդի կանոնակարգը):

ԵՊԲՀ գիտակազմակերպչական մասը համալսարանի կառուցվածքային այն ստորաբաժանումն է, որն իրականացնում է բժշկական համալսարանի գիտական, գիտահետազոտական, կլինիկական և փորձարարական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման, բժշկական սարքավորումների և տեխնիկական միջոցների ինժեներական սպասարկման, մետրոլոգիայի և այլ գիտակազմակերպչական ծրագրեր: Այն համագործակցում է համալսարանական ստորաբաժանումների (գիտահետազոտական կենտրոն, ֆակուլտետներ, ամբիոններ, երիտասարդ գիտնականների խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն, կլինիկաներ), վերադաս գերատեսչությունների, գործընկեր հաստատությունների և այլ կազմակերպությունների հետ (տե՛ս գիտակազմակերպչական մասի կանոնակարգը):

ԵՊԲՀ գիտահետազոտական կենտրոնը մյուս գիտական հետազոտություններ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումն է:

ԵՊԲՀ-ում գիտահետազոտական աշխատանքներն իրականացվում են հիմք ընդունելով ՀՀ-ում գործող և համալսարանի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգերն ու ընթացակարգերը (տե՛ս կանոնակարգերն ու ընթացակարգերը): Ստորև ներկայացնում ենք նշված կառույցների գործունեության մի քանի օրինակներ:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի Գիտակոորդինացիոն խորհուրդը պետության կողմից հայտարարված գիտական թեմաների ֆինանսավորման մրցույթին մասնակցելու նպատակով հաստատել է 37 հետազոտական նախագծերի հայտ, որոնցից ֆինանսավորման շեմը հաղթահարել են 11-ը: Գիտակոորդինացիոն խորհուրդը և համապատասխան փորձագիտական հանձնաժողովները հաստատել են 40 դոկտորական և 189 թեկնածուական պլան-անոտացիա, որոնցից կրկնակի փորձաքննության են ուղարկվել 24 թեկնածուական և 5 դոկտորական պլան-անոտացիաներ: Առաջնային նյութի և մեթոդների ստուգման հանձնաժողովի կողմից փորձաքննության ենթարկված 158 աշխատանքներից,

առաջին հայտով մերժվել են 34-ը, իսկ կրկնակի փորձաքննության են ենթարկվել 16-ը: Նախապաշտպանություն են անցել 21 դոկտորական և 134 թեկնածուական ատենախոսություններ, որոնցից կրկնակի փորձաքննության են ենթարկվել 2 դոկտորական և 12 թեկնածուական ատենախոսություններ (տե՛ս համապատասխան հաշվետվությունները):

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը

Գիտական գործունեության միջազգայնացման հարցում կարևոր նշանակություն ունի համալսարանի պաշտոնական կայքէջը (http://www.ysmu.am): Այն հնարավորություն է տալիս ուսանողներին բաժանորդագրվել և ստանալ տեղեկատվություն՝ բժշկագիտության բնագավառում տեղի ունեցող տեղական և միջազգային իրադարձությունների մասին: Տարվա կտրվածքով կայքում տեղադրվում են մոտ 200 միջազգային կրթաթոշակների, դրամաշնորհների, հետազոտական ծրագրերի, միջազգային գիտաժողովների, սեմինարների մասին հայտարարություններ: Այն նպաստում է հետազոտողների իրազեկությանը արտերկրում իրականացվող միջազգային միջոցառումների մասին և խթանում է նրանց մասնակցությունը նման միջոցառումներին, որտեղ հնարավոր է դառնում ներկայացնել Հայաստանի բժշկագիտական բնագավառում կատարված հետազոտությունները, համեմատել դրանք միջազգային տվյալների հետ և արդիական գիտելիքներով թարմացնել ինչպես ուսումնական, այնպես էլ գիտագործնական գործընթացները:

Համալսարանի երիտասարդ հետազոտողները՝ ասպիրանտներն ու դոկտորանտները, ովքեր արտերկրում գիտական աշխատանք կատարելու հնարավորություն են ունենում անհատական հրավերքների, կրթաթոշակային ծրագրերի կամ հետազոտական դրամաշնորհների միջոցով, հատուկ աջակցություն են ստանում համալսարանի կողմից և պարտավորվում են ծրագրի ավարտին վերադառնալ հայրենիք և առնվազն 3 տարի աշխատել համալսարանում, հաղորդումներ տալ գիտելիքների վերաբերյալ, կիրառել դրանք աշխատանքային գործընթացում:

Համալսարանն իր գործունեության ընթացքում իրականացրել է մի շարք

հետազոտական դրամաշնորհներ, փոխանակային ծրագրեր, կազմակերպել է միջազգային գիտաժողովներ, հրավիրել արտերկրյա առաջավոր պրոֆեսորների, ովքեր իրենց գիտելիքներով և փորձով հաղորդակցվել են ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ:

Մեծ ուշադրություն է հատկացվում հետազոտողների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի՝ արտերկրում վարկանիշ և մեծ ճանաչում ունեցող պարբերականներում տպագրվելու հարցին: Առանձին դեպքերում ԲՈՒՀ-ը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում գիտական բարձր արժեք ունեցող գիտական հրապարակումների տպագրման համար: Համալսարանն ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն է ընձեռել ազատորեն օգտվելու միջազգային տեղեկատվական բազաներից (HINARY, Up ToDate), որտեղ հնարավոր է ծանոթանալ ոլորտի նորագույն զարգացումների վերաբերյալ գիտական հոդվածների բովանդակությանը:

Չափորոշիչ ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության եւ ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ

ԵՊԲՀ-ում հետազոտական գործունեության եւ ուսումնական գործընթացի փոխկապակցման, ինչպես նաեւ մեկտեղման մեխանիզմները ելնում են համալսարանի ռազմավարական ծրագրից եւ իրենց նպատակային ուղղվածությամբ, մատուցման ձեւերով միտված են հնարավորինս բավարարելու որոշակի ակադեմիական ստանդարտների եւ հետազոտական աշխատուժի շուկայի կարիքները:

Հետազոտական գործունեությունն ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունն ու ընթացակարգերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և նորովի մոտեցումներ ու մեխանիզմներ:

Առաջին խումբը հետազոտական աշխատանքի տեսական վերլուծության եւ գործնականում կիրառելի որոշ արդյունքների ներդրումն է ուսումնական նյութում, դասավանդման ընթացքում հղում կատարելով սկզբնաղբյուրին (առավել կիրառելի է տեսական բժշկություն ուսումնասիրող ամբիոններում), ինչպես նաև ուսանողների

կողմից բժշկության որևէ ճյուղին և/կամ հիմնախնդրին վերաբերող գիտական զեկույցների ներկայացումը:

Երկրորդ խումբն ընդգրկում է գործնական բժշկության եւ առողջապահության ոլորտում կատարվող հետազոտական աշխատանքը, երբ դասավանդման, սովորողի գործնական հմտությունների բարելավման նպատակով ուսանողական խմբերում դասախոսների կողմից օգտագործվում են ուսումնասիրման նոր մեթոդներ, տեխնոլոգիաներ, ներկայացվում և կիրարկվում տվյալ հետազոտության շրջանակում արված արդյունավետ դիագնոստիկ, բուժական մեթոդներ ինչպես նաև այն վերարտադրվում է հենց ուսանողների կողմից (ավելի կիրառելի է կլինիկական ամբիոններում): Հետազոտական գործունեության մեջ ուսանողների ընդգրկվածության լավագույն փորձի օրինակ է նաև մի շարք ամբիոններում գործող ուսանողական գիտահետազոտական խմբերի առկայությունը, որի անդամներն ակտիվորեն մասնակցում են տվյալ ամբիոնի, գիտական լաբորատորիայի բազային եւ թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական ծրագրերի կատարմանը, համահեղինակներ դառնում արդյունքների մասին հրապարակումներում (օրինակ, 2006-2011թթ-ին ախտաֆիզիոլոգիայի ամբիոնի գիտական թեմային մասնակել են մոտ 15-20 ուսանող, որոնք համահեղինակել են մոտ 8-10 հրապարակումներ):

Ուսանողական գիտահետազոտական խմբերի միջոցով առաջադեմ, գիտությամբ իրապես հետաքրքրված սովորողներին ամբիոնի թեմատիկ գիտական ծրագրերի մեջ ընդգրկման շնորհիվ հնարավորություն է ընձեռվել նրանցից ընտրել ապագա գիտամանկավարժական կադրերին: Մյուս կողմից՝ այս երիտասարդների նախաձեռնողական, յուրատիպ, անկախ մտածողությունը կարելի կլինի նպատակամղել բժշկության մեջ արդիական գաղափարներին առավել արագ արձագանքմանը:

Արդյունավետ կերպ է նաեւ համալսարանի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվող պարբերական ֆորումների կազմակերպումը (երբեմն միջազգային մասնակցությամբ), բանավիճային ակումբները, որտեղ քննարկվում են բժշկության արդիական հարցերը:

Ուսանողների հետազոտական աշխատանքում ընդգրկվածությունը հաշվի է առնվում մագիստրատուրա եւ կլինիկական օրդինատուրա ընդունվելու ժամանակ:

Լավագույն փորձի օրինակներ

1. ԵՊԲՀ-ի Ռազմավարական ծրագիրը եւ տարվող քաղաքականությունը արտահայտում են հետազոտական ոլորտում բուհի հետաքրքրություններն ու հավակնությունները:
2. Բուհում առկա են հետազոտական ավանդույթ և մշակույթ, ինչպես նաեւ՝ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ:
3. Բուհում առկա է հետազոտությունների մեթոդաբանության շարունակական թարմացման և նորացման միտում:
4. Բուհն ունի երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությանն աջակցելու և խրախոսելու քաղաքականություն:
5. Լավ փորձ է կլինիկական մի շարք ամբիոններում հետազոտական աշխատանքում ներդրվող դիագնոստիկ, բուժական նպատակներով նոր տեխնոլոգիաների կիրարկումը ուսանողական խմբերում և դասավանդման գործընթացում:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Հստակեցված չեն լավագույն փորձի փոխանակման, որակավորված մասնագետի ծառայունակության բարձրացման, կարիերայի հեռանկարների, ֆինանսական ապահովման բարելավման մեխանիզմները:
2. Հետազոտական ոլորտում դեռեւս լուծված չեն ճշգրիտ հասցեականությամբ կոնկրետ ուղղություններով ֆինանսական ռեսուրսներն օգտագործելու խնդիրը: Հետազոտական աշխատանքների մի մասը կոնկրետ գործնական ներդրման չի ծառայում:
3. Դեռևս պատշաճ արդյունավետությամբ եւ ծավալով չեն գործում հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու հստակ մեխանիզմներն ու գործիքները:

ՉԱՓԱՆԻՇ 7

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

Մուհն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Հավակնությունները: *Համալսարանը որդեգրել է կրթական ծրագրերի իրակա-նացման համար անհրաժեշտ ժամանակակից ուսումնական միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություն՝ ըստ առաջնահերթությունների և հնարավորությունների:*

Չափորոշիչ.ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Ռազմավարական ծրագրում կարևորված է համալսարանի լսարանային ֆոնդի, շենքային պայմանների, նյութատեխնիկական բազայի, կլինիկաների, գրադարանի և ուսումնական միջավայրի այլ բաղկացուցիչների վերակառուցման ու վերազինման խնդիրները: Ռազմավարական ծրագրում արծածվում է նաև ուսուցման մեթոդների արդիականացման, հեռավար ուսուցման համակարգի ներդրման, ամբիոնները համապատասխան վարժասարքերով և նյութերով համալրելու, ուսումնագիտական լաբորատոր բազայի արդիականացման, ուսումնական գործընթացի, գործավարության համակարգչայնացման անհրաժեշտությունը: Հստակ նշված է նաև հանրակացարանների, ուսումնաարտադրական բազաների, տնտեսական շինությունների, վերանորոգման անհրաժեշտությունը (տե՛ս համալ-սարանի 2006-2010թթ.ռազմավարական ծրագիրը, նպատակ 4, էջ 17):

Այսօր համալսարանը զբաղեցնումէ 88226 քմ տարածք, հիմնական մասնաշենքը բաղկացած է չորս առանձին կառույցներից, որտեղ հիմնականում տեղակայված են տեսական ամբիոնները: Կլինիկական ամբիոնները տեղակայված են հանրապետական նշանակության 29 և համալսարանական 3 կլինիկաներում: Տեսական առարկաների դասախոսություններն անցկացվում են համալսարանի հիմնական մասնաշենքի 12 լսարաններում, որոնք կարող են միաժամանակ տեղավորել 1125 ուսանող: Կլինիկական առարկաների դասախոսություններն անցենկացվում կլինիկաներում՝ հատուկ կահավորած լսարաններում: Համալսարանն ունի նաև լաբորատորիաներ, գրադարան, ընթերցասրահ, մարզադահլիճներ, լողավազան, գազապաստարան, բուժկետ, հասարակական սննդի կետեր, հանրակացարան և ուսումնաարտադրական բազա:

Հաշվետու ժամանակաշրջանում, ռազմավարական ծրագրի համաձայն, կատարվել են որոշակի աշխատանքներ. Ձեռք է բերվել պոլիկլինիկական նոր մասնաշենք («Մանուկ»), վերանորոգվել են ստոմատոլոգիական պոլիկլինիկա-ները: Ժամանակակից սարքավորումներով կահավորվել և շահագործման է հանձնվել «Ռադիոլոգիայի կենտրոնը», հիմնովին վերանորոգվել և կահավորվել է «Մուրացան» համալսարանական կլինիկան և մասնակի՝ թ.1 կլինիկական հիվանդանոցը: Ամբողջովին կանաչապատվել են համալսարանական կլինիկաների տարածքները:

Կառուցվել է տարածաշրջանում նմանը չունեցող, համալսարանի ջեռուցումն ու էլեկտրամատակարարումն ապահովող ջերմաէլեկտրակայան:

Համապատասխան սարքավորումների ձեռքբերման արդյունքում ներդրվել է հեռուստակոնֆերանսների ինստիտուտը: Հիմնադրվել է 2 նոր ամսագիր, տպագրվելեն 150-ից ավել դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ (տեսԵՊԲՀ 3.03.2011թ. գիտխորհրդի թիվ 2 արձանագրությունը, ռեկտորի 2006-2011 թթ գործունեության հաշվետվությունը): Չնայած նրան, որ համալսարանի լսարանային ֆոնդը մի քանի չափանիշներով (օր. 1 ուսանողին ընկնող տարածք) ամբողջապես չի համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1490-Ն որոշման հավելված 6-ում ամրագրված նորմատիվներին, այնուամենայնիվ դասախոսների շրջանում կատարված հարցումները ցույց են տվել, որ ուսումնական միջավայրը, լսարանային և լաբորատոր բազան բավարարում են առարկայական ծրագրերի դասավանդման գործընթացը կազմակերպելու համար: Լսարանային ֆոնդի բարելավման ուղղությամբ վերջին 2 տարիների ընթացքում կատարվել են որոշակի աշխատանքներ. Ամբողջովին վերանորոգվել և կահավորվել է 2 լսարան, կառուցվել է ևս 2 նոր լսարան:

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Յուրաքանչյուր տարվա համար կազմվող ֆինանսների տնօրինման նախահաշվում, ելնելով նախորդ տարվա ընթացքում կատարված ծախսերից, բյուջետային մուտքերից և պետական մարմինների կողմից տրամադրված նախահաշիվներից, կատարվումէ ֆինանսական միջոցների բաշխում համալսարանական տարբեր կառույցների և ծառայությունների միջև:

Ֆինանսական ռեսուրսների բաշխման գործընթացում կարևորվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի ֆինանսական բավարարումը, ինչը որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմով կրթական ծրագրերի ապահովվածության կայունության գրավականներից մեկն է: Այսպես՝ հաշվետու ժամանակահատվածում 2007-2008թթ. Դասախոսների աշխատավարձը բարձրացել է

15-20%-ով: Դրա արդյունքում, եթե 2009թ-ին աշխատավարձերը կազմում էին համալսարանի ընդհանուր ծախսերի 40%-ը, ապա 2011–ին՝ 52%-ը: 2012թ-ի վերջին դասախոսների աշխատավարձը բարձրացվեց ևս 25-30%-ով: Դասախոսական կազմի աշխատավարձերի բաշխումը կատարվում է համաձայն ամբիոնների հաստիքակազմի, դասախոսների տարակարգերի, ուսումնական ծանրաբեռնվածության և վարձատրության մասին կանոնակարգի (տես 19.10.2012թ-ին ռեկտորի թիվ 101-Մ-2 հրամանով հաստատված կանոնակարգը):

Ոչ բավարար է համալսարանի գործունեության այնպիսի ոլորտների ֆինանսավորումը, ինչպիսիք են գրադարանային ծառայությունը (ընդհանուր ծախսերի 0.2%), տեղեկատվական համակարգերը (ընդհանուր ծախսերի 0.1%), լաբորատորիաները (ընդհանուր ծախսերի 0.25%) (տե՛ս համապատասխան տարեթվերի հաշվապահական հաշվեկշիռները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները):

Հարկ է նշել, որ ուսումնական ուղղակի ծախսերի չափաբաժինը (պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատավարձեր, ուսումնական գրականության, գույքի ձեռքբերման, ուսումնական սենյակների կահավորման և վերանորոգման և ուսանողների հետ անմիջապես առընչվող այլ նպատակներով կատարված ծախսեր) ծախսերի ընդհանուր ծավալում (վերջին երեք տարվա կտրվածքով) կազմել է միջինում 88%, ինչը, ֆինանսական միջոցների տնօրինման գործընթացում, վկայում է ուսումնական պրոցեսի բարելավման առաջնահերթության մասին:

Հաշվի առնելով նախորդ տարիներում կատարված ծախսերը, անցկացված հետազոտությունների արդյունքները, 2012թ-ի պլանավորված բյուջեում նախատեսվել է ավելացնել աշխատավարձերի և սոց. Հատկացումների ֆոնդը 10%-ով, դեղորայքի, բուժ. սարքավորումների, գույքի, գրասենյակային և տնտեսական ապրանքների ձեռքբերման միջոցների ֆոնդը՝ 10%-ով, ընթացիկ շին. Վերանորոգման ֆոնդը՝ 15%-ովևայլն (http://ysmu.am/images/stories/-downloads/doc_5.pdf):

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացման ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

ԵՊԲՀ ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջետային և արտաբյուջետային մուտքերի հաշվին:

Պետական բյուջետային մուտքերում հիմնական մաս են կազմում ուսանողական նպաստները, կրթաթոշակները, բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման արդյունքում ստացված ֆինանսական միջոցները, թեմատիկ գիտական ֆինանսավորումը և պետական պատվերի շրջանակներում իրականացվող բուժ ծառայության համար նախատեսված միջոցները (տե՛ս պայմանագրերի օրինակները):

Արտաբյուջետային մուտքերը հիմնականում գոյանում են վճարովի ուսանողների ուսմանվարձավճարների հաշվին (արտաբյուջետային մուտքերի շուրջ 90%-ը): Տարբեր ազգային և միջազգային դրամաշնորհներից ստացվող ֆինանսական միջոցները կազմում են միջինում բյուջեի 1.6% -ը:

Յուրաքանչյուր տարի, ելնելով նախորդ տարվա նախահաշվի բալանսից, տվյալ տարվա մուտքերն ապահովող պայմանագրերից և պետական մարմինների (ՀՀ Պաշտպանության Նախարարություն, ՀՀ գիտությանկոմիտե) կողմից ներկայացված նախահաշիվներից կազմվում է ֆինանսական միջոցների տրամադրման և բաշխման նախահաշիվը, որտեղ իրենց տեղն են գտնում աշխատավարձերը, կրթաթոշակները, լաբորատորիաների և գրադարանի վերազինման ծախսերը, տնտեսական ծախսերը և այլն (տե՛ս ԵՊԲՀ ծախսերի նախահաշիվները): Այս նախահաշիվը ընդհանրացված ձևով տեղադրվում է համալսարանի պաշտոնական կայքում (http://ysmu.am/images/stories/downloads/doc_5.pdf): Այնուհետև յուրաքանչյուր տարի ղեկավար պատվիրատուի կողմից (այս դեպքում ռեկտոր) տրվում է հրաման գնումների կազմակերպման վերաբերյալ: Համալսարանի բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են անհրաժեշտ գույքի, տեխնիկական միջոցների, գիտական հետազոտությունների և ուսումնամեթոդական նյութերի վերաբերյալ դիմում հայտ՝ նշելով նաև դրանց տեխնիկական բնութագրերը: Սա վկայում է այն մասին, որ համալսարանական ստորաբաժանումները մասնակցում են ուսումնական

ռեսուրսների ձեռքբերման գործընթացին: Գնումների գործընթացը կազմակերպվում է 2011թ-ին ստեղծված գնումների բաժնի կողմից՝ համաձայն ՀՀ ազգային ժողովի կողմից 22.12.2010 թ-ն ՀՕ 206-Ն գնումների մասին օրենքի և կառավարության 10.02.2011 թ-ի 168 որոշման: Գնումների գործընթացի թափանցիկությունն ապահովվում է հետևյալ կերպ. Գնումները հիմնականում կատարվում են մրցույթային կարգով, իսկ որոշումները կայացվում են ռեկտորի հրամանով հաստատված առանձին հանձնաժողովների կողմից: Մրցույթում ներկայացված գնառաջարկներն ու ապրանքները ենթարկվում են համապատասխան ոլորտի պատասխանատուի քննությանը, ով և կայացնում է որոշում ստորաբաժանումների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերին նրանց համապա-տասխանության վերաբերյալ:

Յուրաքանչյուր տարվա ավարտին համալսարանի բյուջեի բալանսը հրապարակվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում, ինչով և ապահովվում է համալսարանի կողմից ֆինանսական միջոցների տնօրինման թափանցիկությունը: Ըստ ՀՀ հաշվապահական և հաշվառման օրենքի, յուրաքանչյուր տարի, համալասարանը ենթարկվում է աուդիտի, որի տվյալները հրապարակվում են մամուլում և համալսարանական կայքում:

Պետության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների տնօրինման արդյունավետությունը պարբերաբար ստուգվում է համապատասխան կառույցների (նախագահի աշխատակազմ, տարածքային հարկային տեսչություն, գիտության կոմիտե, կրթության և գիտության նախարարություն, առողջապահության նախարարության գործակալություն) կողմից: Դրամաշնորհային միջոցների կիրառման արդյունավետությունը մշտադիտարկման է ենթարկվում համապատասխան ծրագիրը կոորդինացնող կազմակերպության կողմից:

Այնուամենայնիվ հարկ ենք համարում նշել, որ ֆինանսական միջոցների պլանավորման գործընթացի հիմքում դրված չի առանձին ստորաբաժանումների կարիքների գնահատումը և այն հիմնականում կատարվում է առանց աշխատակիցների կամ ուսանողների ակտիվ մասնակցության: Այսպես. ըստ համալսարանի որակի կենտրոնի կողմից կատարած հարցումների դասախոսների ընդամենը 22%-ն է մասնակցում է ֆինանսական միջոցների պլանավորմանը և ավելի

փոքր մասն է, որ մասնակցում է մասնագիտական ռեսուրսների ընտրության և գնման գործընթացներին (տե՛ս հարցման արդյունքները):

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Համալսարանի ռազմավարական ծրագրում կարևորվում է լսարանային ֆոնդի առկա վիճակի գնահատումը, դրա փուլային վերակառուցման իրականացումը, արդիականացումն ու հետագա ընդլայնումը՝ կրթական ծրագրերին և համակազմի զարգացման խնդիրներին համապատասխան:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել համալսարանի ռեսուրսային բազան ընդլայնելու և կրթական ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

ԵՊԲՀ գրադարանը, որը հիմնադրվել է 1930թ-ին, ընդգրկվել է համահայկական գրադարանային կոնսորցիումին, որի կազմում ունի գրականության էլեկտրոնային բազայի իր էջը (http://armunicat.am:8991//ARMA, http://armunicat.am:8991//ALEPH), ինչը հեշտացրել է գրքերի որոնման, նրաց բովանդակությանը և հեղինակներին ծանոթանալու գործընթացը:

Այսօր ԵՊԲՀ գրադարանում առկա է շուրջ 525000 միավոր գրականություն, վերջին հինգ տարիների ընթացքում ձեռք է բերվել 981 անուն 18735 միավոր գրականություն, որի միայն 6%-ն է օտարալեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) գրականություն (տե՛ս «Հայաստանի գրադարանները աշխատանքների վիճակագրական վերլուծություն» տեղեկագրքերը 2007-2011թթ):

Համալսարանի ընթերցասրահները կարող են միաժամանակ սպասարկել 290 ընթերցող: Ընթերցասրահներից, որոնք աշխատում են 9:00-ից մինչև 20:00-ը, օրեկան օգտվում են միջինում 400 հոգի, ինչը կազմում է ուսանողների շուրջ 10%-ը:

Այնուամենայնիվ համալսարանի կողմից կատարված ներդրումները գրականության ձեռք բերման և գրադարանային ծառայությունների աշխատանքն ապահովելու ուղղությամբ, բարելավման կարիք ունեն, ինչպես նշվեց, բյուջեի

ընդամենը 0.2% -ն է ծախսվում այս նպատակով: Բավարար չէ նաև ամբիոնների անմիջական մասնակցությունը նոր գրականության ձեռք բերման գործում, այն հիմնականում կատարվում է գրադարանի նախաձեռնությամբ: Վերը նշվածի մասին են խոսում նաև ուսման որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից անցկացրած հետազոտության արդյունքները: Չնայած այն փաստին որ բաժանորդագրված ընթերցողների թիվը տարեկան միջինում կազմում է 6200 հոգի (ուսանողների քանակը 5530 է), հարցման ենթարկված ուսանողների 37%-ը նշել է, որ գրադարան հաճախում է հազվադեպ, հանձնարարված գրականությունից օգտվելու նպատակով: Գրադարանային ծառայություններից հաճախ օգտվողների 45%-ը համարում են, որ այնտեղ ներկայացված գրականությունը չի բավարարում իրենց կրթական և տեղեկատվական պահանջները և ժամանակակից չէ: ՈՒսանողների մեծ մասը, ինչպես նաև տեսական ամբիոնների դասախոսների 1/3-ը գտնում է, որ ամբիոնները բավարար ներկայացված չեն գրադարանում:

Համալսարանը բաժանորդագրված է Hinari, UpToDate, Armenia LibGuide էլեկտրոնային ծառայություններին, որոնց միջոցով ուսանողները և բուհի աշխատողները հնարավորություն ունեն մուտք ունենալ 17.000 անուն գրականության բանկ:

2010-2011 ուսումնական տարվանից համալսարանում գործում են ուսանողներին հասանելի տաս ինտերնետային մուտքի կետեր՝ WiFi ինտերնետային ծածկույթ ապահովելով համալսարանի տարածքի մեծ մասում: Պետք է նշել որ համալսարանում առկա 884 համակարգիչներից միայն 10-ն են հասանելի ուսանողներին ազատ օգտագործման համար: Հարցման ենթարկված ուսանողների 65%-ը և դասախոսների՝ 81%-ը նշել է, որ այս կամ այն չափով օգտվում է համալսարանի առցանց ռեսուրսներից:

Չնայած այն փաստին, որ համալսարանի կլինիկական ամբիոնները տեղակայված են սեփական և վարձակալության իրավունքով օգտագործվող, գործող 29 կլինիկական հիվանդանոցներում, և որ այդ ամբիոններում դասավանդում են պրակտիկ բժշկությամբ զբաղվող մասնագետներ, հարցման ենթարկված ուսանողների կեսը նշել են, որ բավարարված չեն գործնական հմտությունների ձևավորմանը նպաստող ուսումնական ռեսուրսներով՝ որպես հիմնական պատճառ

նշելով հիվանդների հետ աշխատանքին տրամադրվող ոչ բավարար ժամանակը:

Տեսական ամբիոններում ոչ բավարար են ներկայացված տեխնիկական ռեսուրսները և գիտալաբորատոր բազան: Վերջինիս մասին է վկայում նաև այն փաստը, որ վերջին հինգ տարիների ընթացքում լաբորատորիաների և տեղեկատվական համակարգերի վերազինմանը տարեկան միջինում հատկացվել է համալսարանի բյուջեի 0.3%-ը:

Կրթության որակի ապահովման կենտրոնի կողմից հարցման ենթարկված դասախոսների մոտ 45%-ը նույնպես նշել է, որ ամբիոններում առկա ռեսուրսային բազան լիովին բավարար չէ առարկայի դասավանդման գործընթացը լիարժեք կազմակերպելու համար (տե՛ս հարցման արդյունքները):

Ուսումնառության ընթացքում ձևավորված պրակտիկ հմտությունները ստուգվում են նաև ավարտական պետական քննության ընթացքում: Հարկ է նշել, որ ավարտական կուրսերի բոլոր ուսանողները դրական միավոր ստանալով անցել են վերոնշյալ փուլը և թույլատրվել ավարտական քննության, այդուհանդերձ հարցվողների գերակշիռ մասը նշել է, որ ուսման ընթացքում ձեռք բերած պրակտիկ հմտություններն ամբողջովին չեն բավարարում աշխատաշուկայի պահանջները, ուստի գործնական հմտությունների պահանջված ցանկն անհրաժեշտ է վերանայել:

Հարկ ենք համարում նշել, որ ԵՊԲՀ ռեսուրսային բազան ընդհանրապես և նրա արդունավետությունը և կիրառելիությունը մասնավորապես չեն ենթարկվում համակարգային և պարբերական գնահատման, չկան այս գործընթացը կարգավորող ընթացակարգեր և կանոնակարգեր:

Չափորոշիչ ե.ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Համալսարանն իր գործառնական նպատակներով իրականացնում է գործավարություն՝ փաստաթղթերի կազմման, ձեւակերպման, պատրաստման, շրջանառման և հաշվառման միջոցով:

Համալսարանի տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կարգավորվում են ԵՊԲՀ ներքին կարգապահական կանոնակարգով, ՀՀ օրենսգրքով և այլ իրավական ակտերով:

Համալսարանում գործում է տեղեկատվության հոսքի երկու ուղի՝ ‘’վերից վար’’ (վարչական օղակներից դեպի ամբիոններ) և ‘’ներքևից վերև’’ (ամբիոններից մինչև ռեկտոր): Վերից վար տեղեկատվությունը հաղորդվում է շրջաբերականների, որոշումների, հրամանների միջոցով և ապահովում է կապը կառավարման խորհրդի, մեթոդական հանձնաժողովների, ուսումնամեթոդական վարչության, դեկանատների և ամբիոնների միջև: Ներքևից վերև տեղեկատվությունը հիմնականում փոխանցվում է հաշվետվությունների տեսքով:

Տեղեկատվությունը և գործավարությունը համալսարանում կարգավորվում է ընդհանուր բաժնի կողմից, որն իրականացնում է համալսարանի հասցեով ստացվող նամակների եւ այլ գրությունների, փաստաթղթերի ընդունում, գրանցում, հաշվառումու բաշխում դրանց կատարողներին, համալսարանի անունից ուղարկվող նամակների եւ այլ գրագրությունների, փաստաթղթերի գրանցում եւ առաքում, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջեւ իրականացվող փաստաթղթաշրջանառության գրանցում, փաստաթղթերի կատարման ժամկետների վերահսկողություն, սահմանված կարգով բաժնի գործերի հանձնում համալսարանի արխիվ, գործավարության ընթացքում փաստաթղթերի պահպանման եւ օգտագործման ապահովում, համալսարանի կառուցվածքային ստորաբա-ժանումներում փաստաթղթերի ճիշտ ձեւակերպման եւ վարման մեթոդական օգնություն (տե՛ս ‘’Ներքին կարգապահական կանոնակարգը’’, հաստատված ԵՊԲՀ ռեկտորի 08.01.2008 թվականի թիվ 01-Մ2 հրամանով):

Անհրաժեշտ է նշել, որ համալսարանում դեռևս չի գործում տարբեր ստորաբաժանումների կապն ապահովող փաստաթղթաշրջանառությունը կարգավորող էլեկտրոնային միասնական համակարգը: Սակայն այդ ուղղությամբ աշխատանքներն արդեն ավարտման փուլում են:

Համալսարանի արտաքին տեղեկատվությունը կարգավորում է հանրության հետ կապերի բաժինը, որի հսկողության տակ է գտնվում ինտերնետային կայքում, թերթերում, ամսագրերում և տեղեկագրերում տպագրվող տեղեկատվությունը:

Չափորոշիչ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Համալսարանի անվտանգությունն իրականացվում է օրենսդրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով՝ անվտանգության բաժնի կողմից: Անվտանգության բաժինն իր գործունեությամբ ղեկավարվում է օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, համալսարանի այլ կանոններով, ռեկտորի հրամաններով եւ հրահանգներով (տե՛ս կանոնակարգերը):

Համալսարանի անվտանգությունն իր գործառույթներում ներառում է. - համալսարանի, համալսարանական շենքերի, շինությունների, մասնաշենքերի, հիվանդանոցային կլինիկական համալիրների, պոլիկլինիկաների, դրամարկղերի, էներգակենտրոնի, դրանց հարող բակերի եւ տարածքների, ամբողջ գույքի ապահովման կազմակերպումը, - համալսարանում ուսանողների անվտանգության ապահովումը, - պարտականությունների իրականացման ընթացքում համալսարանի ղեկավարության եւ աշխատողների անվտանգության ապահովումը:

Հակահրդեհային անվտանգությունը և արտակարգ իրավիճակների դեպքում անձնակազմի ապահովությունը կազմակերպվում է համաձայն ՀՀ օրենսդրության:

Համալսարանի անվտանգությունն իրականացվում է անցակետերի եւ շրջիկ ծառայության միջոցով (տե՛ս «Ներքին կարգապահական կանոնակարգը» հաստատված ԵՊԲՀ ռեկտորի 08.01.2008 թվականի թիվ 01-Մ2 հրամանով):

Համալսարանն իր ռազմավարական ծրագրում կարևորում է նաև անձնակազմի առողջության պահպանման և բուժօգնության ապահովման հարցերը (տե՛ս ռազմավարական ծրագիրը, էջ 16, կցված է):

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների շահերը միշտ չէ որ պահպանվում են. ոչ բոլոր մասնաշենքերն են օժտված վերելակներով, մուտքերը կահավորված չեն շարժասայլակների համար նախատեսված հարթակներով:

Չափորոշիչ Է.ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

2011 թ-ին ստեղծված կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից DIUS ծրագրի շրջանակներում մշակվել է ուսումնական ռեսուրսների և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության, կիրառելիության, հասանելիության գնահատմանն ուղղված գործիքակազմ և ընթացակարգ, համաձայն որի պետք է կատարվի ֆինանսական և ուսումնական ռեսուրսների պլանավորման, ձեռքբերման, կիրառման և սպասարկման բազմակողմանի մշտադիտարկում՝ հիմնված հարցումների արդյունքների, կարիքների ուսումնասիրման, համապատասխան ստորաբաժանումների հաշվետվությունների ուսումնասիրման, ստուգումների և փորձագիտական մշտադիտարկումների արդյունքների մանրամասն ուսումնասիրման վրա: Արդեն իսկ վերոնշյալ գործիքներով հարցման են ենթարկվել 130 ուսանողներ և 92 դասախոսներ: Հարցման արդյունքները մշակվել և ներկայումս հիմք են ծառայում ստեղծված գործիքակազմի բարելավման համար (տե՛ս գործիքակազմը և ընթացակարգը): Հարցումների արդյունքները ընդհանրացված ներկայացված են ինքնավերլուծության զեկույցի սույն բաժնի «դ» կետում:

Համալսարանի պրակտիկայի բաժնի կողմից պարբերաբար անցկացվող «Դասախոսն ուսանողի աչքերով» հարցումների համար վերամշակված հարցաթերթերում նույնպես առկա են հարցեր ուղղված դասախոսությունների ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառմանը, ամբիոնների գրադարանում ներկայացված լինելուն և գործնական պարապմունքների ընթացքում պրակտիկ հմտությունների ձևավորմանը (տե՛ս հարցաթերթերը):

Համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» 02.06.2000 թ-ի Ն-102 հրամանի յուրաքանչյուր տարի կատարվում է ուսումնական ռեսուրսների վերագույքագրում: Պարբերաբար, ստորաբաժանումների զեկուցագրերի հիման վրա, կազմվում են հանձնաժողովներ, որոնք քննության են ենթարկում անսարք կամ անպիտան վիճակում գտնվող ուսումնական նյութական ռեսուրսները:

Սակայն ուսումնական ռեսուրսների արդյունավետության, կիրառելիության և հասանելիության գնահատմանն ուղղված ընթացակարգերը դեռ հաստատված չեն և այդպիսի գնահատումներն ու ստուգումները կրում են ոչ պարբերական բնույթ

Լավագույն փորձի օրինակներ

1. Կատարվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ. վերանորոգվել են կլինիկական հիվանդանոցները, կառուցվել է ռադիոլոգիայի նոր կենտրոնը, կանաչապատվել են համալսարանի տարածքները, վերանորոգվել և կահավորվել են 5 լսարաններ:
2. Տպագրվել է 150 անուն ուսումնամեթոդական գրականություն և ձեռք է բերվել 981անուն 187358 միավոր գրականություն, հրատարակվել են 2 գիտամեթոդական ամսագրեր:
3. 2 անգամ բարձրացվել է դասախոսական կազմի աշխատավարձը:
4. Համալսարանի բյուջեի բալանսը հրապարակվում է մամուլում և համալսարանի կայքում:
5. Գնումների գործընթացն իրականացվում է մրցույթային կարգով:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Ֆինանսական միջոցների պլանավորման հիմքում դրված չի առանձին ստորաբաժանումների կարիքների գնահատման գործընթացը: Հաստատված չէ ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականությունը:
2. Դասախոսների և ուսանողների փոքր մասն է մասնակցում ֆինանսական միջոցների պլանավորմանը:
3. Ցածր է ընթերցասրահներից օգտվող ուսանողների քանակը:
4. Բավարար չէ գրադարանային և տեղեկատվական համակարգերի և լաբորատորիաների վրա ծախսված գումարը:
5. Առկա չի տարբեր ստորաբաժանումների փաստաթղթաշրջանառությունն իրականացնող էլեկտրոնային միասնական համակարգ:
6. Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար չկան շարժասայլակների համար նախատեսված հարթակներ:

Չ Ա Փ Ա Ն Ի Շ 8

Հասարակական պատասխանատվություն

ՄՈՒՀ-ն իր տրամադրված կրթության, իրականացրած հետազոտության օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը եւ հասարակությունը:

Հավակնությունները: *Ապահովել համալսարանի տեղեկատվական միջոցների համակողմանի զարգացումը եւ մատչելիությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառելիությունը գործունեության բոլոր բնագավառներում և բարձրացնել դրանց օգտագործման արդյունավետությունը (տե՛ս2006-2010թթ ռազմավարական ծրագիրը, էջ 6-27):*

Չափորոշիչ. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ԵՊԲՀ-ում հաշվետու ժամանակաշրջանում մշակվել եւ գործել է հաշվետվողականության սահմանված կարգ, որի հիմքում ընկած է Համալսարանի կառավարման միասնական տեղեկատվական բազայի ստեղծումն ըստ առանձին բնագավառների տվյալների: Ըստ այդմ, պայմանականորեն (քանզի ժամանակակից մեդիա դաշտի առկայության պայմաններում հատուկ զատորոշումը գրեթե անհնարին է), բուհում գործող տեղեկատվական ոլորտը կարելի է բաժանել ներքին եւ հանրային տեղեկատվության, որոնց հիմնական նպատակը կրթության որակի ապահովման գործընթացների պահանջներին հարմարվածությունն է: Ներքին տեղեկատվության շրջանակում գործ ել են հետեւյալ մեխանիզմները.

ա) ուսանողների ընթացիկ եւ կիսամյակային առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության պլանաչափ հավաքում, մշակում և ներկայացում,

բ) միջանկյալ քննաշրջանային եւ ավարտական արդյունքների վերլուծություն և հաշվետվություն,

գ) ուսանողական համակազմի վերաբերյալ տվյալների պարբերական թարմացում, վերլուծություն և ներկայացում (տե՛ս ֆակուլտետային և համալսարանական գիտական խորհուրդների հաշվետվությունները):

Հանրային տեղեկատվության ոլորտում կիրառվել են հետեւյալ հիմնական աղբյուրները.

- մասնագիտությունների, ընդունելության չափաքանակների եւ պայմանների ամենամյա հրապարակումներ
- հրատարակվող կատալոգներ եւ այլ գովազդային/տեղեկատվական նյութեր
- համալսարանի լրատվական պարբերականներ (ամսաթերթ, հանդես) - ավելի սակավ (եզակի)՝ տարբեր ուղեցույցներ եւ դասընթացների տեղեկագրեր - համալսարանականվեբկայքեր: Նշյալ շրջանակում առավել գործուն եւ արդյունավետ են հետեւյալ աղբյուրները.

1. դիմորդ
2. ֆակուլտետ
3. ամբիոններ
4. բժշկություն
5. ուսանողական խորհրդարան
6. իրավական փոստաթղթեր
7. հաշվետություններ (ամբիոնի, ռեկտորի, պրոռեկտորների, ֆակուլտետների դեկանների եւ այլ օղակների երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ գործունեության մասին):

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը եւ հասանելիությունը հասարակությանը:

Որոշակի աշխատանք է տարված համալսարանի կրթական, գիտահետազոտական գործունեության թափանցիկության, հասարակությանը (ներքին եւ արտաքին շահակիցներին) հասանելիության ապահովման և սահմանված

պահանջներին (տե՛ս ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը) համապատասխանացնելու ուղղությամբ:

Ասվածի խոսուն վկայությունն են համալսարանի պաշտոնական կայքի «Տեղեկատվություն» բաժնում ընդգրկված ներքոհիշյալ անվանակարգերը.

- Դրամաշնորհներ
- Բաժանորդագրություն
- Առցանց ռեսուրսներ
- Գիտա-բժշկական ամսագրեր
- Անկախ աուդիտոր
- Թափուր աշխատատեղեր
- Գնումներ
- Ձեր հարցը ԵՊԲՀ ռեկտորին
- Կայքի քարտեզ

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

ՄՈՒՀ-ում գործում են հետադարձ կապի իրականացման երեք հիմնական ձև՝ էլեկտրոնային, բանավոր խոսք և գրավոր:

1. Համալսարանի վեբ-կայքում առկա է և գործում է «Հետադարձ կապ» պատուհանը, որի օգնությամբ ցանկացողը կարող է հաղորդագրություն թողնել՝ նշելով իր էլեկտրոնային հասցեն և ստանալ պատասխան: Կայքում անընդհատ գործում է «Հարց և պատասխան» պատուհանը, որի օգնությամբ բոլորը կարող են տեսնել համընդհանուր նշանակություն ունեցող հարցերը և դրանց տրված պատասխանները: Հարկ է նշել, որ առանձին գործող «Հարց ռեկտորին» պատուհանը հնարավորություն է ընձեռում անմիջապես հարցն ուղղել համալսարանի ռեկտորին: Վերլուծելով կայքում տեղադրված հաշվետու ժամանակահատվածի վերջին ինֆորմացիան՝ կարելի է եզրակացնել, որ այդ հարցերը սակավաթիվ են, հաս-ցեատերերն էլ լոկ երկուսնեն՝ 4 հարց ուղղված էր ուսումնական գծով պրոռեկտորին և մեկը՝ գիտական գծով պրոռեկտորին:

2. Համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները շաբաթվա ընթացքում ունեն ընդունելության համար նախատեսված ֆիքսված օրեր: Սակայն խնդիրն այն է, որ բացի պաշտոնական այցերից, հանդիպումների արձանագրությունները չենկազմվում և հասկանալ, թե ինչքանով են էֆեկտիվ այդ հանդիպումները դժվար է: Այսինքն, առկա է հասարակության հետ կապի ձևավորմանը նպաստող մեխանիզմ, սակայն բացակայում է դրա հետադարձ կապի էֆեկտիվությունը գնահատող մեխանիզմը:

3. Ինչ վերաբերում է գրավոր դիմումներին, ապա դրանց հետադար ձկապի գնահատումը վերահսկելի է: Համալսարանի ռեկտորի պարագայում բոլոր դիմումներն ընդունվում են ընդհանուր բաժնի կողմից, իսկ այլ օղակների դեպքում՝ համապատասխան քարտուղարությունների կողմից: Սակայն այստեղ ևս հստակեսված չեն ընթացակարգերը, թե, օրինակ, քանի օրերի ընթացքում քաղաքացին պետք է ստանա պատասխան և այլն:

ԲՈՒՀ-ի որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից հետադարձ կապի միջոցով գնահատվել է համալսարանի հասարակական վարկանիշը: Ըստ այդ մեթոդի օգտագործված չափորոշիչները սահմանում են, որ ԲՈՒՀ-ը պետք է ունենա հաշվետվողականության սահմանված կարգ, ապահովի ընթացակագերի և գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, ԲՈՒՀ-ում պետք է գործեն հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի և հասարակությանը արժեքների փոխանցման կայուն մեխանիզմներ: Որակի կենտրոնի կողմից կատարած հետազոտության արդյունքում բացահայտվել են այն հիմնական գործոնները, որոնց հետագա բարելավումը կնպաստի ԲՈՒՀ-ի հասարակական վարկանիշի բարձրացմանը (տես որակի կենտրոնի կատարած հետազոտությունը):

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները գործում են, սակայն բացակայում են հետադարձ կապի ապահովմանը նպաստող հստակ ընթացակարգերը:

Չափորաշիչ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

ԵՊԲՀ-ում առկա են մի շարք մեխանիզմներ, որոնց միջոցով պարբերաբար իրականացվում է մասնագիտական և ոչ մասնագիտական ինֆորմացիայի փոխանցում հասարակությանը: Այսպես, հասարակությանը տեղեկատվություն հաղորդող ԵՊԲՀ հիմնական գործիքներն են՝ բուհի կայքը (www.ysmu.am) և երկու պաշտոնաթերթերը («Ապագա Բժիշկ» և«Medicus»): Վերջինները ԲՈՒՀ-ի ներքին կյանքը լուսաբանող, ԲՈՒՀ-ում առկա խնդիրները վերհանող և դրանց վերաբերյալ որոշակի վերլուծություն պարունակող տեղեկատվական միջոցներ են: Տեղեկատվությունն այստեղ հիմնականում ոչ մասնագիտական է և հասանելի բոլորին:

ԲՈՒՀ-ը պարբերաբար իրականացնում է մասնագիտական լուսավորչական բնույթի աշխատանքներ՝ հասարակության տարբեր թիրախային խմբերում: Դրանցից է ուսանողական խորհրդարանի կողմից նախաձեռնած ավանդական դարձած<<առողջ ապրելակերպ>> ծրագիրը, որի միջոցով հատկապես դպրոցահասակների շրջանում թե' անմիջական հանդիպումների ու դասընթացների, թե' տպագրած գրքույկների միջոցով իրականացվում է բժշկական կարևոր և արդիական հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների փոխանցում: Տարբեր ձևաչափերով լուսավորչական ծրագրեր են կազմակերպվում նաև ՀՀ սահմանամերձ շրջանների բնակիչների շրջանում:

ԵՊԲՀ տարբեր ամբիոնների առանձին աշխատակիցներ՝ որպես նեղ մասնագիտական բնագավառի լավագույն փորձագետներ, պարբերաբար հյուրընկալվում են տարբեր առողջապահական հեռուստա և ռադիոհաղորդաշարներում, հաճախ համագործակցում են նրանց հետ՝ փոխանցելով արդիական բժշկական խնդիրների շուրջ մասնագիտական տեսանկյունից ճիշտ և հասարակության լայն շրջանակներին հետաքրքրող հասանելի տեղեկատվություն: Չնայած վերոնշյալ հարցում ԲՈՒՀ-ում առկա չէ հատուկ քաղաքականություն, այնուհանդերձ, ԲՈՒՀ-ի դասախոսներից շատերը մասնակցում են այդ գործընթացին կամավոր սկզբունքներով:

Գիտական բնագավառում ևս ԲՈՒՀ-ում առկա են գիտելիքների փոխանցման գործուն մեխանիզմներ: Այսպես, ԵՊԲՀ-ում պարբերաբար կազմակերպվում են

միջազգային գիտական կոնֆերանսներ, որտեղ համալսարանական լայն հանրությունը հնարավորություն է ունենում ծանոթանալ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան առաջատար գիտնականների բժշկական ոլորտում կատարածհետազոտություններին: Տարեկան չորս անգամ հրատարակվում են «Բժշկություն, գիտություն և կրթություն» և «Նորհայկականբժշկականհանդես» գիտական հանդեսները, ինչը ևս ուղղված է մասնագիտական գիտական և կրթական բնագավառներում արդի տեղեկատվության տարածմանը:

Լավագույնփորձիօրինակներ

1. Համալսարանում զգալի աշխատանք է տարվել կրթության ևգիտության հետազոտության վերաբերյալ եւ հասարակությանը հաշվետու լինելու ուղղությամբ:
2. ԵՊԲՀ-ում հաշվետվողականության սահմանված կարգում առավել նպատակամետ եւ արդյունավետ գործիքներ են.
    - համալսարանական վեբկայքերը,
    - տարբեր օղակների կողմից իրենց գործունեության մասին պարբերաբար տրվող հաշվետվությունները,
    - բուհի կողմից հրատարակվող հասարակական, ուսումնամեթոդական եւ գիտական գործունեությունն արտացոլող ամսագրերն ու թերթերը,
    - հասարակության հետ հետադարձ կապի ձևավորմանն ուղղված հարցուպատասխանի, բանավիճային ակումբների, հարցումների կազմակերպումը, ռադիո և հեռուստատեսային ելույթները:

Ոչայնքանլավփորձիօրինակներ

1. Դեռևս լիակատար չի ձևավորվել և իրականացվում խնդրո առարկայի շրջանակում մշակույթ:

2. Համալսարանում դեռևս չի գործում օգտագործված ռեսուրսներին վերաբերող հստակ և մետաանալիզով հիմնավորված հաշվետվողականություն:
3. Թույլ է գործում հետադարձ կապի ապահովման մեխանիզմը (ըստ երևույթին սրա հիմնական պատճառը դիմող կողմի՝ հասարակության տարբեր շերտերի, այդ թվում և ուսանողության, որոշակի անվստահությունն է հարցադրումներին լիաժեք անդրադարձ ստանալու հանդեպ):
4. Մշակված և ավարտուն տեսքի չեն բերված տարբեր ուղեցույցերը (օրինակ 1-ին կուրսեցու, ավարտական կուրսի ուսանողի, դասախոսի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ):

ՉԱՓԱՆԻՇ 9

Արտաքին կապերը եվ միջազգայնացումը

Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Հավակնությունները: *Համալսարանը ձգտում է ընդլայնել Հայաստանի և արտասահմանյան առաջատար բուհերի հետ համագործակցության առկա փորձը, ակտիվացնել մասնակցությունը եվրոպական համալսարանների ընկերակցության, տեղական և միջազգային միջբուհական կազմակերպությունների ծրագրերում, զարգացնել ուսումնառության արդյունքների փոխճանաչման և կրեդիտների փոխանցման մեխանիզմները՝ նպաստելով ուսանողների, դասախոսների միջբուհական ակադեմիական տեղաշարժին և ԵՊԲՀ-ի միջազգային վարկանիշի ամրապնդմանը:*

Չափորոշիչ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում են արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Արտաքին կապերի համակողմանի զարգացումը և համալսարանի գործունեության միջազգայնացումը ԵՊԲՀ-ի զարգացման գերակա ուղղություններից են և համալսարանի ռազմավարական ծրագրերում հստակ արտահայտված է այդ գործընթացների բարելավմանը միտված քաղաքականությունը: Համաձայն համալսարանի ռազմավարական ծրագրի (տե՛ս ԵՊԲՀ 2006-2010թթ. Ռազմավարական ծրագիրը, էջ 24-26, կցվում է), համալսարանը նպատակադրվել է.

- ընդլայնել համագործակցությունը Հայաստանի և արտասահմանյան բուհերի հետ,
- նպաստել ուսանողների և դասախոսների միջբուհական ակադեմիկան տեղաշարժին,

- ապահովել արտերկրի փորձառու մասնագետների մասնակցությունը Համալսարանի կրթական, գիտական ծրագրերի մշակման և ներդրման գործում,
- անցկացնել ուսումնական ծրագրերի հավատարմագրում միջազգային չափորոշիչներով և ստանալ միջազգային փորձագիտական գնահատում և ճանաչում:

Համալսարանի գիտական խորհուրդը պարբերաբար անդրադառնում է համալսարանի արտաքին կապերին և միջազգայնացմանը վերաբերող հարցերին: Դրանք կազմում են համալսարանի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների բաղկացուցիչ մասը: Միջազգային կապերի գծով պրոռեկտորը պարբերաբար հաշվետվությամբ հանդես է գալիս Համալսարանի գիտական խորհրդում, որտեղ ներկայացնում է կատարված աշխատանքները և առաջիկա պլանները: Համալսարանի միջազգայնացման հետ առընչվող հարցերը ընդգրկված են նաև ուսումնամեթոդական վարչության աշխատանքային պլաններում, վարչության պետի և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվություններում:

Համալսարանի վեբ կայքը հասանելի է ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Վեբ-կայքում առանձին տեղ է հատկացված միջազգային համագործակցության, փոխանակային ծրագրերին, օտարերկրյա ուսանողների ընդունելության պայմաններին:

Չափորոշիչ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը համակարգում է Միջազգային վարչությունը: Վարչության ղեկավարը իպաշտոնե միջազգային կապերի գծով պրոռեկտորն է: Վարչության կազմում ընգրկված են Միջազգային համագործակցության և Օտարերկրյա ուսանողների հետ աշխատանքների բաժինները: Միջազգային վարչությունը վերահսկում է նաև

Համալսարանի հանրակացարանների գործունեությունը, որտեղ հիմնականում բնակվում են արտասահմանցի ուսանողներ: Վարչությանհիմնականխնդիրներնեն .

- ապահովել համալսարանի համագործակցությունն այլ ուսումնական հաստատությունների, այդ թվում օտարերկրյա բուհերի հետ,
- կազմակերպել օտարերկրյա քաղաքացիների ներգրավումը բուհական, հետբուհական և նախապատրաստական ուսուցման համակարգերում,
- կազմակերպել Համալսարանի ներկայացուցչությունների գործունեությունը օտարերկրյա պետություններում՝ Համալսարանի, համալսարանում ընդունելության և ուսուցման, գործող կարգերի մասին տեղեկատվություն տարածելու նպատակով,
- ուսումնասիրել օտարերկրացի ուսանողների երկրներում բարձրագույն բժշկական կրթությանը վերաբերվող օրենսդրության պահանջները օտարերկրացիների ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով,
- համակարգել համալսարանի որակավորման ճանաչման գործընթացները օտարերկրյա պետություններում, իրականացնել մարկետինգ՝ բժշկական կրթության բնագավառում,
- աջակցել օտարերկրյա ուսանողներին ՀՀ մուտքի արտոնագրեր և կացության կարգավիճակ ստանալու հարցում և այլն (տե՛ս վարչության կանոնակարգը):

Համալսարանի ուսումնամեթոդական վարչության կազմում են Օտարերկրացիների ուսուցման դեկանատը և Նախապատրաստական բաժինը: Օտարերկրացիների ուսուցման դեկանատն իրականացնում է օտարերկրացի ուսանողների ուսուցման հետ կապված ուսումնամեթոդական, գիտական, կազմակերպչական և այլ գործունեություն, համակարգում է ամբիոնների և ուսանողների հետ տարվող ամենօրյա աշխատանքները:

Նախապատրաստական բաժինը կազմակերպում է օտարերկրացի այն ուսանողների ուսուցումը, որոնց լեզվական և բնագիտական առարկաների իմացությունը բավարար չէ մասնագիտական առարկաների ուսումնասիրման համար: Նախապատրաստական բաժնում դասավանդվում են լեզուներ (անգլերեն, հայերեն, ռուսերեն) և հիմնարար առարկաներ՝ ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն:

Համալսարանի հետբուհական և շարունակական կրթության բաժինը կազմակերպում է այն օտարերկրացիների ուսուցումը, որոնք ցանկանում են մասնագիտանալ բժշկական և դեղագիտական տարբեր մասնագիտացումներով:

Համալսարանում 2012 -2013 ուստարում բուհական և հետբուհական ուսուցման ծրագրերով սովորում են 28 երկրների 1338 ուսանողներ:

Հայաստանի և օտարերկրյա ուսանողների տեղափոխությունները ԵՊԲՀ և ԵՊԲՀ-ից այլ բուհեր համակարգում է Համալսարանի ուսումնամեթոդական վարչությունը:

Միջազգային վարչության աշխատանքների տարեկան պլանավորումը կազմում է ԵՊԲՀ-ի միջնաժամկետ պլանավորման բաղկացուցիչ մաս: Այն կազմվում է համալսարանի ռեկտորի և վարչությանպետի (պրոռեկտորի) կողմից, ով էլ անմիջականորեն ղեկավարում և հսկում է պլանավորվածի իրականացումը: Ընթացիկ մշտադիտարկում է կատարում համալսարանի ռեկտորը, հիմնվելով տեղեկատվության տարբեր աղբյուրների վրա: Այդ թվում՝ հանդիպումներ ուսանողների հետ, ուսանողներից և նրանց ծնողներից ստացվող նամակներ, դեսպանություններից և Համալսարանի օտարերկրյա ներկայացուցչությունների կողմից տրամադրվող տեղեկություններ և այլն: Սակայն համալսարանում դեռևս չկան արտաքին կապերի արդյունավետության և միջազգայնացնան մակարդակի գնահատման համար մշակված հստակ չափանիշներ:

Կատարված աշխատանքների արդյունավետության վերաբերյալ համալսարանի միջազգային կապերի գծով պրոռեկտորը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում համալսարանի գիտական խորհրդին, որն էլ գնահատում է աշխատանքների արդյունավետությունը և տալիս նոր հանձնարարականներ (տե՛ս միջազգային կապերի գծով պրոռեկտորի հաշվետվությունը, 2012թ.-ի ընթացքում համալսարանի միջազգային համագործակցության բնագավառի ռազմավարական ծրագրերը): Օտարերկացիների ուսուցման հետ կապված հարցերն ընդգրկվում են նաև Համալսարանիռեկտորին ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հաշվետվություններում:

Չափորոշիչ գ. ՄՈՒՀ-ը արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանը համագործակցում է արտերկրյա գործընկերների և բուհի աշխարհասփյուռ շրջանավարտների հետ՝ իրականացնելով մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ առավել արդիական և բովանդակալից դարձնելով ուսումնական նյութերը, իրազեկելով միջազգային կարևորություն ունեցող բժշկական և առողջապահական խնդիրների մասին վեհաժողովների, սեմինարների և վարպետաց դասերի միջոցով:

ԵՊԲՀ-ն բարձրագույն բժշկական կրթության և առողջապահության բնագավառներում համագործակցության սերտ կապեր է հաստատել տարբեր երկրների բժշկական համալսարանների, առողջապահական և միջազգային կազմակերպությունների հետ, կնքել և վերակնքել է համագործակցության տարբեր համաձայնագրեր ԱՊՀ-ի, Եվրոպայի, Միջին Ասիայի և ԱՄՆ-ի հեղինակավոր համալսարանների հետ: Դրանք են.

- Բեռլինի Շարիտե բժշկական համալսարանը, Գերմանիա,
- Կլոդ Բեռնար համալսարանը, Լիոն 1, Ֆրանսիա,
- Բոսթոնի բժշկության դպրոցը, ԱՄՆ,
- Կոլումբիայի համալսարանը, Բժիշկների և վիրաբույժների դպրոցը, ԱՄՆ,
- Ջորջիայի նյարդավիրաբուժական քոլեջը, Մերսեր համալսարանի բժշկության դպրոցը, ԱՄՆ,
- Բաց բժշկական ինստիտուտը (ամերիկյան-ավստրիական ծրագիր),
- Համատեղ ծրագրերի իրականացում Լյուբեկի համալսարանի /Բորստելի գիտահետազոտական կենտրոնի (Գերմանիա), Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի հետ,
- Խարկովի դեղագիտական ազգային համալսարանը, Ուկրաինա,
- Կանզասի համալսարանի բժշկական կենտրոնը, ԱՄՆ,
- Ալեքսանդրիայի համալսարանի բժշկության ֆակուլտետը, Եգիպտոս,
- Կամերինոյի համալսարանը, Իտալիա,
- Ստավրոպոլի պետական բժշկական ակադեմիան, Ռուսաստան,

- Դեյվիդ Գեֆենի անվան բժշկության դպրոցը Կոլումբիայի համալսարանում, Լոս Անջելես, ԱՄՆ,
- Դյուսելդորֆի համալսարանական կլինիկան, Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի համալսարան,
- Ռիգայի Ստռադինս համալսարանը,
- Ռենե Դեկարտի անվան համալսարանը, Փարիզ 5, Ֆրանսիա,
- Բրյուսելի բաց համալսարանը, Բելգիա

ԵՊԲՀ-ն վերոհիշյալ բուհերի հետ համագործակցում է հետևյալ բնագավառներում՝

ա)գիտաշխատողների փոխանակում

բ) ուսանողների փոխանակում

գ) հրատարակությունների փոխանակում

դ) համատեղ բուժական նախագծերի կատարում

ե) համատեղ կոնֆերանսների անցկացում (տե՛ս վերոհիշյալ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը):

Հատկապեսվերջին տարիներին հաստատվել են ուսանողների և աշխատակիցների բազմաթիվ փոխանակային ծրագրեր, որոնց արդյունքում համալսարանի ուսանողները և կլինիկական օրդինատորները կարճաժամկետ պրակտիկա են անցնում արտերկրյա առաջատար կլինիկաներում և բժշկական հաստատություններում: Այդ բժշկական կրթօջախներից և հաստատություններից են.

- Հայդելբերգի համալսարանական կլինիկան, Գերմանիա
- “Ernst von Bergmann” կլինիկական, Պոտսդամ, Գերմանիա
- Կլիվլենդ կլինիկա հիմնադրամը:

Փոխանակային ծրագրերի շրջանակում համալսարանը համագործակցում է նաև հետևյալ կազմակերպությունների հետ.

- “Դեպի Հայք” հիմնադրամ
- Ատամնաբույժ ուսանողների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա
- Դեղագետ ուսանողների միջազգային ֆեդերացիա

Եվրոպայի բժիշկ ուսանողների ասոցիացիա (տե՛ս պայմանագրերը, վեբ–կայքը. http://www.ysmu.am/am/international-arm/exchange-programs-arm)

2007-2012 թթ. ընթացքում Եվրոպական և ԱՄՆ տարբեր կլինիկաներում համալսարանական համագործակցության շրջանակներում վերապատրաստվել են 40-ից ավել բժիշկներ: Նույն ժամանակահատվածում Ավստրայի Զալցբուրգյան սեմինարներին մասնակցել են 80-ից ավել դասախոսներ, բժիշկներ, օրդինատորներ: 2000թ.-ից ԵՊԲՀ-ն անդամակցում է միջազգային մի շարք կազմակերպությունների: Դրանցից են՝

- Համալսարանների միջազգային ասոցիացիան,
- Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիան՝ որպես Եվրոպայում բժշկական կրթության ասոցիացիայի անդամ,
- Եվրոպայում ատամնաբուժական կրթության ասոցացիան,
- Ատամնաբույժ ուսանողների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան,
- Դեղագետ ուսանողների միջազգային ֆեդերացիան,
- Եվրոպայի բժիշկ ուսանողների ասոցիացիան,
- Համաշխարհային համալսարանների հեռահար ուսուցման ասոցիացիան,
- Ատամնաբույժ ուսանողների ասոցիացիաների միջազգային ֆեդերացիան:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ԵՊԲՀ-ն ճանաչում է որպես ՀՀ միակ բժշկական բուհը, որը ներառված է «Բժշկական բուհերի համաշխարհային հաշվեցուցակում» (World Directory of Medical Schools):

ԵՊԲՀ-ն ընդգրկված է նաև միջազգային գիտակրթական տարբեր, այդ թվում՝ DIUSAS, PIQA, Erasmus-Mundus և Համաշխարհային Բանկի ծրագրերում (տե՛ս պայմանագրերը):

Համալսարանն ունի իր ներկայացուցչությունները Ռուսաստանի Դաշնությունում, Հնդկաստանում, Շրի Լանկայում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Նեպալում, որոնք տվյալ երկրների համապատասխան կառույցներին և քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկություններ են տրամադրում ԵՊԲՀ-ի վերաբերյալ, ինչպես նաև օտարերկրացիների ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով ուսումնասիրում են տվյալ երկրներում բարձրագույն բժշկական կրթությանը վերաբերվող օրենսդրության պահանջները (տե՛ս վեբ-կայքը. http://www.ysmu.am/am/international-arm/foreign-representatives-arm):

Համալսարանի գիտական, գիտատեղեկատվական հանդեսների (<<The New Armenian Medical Journal>>, <<Բժշկություն, գիտություն և կրթություն>>) բոլոր համարները պարտադիր կերպով ուղարկվում են մի շարք երկրների գրադարաններին (համաձայն ԲՈՀ-ի ցուցակի):

Չափորոշիչ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Համալսարանում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ուսանողները և դասախոսները կատարելագործեն իրենց օտար լեզուների իմացության մակարդակը:

Օտար լեզուների դասավանդումն ընգրկված է բոլոր կրթական ծրագրերում (տե'ս կրթական ծրագրերի ուսումնական պլանները): Սակայն օտարլեզուներիուսուցմանը հատկացված ժամաքանակը բավարար չէ լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար: Շրջանավարտների օտար լեզուների իմացությունը հաշվի է առնվում կլինիկական օրդինատուրայի նասպիրանտուրայի ընդունելության ժամանակ:

Համալսարանում նոր դասախոսների ընտրությունն իրականացվում է հաշվի առնելով նաև օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակը:

Համալսարանը պայմաններ է ստեղծել դասախոսների անգլերեն լեզվի իմացության շարունակական կատարելագործման համար: Այդ նպատակով համալսարանի օտար լեզուների ամբիոնում կազմակերպված են համապատասխան դասընթացներ (տե՛ս ժամանակացույցը):

Համալսարանում օտար լեզվով (անգլերեն) կարող են դասավանդել միայն այն դասախոսները, ովքեր ունեն համապատասխան արտոնագիր՝ տրված ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան հանձնաժողովի կողմից:

Համալսարանի բոլոր կրթական ծրագրերի դասավանդումը, բացի մայրենի լեզվից, իրականացվում է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Համալսարանի ուսանողության առնվան 30%-ի ուսուցումըկատարվումէայդ լեզուներով:

Համալսարանը կազմակերպում է հրավերքային դասընթացներ, որի շրջանակում հրավիրված օտարերկրյա հայտնի մասնագետները, գիտնականները դասախոսություններ են կարդում օտար լեզուներով(տե՛ս վեբ-կայքը. http://www.ysmu.am/am/international-arm/visiting-professors-arm):

Համալսարանի դասախոսական անձնակազմը առաջատար արտասահմանյան համալսարաններում և կլինիկաներում պարբերաբար մասնակցում է կոնգրեսների, կոնֆերանսների, սեմինարների, վարժանքների և ամառային դպրոցների:

Համալսարանի գրադարանում առկա է օտար լեզուներով ժամանակակից մասնագիտական և գիտական գրականություն: Օտար լեզվով գրականություն կարելի ձեռք բերել նաև առցանց տարբերակով: Համալսարանը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն է ընձեռնել անվճար օգտվելու UpToDate տվյալների էլեկտրոնային շտեմարանից և այլ ծրագրերից (տե՛ս վեբ-կայքը.http://www.ysmu.am/en/information/online-resources):

Համալսարանի գիտաբժշկական«The New Armenian Medical Journal» ամսագիրըանգլերեն լեզվով է: «Բժշկություն, գիտություն և կրթություն» «Ապագա բժիշկ» և ուսանողական խորհրդարանի «Մեդիկուս» ամսագրերը տպագրում են հոդվածներ անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Լավագույն փորձի օրինակներ

1. Համալսարանը բարձրագույն բժշկական կրթության և առողջապահության բնագավառներում համագործակցության սերտ կապեր է հաստատել տարբեր երկրների բժշկական համալսարանների, առողջապահական և միջազգային կազմակերպությունների հետ:
2. Օտարերկրյա համալսարանների և առողջապահական կազմակերպություն-ների հետ կնքված բազմաթիվ փոխանակային ծրագրերի շնորհիվ համալսարանի ուսանողները և կլինիկական օրդինատորները կարճաժամկետ պրակտիկա են անցնում արտերկրյա առաջատար կլինիկաներում և բժշկական հաստատություններում:

3. Համալսարանում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ուսանողները և դասախոսները կատարելագործեն օտար լեզուների իմացության իրենց մակարդակը:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Համալսարանում դեռևս չկան արտաքին կապերի արդյունավետության և միջազգայնացման մակարդակի գնահատման հստակ չափանիշներ:
2. Համալսարանի կրթական ծրագրերում օտար լեզուների ուսուցմանը հատկացված ժամաքանակը բավարար չէ լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար:

Չ Ա Փ Ա Ն Ի Շ 10

Որակի ներքին ապահովման համակարգը

ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Հավակնությունները:*Համալսարանը ձգտում է ներդնել որոշակի մշակույթ, ունենալ որակի ապահովման համալսարանական համակարգ, որը միտված կլինի գնահատելով համալսարանական ստորաբաժանումների գործունեությունը, վեր հանել այն խնդիրները, որոնց լուծումը կնպաստի համալսարանում առկա գործընթացների և գործող համակարգերի որակի բարձրացմանը, համալսարանի կայուն զարգացմանը և միջազգային ճանաչմանը (տե՛ս համալսարանի 2006-2011թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 12, 13):*

Չափորոշիչ ա. Մուհն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Համալսարանի որակի ապահովման համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին նշված է համալսարանի ռազմավարական ծրագրում

- ապահովել ուսուցման որակի գնահատման ներհամալսարանական համակարգի համակարգի մշակումը,
- համապատասխանեցնել համալսարանի ուսուցման որակի գնահատման և արժևորման համակարգը Եվրոպական և միջազգային չափանիշներին,

- մշակել և ներդնել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներհամալսարանական համակարգ՝ ըստ բարձրագույն կրթության որակի արժևորման եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշների,
- նպաստել համալսարանի և նրա ստորաբաժանումների լիարժեք ներգրավմանը Բոլոնիայի բարեփոխումներում, ստեղծել Բոլոնիայի գործընթացի համակարգման համալսարանական կառույց, մշակել և իրականացնել համապատասխան գործողությունների հնգամյա ծրագիր (տե՛ս համալսարանի 2006-2010թթ. ռազմավարական ծրագիրը, էջ 12, 13, 26, կցվում է):

Մինչև 2006թ. ԵՊԲՀ–ն չի ունեցել իր ստորաբաժանումների գործունեությունը գնահատող կառույց: Սակայն 2005թ, երբ ՀՀ-ն ստորագրեց Բոլոնյան համաձայնագիրը, ընդունվեց ՀՀ բարձրագույն կրթության մասին օրենքը, անհրաժեշտություն առաջացավ ՀՀ բուհերում ներդնել եվրոպական կրթության որակի գնահատման համակարգ: ՈՒստի 2006թ-ին համալսարանում ստեղծվեց բարեփոխումների և ինտեգրացիայի բաժինը և որը ղեկավարում էր այդ աշխատանքները համակարգող պրոռեկտորը (տե՛ս ռեկտորի հրամանը):

Բաժնի հիմնական նպատակն էր ուսումնասիրել Եվրոպական և ամերիկյան բժշկական դպրոցների փորձը և մշակել առաջարկություններ՝ կրթական պրոցեսում բոլոնյան համակարգի պահանջներից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Բաժինը զբաղվում էր նաև կրթության որակի խնդիրներով, որը սակայն կանոնակարգված բնույթ չէր կրում: Համագործակցելով ֆակուլտետային ցիկլային մեթոդական հանձնաժողովների հետ, բաժնի կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը, կատարվել է դրանց հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացիա, մշակվել և ներդրվել է թեստային համակարգը, մշակվել է ուսանողների մասնագիտական գիտելիքների գնահատման կարգ և այլն: Սակայն բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի քաղաքականությունը և ռազմավարությունը բավարար հիմքեր չէին ապահովում որակի գնահատման և ապահովման գործընթացներ իրականացնելու համար: Որակի ապահովման աշխատանքները կազմակերպելու համար բավարար չէին նաև մարդկային և նյութական ռեսուրսները:

2011թ համալսարանում ստեղծվեց որակի գնահատման և ապահովման բաժինը և ներդրվեց որակի գնահատման և ապահովման համակարգը (տե՛ս ռեկտորի հրամանը նոր բաժին ստեղծելու վերաբերյալ):

Կրթության որակի գնահատման և ապահովման բաժնի, ինչպես նաև ֆակուլտետային համապատասխան հանձնաժողովների կազմում հիմնականում ընդգրկվեցին որակի ապահովման վերաբերյալ տարբեր թրեյնինգներ անցած աշխատակիցներ:

Բաժնի ստեղծումից հետո մշակվեցին որակի գնահատման և ապահովման կենտրոնի քաղաքականությունը, ռազմավարությունը, համալսարանի տարբեր ոլորտների գործունեության որակը գնահատող կանոնակարգեր և ընթացակարգեր: Օրինակ՝ մշակվել են ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի գնահատման ընթացակարգը, կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման ընթացակարգը, ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգը, ինքնագնահատման զեկույցի պատրաստման ընթացակարգը, դասախոսների որակավորման կարգը և այլն (տե՛ս որակի բաժնի քաղաքականությունը, ռազմավարությունը, ուսումնական ռեսուրսների և խորհրդատվական ծառայությունների որակի գնահատման գործիքակազմը՝ ԳԱՑը): Մշակված և կազմված հարցաթերթերով քննարկվել են ֆակուլտետային հանձնա-ժողովներում, որից հետո կատարվել են հարցումներ, որոնց արդյունքները տեղադրվել են համալսարանի կայքի համապատասխան էջում (տե՛ս համալսարանի կայքի որակի բաժնի էջը): Մշակման գործընթացում է կրթության որակի գնահատման և ապահովման մեթոդական ձեռնարկը (տե՛ս ձեռնարկի մշակումները):

Չափորոշիչ բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2006-2011 թթ համալսարանում գործել է բարեփոխումների և ինտեգրացիայի բաժինը (2 աշխատող), որի աշխատանքները համակարգել է բարեփոխումների և ինտեգրացիայի գծով պրոռեկտորը (տե՛ս հրամանները): Համալսարանում բացի վերը

նշված բաժնի երկու աշխատակիցներից և այդ բաժնի աշխատանքները համակարգող պրոռեկտորից, չէին գործում ֆակուլտետային և այլ ստորաբաժանումների որակի գնահատման և ապահովման կառույցներ, ինչը անհնար էր դարձնում որակի ապահովման ամբողջական և համակարգված աշխատանքի կազմակերպումը:

ՈՒստի 2011թ. մայիսին ստեղծվեցին «Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնը», «Համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման մշտական հանձնաժողովը» և ֆակուլտետային հանձնաժողովները (տե՛ս հրամանները): Այսօր կենտրոնում աշխատում են 5 հաստիքային մասնագետներ: Երեք ֆակուլտետային հանձնաժողովներում ընդգրկված են հինգ, իսկ կենտրոնական մշտական հանձնաժողովում՝ 11 անդամ (տե՛ս հրամանները և հանձնաժողովի անդամների ինքնակենսագրությունները): Համալսարանի որակի բաժնի և որակի հանձնաժողովների անդամները մասնակցել են Tempus-ի PICQA և DIUSAS ծրագրերին, որոնց շրջանակներում համալսարանի 9 աշխատակիցներ վերապատրաստվել են (որակի գծով) Եվրոպայի տարբեր քաղաքներում:

Համալսարանում կենտրոնի աշխատանքների կազմակերպման համար համալսարանի կենտրոնական մասնաշենքում առանձնացվել են 2 սենյակներ, որոնք վերանորոգվել և ամբողջապես կահավորվել են: Մարդկային (վերապատրաստված մասնագետներ) և նյութական ռեսուրսներով կենտրոնի ապահովվածության արդյունքում մշակվեց որակի ապահովման կարճաժամկետ ռազմավարական ծրագիրը և առկա են դրա չափելի արդյունքները (տե՛ս կենտրոնի ռազմավարական ծրագիրը և կատարողականի վերլուծությունը):

Չափորոշիչ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

2006-2010թթ ժամանակահատվածում արտաքին շահակիցներն ընդհանրապես ընդգրկված չեն եղել որակի ապահովման համակարգում, իսկ ներքին շահակիցների ընդգրկվածությունը կրել է ոչ սիստեմատիկ բնույթ: Այդ տարիներին կազմակերպվել են ամենամյա հանդիպումներ շրջանավարտների և ՀՀ շրջանների գործատուների մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվել են աշխատաշուկայի պահանջները, գործատուների բավարարվածությունը ԵՊԲՀ շրջանավարտներով և այլն:

2011թ-ին ստեղծված Որակի ապահովման բաժնի քաղաքականության մեջ հստակ կարևորել է շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում, համաձայն որի անհրաժեշտ է ապահովել որակի ներքին գնահատման գործընթացում ուսանողների, շրջանավարտների և գործատուների մասնակցությունը, կառավարման տարբեր էտապներում և գնահատել նրանց բավարարվածությունը: 2011թ-ից համալսարանի ինչպես կրթության որակի գնահատման և ապահովման մշտական հանձնաժողովում, այնպես էլ ֆակուլտետային հանձնաժողովներում ընդգրկված են ինչպես դասախոսներ, այնպես էլ ոլորտի մասնագետներ և ուսանողներ (տե՛ս հանձնաժողովների կազմերը): Կրթության որակի հանձնաժողովների կողմից կազմակերպված հանդիպումներին, հարցաթերթային հարցումներին մասնակցում են ինչպես ներքին (դասախոսներ, ուսանողներ), այնպես էլ արտաքին շահակիցները (կլինիկական օրդինատորներ, հիվանդանոցների բժիշկներ, բաժանմունքի վարիչներ և այլն): Օրինակ՝ շահակիցների շրջանում անցյալ տարվա ընթացքում 2 անգամ անցկացվել են հարցումներ՝ ուղղված ԵՊԲՀ-ում գործող ուսումնական համակարգի, ուսումնական ծրագրերի առանձին կոմպոնենտների, գիտելիքների գնահատման համակարգի, դասախոսների որակավորման բարձրացման ընթացակարգերի արդյունավետության գնահատմանը (տե՛ս անցկացված հարցումների վերլուծությունը):

Չափորոշիչ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Համալսարանի բարեփոխումների և ինտեգրացիայի բաժնի աշխատանքի արդյունավետության վերլուծումը կատարվել է միայն մեկ անգամ՝ 2010թ-ի վերջին, 2011թ-ին ստեղծված որակի ապահովման համակարգի աշխատանքի արդյունավետության գնահատումը կատարվել է այդ համակարգի ներդրումից մեկ տարի հետո: 2011թ. մշակվեցին որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը, աշխատանքային պլանները, բաշխվեցին պատասխանատուների պարտակա-նությունները և գործառույթները, կազմվեց բաժնի ներքին օրգանոգրամման: Համապատասխան բաժնի և հանձնաժողովների աշխատակիցները վերապատրաստ-վեցին հանրապետությունում և արտասահմանում կազմակերպված

դասընթացներում:

Մշակվեցին ուսանողների գիտելիքների գնահատման, դասախոսական կազմի որակի ապահովման, կրթական ռեսուրսներով և օժանդակ ծառայություններով ապահովման, ինֆորմացիոն համակարգերի արդյունավետության պահպանման, տեղեկատվության թափանցիկության ապահովմանգործիքակազմերը և ընթացակարգերը: Աշխատանքներ են տարվել աշխատաշուկայի և շրջանավարտների հետ՝ հետադարձ կապն ապահովելու և նրանց որակի ապահովման գործընթացներում ընդգրկելու ուղղությամբ: Մասնավորապես. մշակվել են ուսանողների գնահատման համակարգը գնահատող հարցաշարեր, որոնց միջոցով գնահատվել է ներկայումս գործող համակարգը, ստացվել են առաջարկներ գնահատման համակարգում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ: Անցկացվել են հարցումներ գործատուների, դասախոսների և կլինիկական օրդինատորների շրջանակներում՝ ուղղված ԵՊԲՀ-ում գործող ուսումնական համակարգի, ուսումնական ծրագրերի, առանձին կոմպոնենտների, գիտելիքների գնահատման համակարգի, դասախոսների որակավորման բարձրացման ընթացակարգերի արդյունավետության գնահատմանը (տե՛ս հարցումների վերլուծությունը):

Մշակվել են ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ, ինչը թույլ է տվել պարզել ինչպես առկա ռեսուրսների համապատասխանությունը կրթական ծրագրերի պահանջներին, այնպես էլ օժանդակ, խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունն ու այդ ոլորտում առկա խնդիրները: Վերը նշված նպատակներով մշակվել և այժմ ներդրվում է ուսանողների նույնականացման քարտային համակարգը, ինչը թույլ կտա ուսումնասիրել ուսումնաօժանդակ ծառայությունների պիտանելիությունն ու արդյունավետությունը: Մշակվել են դասախոսական կազմի որակի գնահատման չափորոշիչներ և գործիքակազմ, որոնք կիրառվում են դասախոսների մրցույթային կարգով վերընտրության և ընդունելության ընթացակարգերի համաձայն:

Որակի ապահովման համակարգի տվյալների բազա ստեղծելու և բուհում առկա բոլոր գործընթացները քանակապես բնութագրող տվյալներին մշտապես տիրապետելու նպատակով կրթության որակի գնահատման և ապահովման բաժնի

կողմից մշակվել է բուհի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմ, որտեղ ընդգրկված են ինչպես մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները, այնպես էլ ուսանողների տեղաշարժերը բնութագրող ցուցանիշներ (տե՛ս բուհի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների՝ԳԱՑ-ի լրակազմը):

ԵՊԲՀ կրթության որակի գնահատման ապահովման կենտրոնի կարճաժամկետ ռազմավարական պլանը կարելի է համարել կատարված, առանձին կետերին ուղղված գործընթացները դեռևս գտնվում են ընթացքի մեջ և նրանց ավարտը նախատեսվում է հաջորդ տարվա ընթացքում:

Որակի գնահատման և ապահովման կենտրոնի երկարաժամկետ ռազմավարական ծրագրում նախատեսված է որակի ապահովման համակարգի աշխատանքների արդյունավետության ամենամյա վերլուծություն և մշակված են համապատասխան չափորոշիչները: Համալսարանում տարեկան մեկ անգամ անցկացվելիք ինքնագնահատման ժամանակ կմշակվեն որակի ապահովման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումների պլան (տե՛ս կենտրոնի ռազմավարությունը):

ԲՈՒՀ–ի կողմից այսօր կատարվող ինքնավերլուծությունը նույնպես կնպաստի համալսարանի որակի ապահովման համակարգի աշխատանքների բարելավմանը:

Չափորոշիչ ե.Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Մինչև 2010թ-ը արտաքին գնահատման համար բավարար հիմքեր չեն ստեղծվել, սակայն, առաջին անգամ համալսարանում կատարվող ինքնավերլուծությունը կստեղծի այդ հնարավորությունը: Այդ ինքնավերլուծության զեկույցը պատրաստելու համար ռեկտորի հրամանով ստեղծվել է համապատասխան հանձնաժողով (տե՛ս հրամանը): 2011թ-ին ստեղծված որակի գնահատման և ապահովման կենտրոնի ռազմավարության մեջ առանձին կետով նշված է արտաքին գնահատման համար բավարար հիմքեր ապահովելու մասին (տե՛ս կենտրոնի ռազմավարությունը): Ռազմավարական ծրագրում պլանավորված տարեկան հաշվետվությունները և ինքնավերլուծությունները հիմք կարող են լինել արտաքին գնահատման փորձագետների համար: Այսօր համալսարանի ստորաբաժանումների աշխատանքը

կանոնակարգող վերամշակված ընթացակարգում առանձին կետով նշված է տարեկան ինքնավերլուծության անհրաժեշտությունը (տե՛ս ուսումնամեթոդական վարչության նոր կանոնակարգերը):

Չափորոշիչ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակի ապահովման կենտրոնի քաղաքականության մեջ նշվում է համալսարանի գործունեության և որակի ապահովման գործընթացների թափանցիկությունն ապահովելու անհրաժեշտությունը և կարևորությունը: Այդ խնդիրներին համապատասխան համալսարանի պաշտոնական կայքում համալսարանի որակի գնահատման և ապահովման կենտրոնն ունի առանձին էջ, որտեղ զետեղված են կենտրոնի քաղաքակարությունը և ռազմավարությունը, կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները և հաշվետվությունների սեղմ տարբերակները: Պարբերաբար, տարին 2-3 անգամ, անցկացվում են հանդիպումներ ուսանողների և դասախոսական կազմի հետ, որտեղ քննարկվում են բաժնի կողմից կատարված աշխատանքները, առկա խնդիրները և դրանց լուծման հնարավոր տարբերակները (տե՛ս որակի ապահովման կենտրոնի քաղաքականությունը և համալսարանի կայքի համապատասխան էջը):

Լավ փորձի օրինակներ

1. Ռեկտորի կողմից հաստատվել են որակի գնահատման և ապահովման համալսարանական և ֆակուլտետային հանձնաժողովների կազմը:
2. Առկա են որակի ապահովման համար անհրաժեշտ բավարար շենքային պայմաններ, նյութական և մարդկային ռեսուրսներ:
3. Առկա է բուհի ղեկավարության շահագրգռվածությունը ներքին և արտաքին շահակիցների շրջանում որակի մշակույթի ձևավորման հարցում:
4. Կենտրոնի աշխատակիցները Tempus PICQA, DIUSAS, ARQATA ծրագրերի շրջանակներում անցել են մի շարք վերապատրաստումներ ինչպես ՀՀ-ում,

այնպես էլ արտերկրում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում:

Ոչ այնքան լավ փորձի օրինակներ

1. Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովների անդամների փորձի պակասը:
2. Ներքին և արտաքին շահակիցների շրջանում որակի մշակույթի վերա-բերյալ ինֆորմացիայի պակասը:
3. Ոչ բավարար թվով ուսանողների ներգրվվածությունն այս գործընթացում:
4. Որակի առանձին բաղադրիչների վերաբերյալ որակի բաժնի կողմից անցկացվող ուսումնասիրությունների և դրանց արդյունքների վերլուծության վերաբերյալ ներքին շահակիցների ոչ վստահ (թերհավատ) վերաբերմունքը: